



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԳԵՈՐԳ ՄԱԴՈՅԵԱՆ

ԿՐԻՂՈՐ ԱՆԱԻԱՐՁԵՑԻՆ
ՇԱՐԱԿԱՆԱԴԻՐ



ԵՐԵՎԱՆ-2001

Գ. ՄԱՂՈՅԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՆԱԻԱՐՁԵՑԻՆ
ՇԱՐԱԿԱՆԱԳԻՐ

Նուիրում է Հայոց դարձի 1700-ամեակին

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ա. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԺԳ-ԺԴ
ԴԱՐԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ

Գիրքը հրատարակուել է
ԳԱՆՈՒՄՏ ԳԻՒԼԲԷՆԿԵԱՆ
հիմնարկութեան հովանաւորութեամբ

Գ 885 ւ Գ. Ա. Մաղոյեան, Գրիգոր Անաւարզեցիին շարականագիր/
Երեւան, Երեւանի համալս. հրատ., 2001, 176 էջ:

Գրքում փորձ է արւում հանգամանօրէն քննարկելու միջնադարի նշանաւոր գործիչ Գրիգոր Անաւարզեցու շարականները, պարզելու նրա տեղն ու դերը հայ շարականագրութեան մէջ, նոր հայեացքով լուսաբանելու ապրած դարաշրջանի, կեանքի ու գործունէութեան ինչ-ինչ կողմերը: Գիտական շրջանառութեան մէջ են դրւում նրա մի շարք շարականներ:

Նախատեսւում է մասնագետների, ուսանողների համար:

Մ 4702080102 2001
704 (02) 01

ԳՄԴ 83.3 Հ I

Փոքր Ասիա թերակղզու հարաւում, Միջերկրական ծովի հիւսիս-արեւելեան ափի երկայնքով, փռուած է Կիլիկիան, նրախտային մի երկիր. որ իր դիրքի եւ բարեբերութեան պատճառով միշտ եղել է ասպատակիչների եւ հարստահարիչների նպատակակէտ: Յատկանշական է, որ Կիլիկիան առաջին անգամ յիշատակուում է իր հնագոյն գաութիւններից մէկի՝ Ատրեստանի թագաւոր Սալմանասար Երրորդի արձանագրութեան մէջ՝

Բազմաթիւ անանդութիւններ եւ պատմութիւններ են պահպանուել այս չնաշխարհիկ երկրի վերաբերեալ: Համաձայն յունական դիցաբանութեան Ագեմովրի որդի Կիլիկը (Կիլիկը) հաստատուեց մի քարքարոտ երկրում, եւ նրա անունով երկիրը կոչուեց Կիլիկիա՝: Անունը ստուգաբանում են նաեւ հրէական «խելիմ» կամ «խալիկ» եւ յունական «կալիոս» ու «կալիկա» բառերով, որ նոյն իմաստն ունեն՝ «քար, քարքարոտ»:

Սակայն Կիլիկիան լոկ քարքարոտ երկիր չէ: Բնական այդպիսի պայմաններով օժտուած է միայն երկրի արեւմուտքը՝ Քարոտ Կիլիկիան: Արեւելեան մասում արգաւանդ դաշտեր են, որ եւ անուանում են Դաշտային Կիլիկիա: Իսկ երկրի հիւսիս-արեւելեան մասը կոչուում է Լեռնային Կիլիկիա, որ Դետոնդ Ալիշանը Գահ Կիլիկիոյ բառակապակցութեամբ է բնորոշել: Հայերը հաստատուել են Կիլիկիայում անյիշելի ժամանակներից եւ միջին դարերում ասորիների, յայների, հրէաների ու արաբների հետ զարգացնում էին Կիլիկիայի տնտեսութիւնն ու մշակոյթը: Բայց եթէ նախնական շրջանում յիշուած ժողովուրդներից ոչ մէկը բացարձակ մեծամասնութիւն չէր կազմում, ժԱ դարից սկսած, Մեծ Հայքից արտագաղթի հետեւանքով, հայ բնակչութեան թիւը սրընթաց աճեց: Արդէն ժԲ

դարում Կիլիկիայի հիմնական բնակչությունը հայերն էին. որ օրաուր ատելի էին ամրապնդում իրենց հասարակական դիրքը: Եւ հէնց այդ ժամանակաշրջանում Կիլիկիայի հայ իշխաններից Ռուբէն (1080-1095) ստեղծեց անկախ իշխանութիւն, որ գործառեց մինչեւ 1198 թականը⁹: Իսկ 1198 թ. յունուարի 6-ին Լեւոն Բ Ռուբինեանը թագաւոր օծուեց, եւ Կիլիկիան դարձաւ Հայկական թագաւորութիւն¹⁰: Թագաւորից յետոյ Կիլիկիայում էր նստում նաեւ հայ ժողովրդի հոգեւոր առաջնորդը (1065 թականից սկսած): Դիշու է՝ սկզբում կաթողիկոսարանը յաճախակի տեղափոխուում էր, բայց ատելի ուշ՝ 1147-ին, բաւականին երկար ժամանակով (մինչեւ 1292 թականը) կաթողիկոսները հաստատուեցին Հռոմկլա դղեակում. որից յետոյ (1293-ից մինչեւ 1441 թ.) կաթողիկոսանիստ դարձաւ Սիսը¹¹, որ 1173-ից Կիլիկիայի մայրաքաղաքն էր¹²: Լեւոն Բ, վախճանուելուց առաջ թագաժառանգ նշանակեց իր դստերը՝ Զաբէլին, որը վերջ ի վերջոյ ամուսնացաւ Կոստանդին Պալի որդի Հեթումի հետ (1226թ.). եւ իշխանութեան գլուխ անցան Հեթումեանները, որ տիրելու էին մինչեւ 1375 թականը:

Ինչպէս իւրաքանչիւր պետութիւն, Կիլիկեան Հայաստանը եւս ունեցել է իր աստեղային եւ անկումային ժամերը: Անխուսափելի էին նաեւ ճգնաժամերը: Իբրեւ ճգնաժամային հարկ է յիշել ԺԳ-ԺԴ դարերի սահմանագիծը, երբ գահին բարձրանալու արժանի ժառանգորդ չկար: Չկար մէկը, որ ըստ արժանոյն շարունակէր նախնիների գործը: Գա պարզորոշ երեւում է նրանից, որ դարասկզբին, կարճ միջոցում, հերթով իրար էին փոխարինում կէս կրօնաւոր-կէս աշխարհական թագաւորները:

Լեւոն Գ վախճանուելուց յետոյ գահ բարձրացաւ Հեթում Բ (1289թ.): Նրա իշխանութեան երրորդ տարում եգիպտական մամլուքները գրաւեցին կաթողիկոսանիստ Հռոմկլան, գերեվարեցին հայրապետին, ինչպէսեւ իրենց հետ տարան կաթողիկոսարանում պահուող մասունքները, որոնցից ամենակարեւորը «Գրիգոր Լուսաւորչի աջն» էր: Այս մասին Սիսական նահանգի արքեպիսկոպոս Ստեփանոս Օրբէլեանն ասում է. «Եւ ամենայն սրբութիւնքն կորեան անհետ եւ անգիտ. եւ բնաւ ո՛չ երեւեցան թէ եւ բազում անգամ յոյգ եղել ի թագաւորէն Հեթմոյ»¹³: Սակայն Եգիպտոսի սուլթան Մելիք-Աշրաֆը շուտով վերադարձրեց մասունքները: Ինչպէս յայտնի

է. թագաւորութիւնը ժառանգելուց ընդամենը հինգ տարի անց Հեթումը հրաժարուեց գահից եւ կրօնաւոր դարձաւ (մտաւ Գրազարկի վանքը եւ ստացաւ Յովհաննէս անունը. հետագայում կոտեսներ կրօնաւոր Յովհաննէսի խնդրանքով գրուած Գրիգոր Անուարզեցու շարականները):

Այնուհետեւ թագաւոր հռչակուեց Թորոսը, որ գահակալեց մէկ տարուց պակաս եւ նոյնպէս հեռացաւ աշխարհիկ կեանքից: 1295-ին կրկին գահ բարձրացաւ Հեթում Բ, բայց ոչ երկար ժամանակով: 1296-ին նա թագապահ նշանակեց միս եղբօրը՝ Սմբատին, եւ Թորոսի հետ մեկնեց Կոստանդնուպոլիս: Օգտուելով եղբայրների բացակայութիւնից՝ Սմբատն ինքն իրեն թագաւոր հռչակեց: Տարագրութեան մէջ գտնուող եղբայրներն ստիպուած էին շրջագայել՝ հարեւաններից օգնութիւն ստանալու յոյսով: Բայց ինչպէս գրում է իտալացի միսիոներ Կղեմէս Գալանոսը. «Թաքարքն փոխանակ օգնելոյ, մատնեցին զերկոսին ի ձեռս Սմբատայ՝ երրորդ եղբօրն: Ուստի սա եսպան զԹորոսս եւ կուրացոյց յաչաց զՀեթում»¹⁴ (քիչ ուշ Հեթումի տեսողութիւնը վերականգնուեց-Գ. Մ.): Եւ չնայեա՞ծ թում էր, թէ Սմբատը գահը վերջնականօրէն վերցնելու է իր ձեռքը. դա տեղի չունեցաւ: Սմբատը «հնարիւ ըմբռնեալ ի չորրորդ եղբօրէն. որ Կոստանտ կոչիւր, հարկեալ եղել ի բանդ» (1298թ.)¹⁵: Իշխանութիւնն անցաւ յաղթանակած եղբօր ձեռքը, սակայն Կոստանդին Ա եւս երկար չթագաւորեց. 1299-ին գահակալը վերստին Հեթում Երկրորդն էր, որ 1301-ին վերջնականապէս վանք մտաւ, գահը թողնելով Թորոսի որդի Լեւոն Չորրորդին: Վերջինիս անչափահասութեան պատճառով, այնուամենայնիւ, կարեւոր գործերը վարում էր Հեթումը՝ համապատասխանաբար կոչուելով «թագաւորահայր»: Լեւոն Գ ամենաերկար գահակալողն էր այս ժամանակաշրջանում. նրա թագաւորութեան շրջանը եզրափակուում է Հեթումի կրտսեր եղբայր Օշինի գահ բարձրանալով: Մի շրջան. երբ եգիպտական մամլուքների դէմ միաւորուելու փոխարէն հայ նախարարներն ու իշխանները եղբայրասպան կոլուներ էին մղում:

Որպէս Կիլիկիայի պատմութեան մէջ կարեւոր պահ, մենք յիշեցինք Լեւոն Երկրորդի թագաւորութեան շրջանը: Երկիրը հասել էր բարգաւաճման բարձրագոյն աստիճանի: Միջազգային ճանաչումն առակայ էր: Ժամանել էին տարբեր երկրների դեսպաններ եւ ներկայացուցիչներ: Նոյնիսկ պատ-

վիրակութիւն կար Հռոմի պապի կողմից: Բայց ի տարբերութիւն միսնեթի, այս պատուիրակութիւնը յատուկ պարտաւորութիւն ունէր: «Պատուիրակութիւնը պապի անունից Լեւոն Բ-ից պահանջեց ընդունել Կաթողիկ եկեղեցու դաւանանքի մի շարք կէտերը եւ այդ մասին տալ պարտաւորագիր: Սա Կաթողիկ եկեղեցու կողմից կիլիկեցիներին ներկայացուող պահանջների սկիզբն էր»¹³:

Գրիգոր Անաւարզեցու կրտսեր ժամանակակից Վարդան Այգեկցին «Վասն անիրաւ քամբաստողաց եկեղեցոյս Հայաստանեայց» ճառի մէջ ուշադրութիւն է հրաւիրում մի փաստի վրայ. «Մեծ արհի՛ եպիսկոպոսն որ եկն՝ ի Հռոմայ եւ ձեռնադրեալ էաւ զԼեւոն թագաւորն Հայոց առաջի մեր, անապակ գինով արար զՊատարագն եւ ասաց ցմեզ թէ այս Հռոմայ սովորութիւն է, որ ի ձեռնադրումն թագաւորի անապակ գինով մատուցանենք զպատարագն»¹⁴: Մինչդէռ Պատարագի բաժակին ջուր խառնելը ունիթոռական կամ միութենական շարժման անկլինաքարերից էր, մի շարժում, ուր կրքերը գնալով աւելի ու աւելի էին բոլորքում: Վերոյնշեալ դէպքը «ունիթոռական». «միութենական» շարժման սկիզբն էր Կիլիկիայում:

Բ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

*Դայն դաւանէ գերորդորութիւնն,
Երեք անձինք եւ մի բնութիւն,
Ոչ միութեամբ ի խառնութիւն,
Ոչ բաժանմամբն յօտարութիւն»¹⁵:*

Եկեղեցիների միութեան կամ վերամիաւորման հարցը բազմադարեան արմատներ ունի: Այն ծագել է գրեթէ քրիստոնէութեան արշալոյսին եւ մինչեւ մեր օրերը եռանդագին քննարկումների առարկայ է:

Մեր թականութեան առաջին հարիւրամեակներում, քրիստոնէայ քոյր եկեղեցիները համագործակցութեան ու սերտ կապերի մէջ էին: Սուրբ գրքերի մեկնաբանութիւնը, անհասկանալի հատուածների բացատրութիւնը կատարում էին իրար հետ հաղորդակցուելով՝ խորհուրդների ու ժողովների ժամանակ: Դրա համար արեւելքից ու արեւմուտքից ժամա-

նում էին քրիստոնէայ եկեղեցու ականաւոր գործիչներն ու հայրերը, հաւաքում եւ քննում էին ամենայն ուշադրութեամբ իրենց յուզող խնդիրները: Այդ ժողովները կոչում էին Տիեզերական ժողովներ, յաճախ գումարում էին հռոմէական եւ բիզանդական կայսրերի նախաձեռնութեամբ, որոնք երբեմն ժողովների որոշումները՝ կանոնները, հաստատում էին որպէս պետական օրէնք¹⁶: Ի թիւս այլոց, Տիեզերական ժողովներին մասնակցում էին նաեւ Հայաստան աշխարհից գնացած պատուիրակները: Ներկայումս Տիեզերական ժողովների մասին մենք բաւականաչափ տեղեկութիւններ ունենք: «Կանոնագրքերում», ուր գրանցուած են ժողովների կանոնները, կան մասնակից հայրերի ցուցակները, համաձայն որոնց, ասենք, առաջին Տիեզերական ժողովին (Նիկիա, 325թ.) ներկայ են եղել Եւթալիոսն ու Եւթիոսը՝ Փոքր Հայքից, եւ Առիստագէսը, Արիստէսը, Եւտիքիանոսը, Հեղպիոսն ու Հերակլիոսը՝ Մեծ Հայքից¹⁷: Յաջորդ ժողովները, որոնց մասնակցել են հայ պատուիրակները, տեղի են ունեցել Կոստանդնուպոլսում (381թ.) եւ Եփեսոսում (431թ.):

Ասացինք, որ ժողովները գումարում էին դաւանաբանական խնդիրները լուծելու նպատակով: Օրինակ, Կոստանդնուպոլսի ժողովի հիմնական նպատակը գրանցուած է կանոնների սկզբում. «Յետ ոչ բազում ատուրց թագաւորելոյ մեծի թէոդոսի աստուածաւեր թագաւորի երեւեցաւ այր մի Մակեդոն անուն, որ հայիոյէր զՀոզին սուրբ, եւ ոչ ի Հաւր եւ յՈրդոյ էութենէ ասէր, այլ յատար եղութենէ, վասն որոյ ժողովին ի Կոստանդնուպոլսիս եպիսկոպոսք ՃԾ. դատապարտեցին զնա, հոգեմարտ անուանեցին եւ սահմանեցին բանս՝ զլուխս Գ»¹⁸:

Մինչ այժմ 21 Տիեզերական ժողով է գումարուել, սակայն մենք հպանցիկ անդրադարձանք միայն առաջին երեքին, որովհետեւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցին լոկ այս երեքն է ընդունում: Երեսուցն սկիզբ է առել 449 թուականից, ելք գումարուեց Եփեսոսի երկրորդ ժողովը: Դրա նպատակն իր պարզել, թէ քանի բնութիւն ունի Քրիստոսը. մի՞ միայն Աստուած, թէ երկու՝ Աստուած եւ մարդ: Եփեսոսի ժողովի եւ եկեղեցիների բաժանման պատճառների մասին, պատեհաւոր մանրամասնութեամբ կխօսենք Գրիգոր Անաւարզեցու՝ Լեւոն Մեծին նուիրուած շարականների կապակցութե-

ամբ: Իսկ այժմ միայն ասենք, որ չնայեամ ըստ Լուսինյան Հայ Առաքելական եկեղեցին Եփեսոսում հաստատում գաղափարների կողմն է, այնուամենայնիվ մեր եկեղեցին չի ընդունում այդ ժողովը: Եփեսոսի ժողովը չեն ընդունում նաև Կաթոլիկ եւ Օրթոդոքս եկեղեցիները: Վերջիններս, որպես չորրորդ Տիեզերական ժողով, ընդունում են 451-ին Քաղկեդոնում գումարում ժողովը, որին մասնակցած եւ կանոններն ընդունած եկեղեցիները յաճախ կոչում են Քաղկեդոնական եկեղեցիներ:

451-ի Տիեզերական ժողովում, ինչպես յայտնի է, հայ պատուիրակներ չկային, մեր նախնիներն այդ ժամանակ առաել կարելու խնդիրներ էին լուծում: Իսկ մասնակից եկեղեցիները որոշեցին, որ Քրիստոսը երկու բնութիւն ունի՝ Աստուած եւ մարդ: Որոշմանը դեմ կանգնեցին արեւելեան եկեղեցիների ներկայացուցիչները, որ պնդում են, թէ միայն մի բնութիւն ունի Փրկիչը՝ Աստուած: Ելնելով այս դաւանաբանական հիմքից՝ եկեղեցիները համապատասխանաբար անւանում են «միաբնակներ», եւ «երկաբնակներ»: 451 թուականից սրուեցին եկեղեցիների միջեւ եղած ծիսական տարբերութիւնները: Վարդան Այգեկցին հաղորդում է, թէ շուրջ 521թ. ծիսական ինչ-ինչ փոփոխութիւններ կատարել է Հռոմի Մարտինոս պապը: Մասնաւորապէս նա «խառնեաց գգորն ի պատարագն խաբանօք»¹⁹: Այնուհետեւ տարիների հետ ի յայտ եկան նոր մանրախնդրութիւններ, առաջացան նոր տարածայնութիւններ, եկեղեցիների կապը՝ միութիւնը, խզուեց, եւ արեւելեան ու արեւմտեան վարդապետներն սկսեցին միմեանց նկատմամբ անէծքներ եւ բանադրանքներ հրապարակել²⁰: Իրականում եկեղեցիների միութեան խզումը հետեւանք էր գերակայութեան նկրտումների, իսկ դաւանաբանական վեճերը՝ լոկ պատրուակ: Մինչդեռ հայ առաջադէմ եւ լայնախոհ գործիչները յուշում էին, որ Քրիստոսը ոչ թէ վեճերի ու գայթակորութիւնների վեմ պիտի լինի քոյր եկեղեցիների միջեւ, այլ՝ հաշտութեան ու համաձայնութեան անկիւնաքար:

Պէտք է յիշել, որ միութեան հիմնական սկզբունքը հետեւեալն է. «Պէտք ենք կատարել միասնաբար՝ ինչ որ մեր հաւատքը մեզ չի պարտադրէր կատարել անջատաբար»²¹: Կամ ինչպէս պէտք է ձեւակերպել Մ.Նալբանդեանը. «Խորհուրդ յայտնութեան Քրիստոսի չէր գատանել իւր հետեւողս,

կնքողս զդէմս նշանաւ խաչին. այլ մարբել զխիղճ մտաց ազգաց, թօթափել զգերութեան անուր»²²: Սա մի շրջահայեաց մօտեցում է, որ հարազատ է մեր օրերի Էկումենիկ շարժման ոգուն:

«Միաբնակութեան» ու «երկաբնակութեան» հակասութիւնը եկեղեցիների միջեւ սուր պայքարի կիզակետն էր: Բազմաթիւ էին վեճերն այս կապակցութեամբ, եւ իւրաքանչիւր կողմ ցանկանում էր ապացուցել իր տեսակետի ճշտութիւնը, հարազատութիւնը Աստուածաշնչին: Սակայն դա պայքարի արտաքին կողմն էր, ցուցադրական նպատակը: Իսկ բուն խնդրի բացայայտմանն է ծառայում Մ. Օրմանեանի խօսքը. «Երկու կողմերուն մէջ մղումս այս կատաղի հակառակութեան պատճառով իմանալու համար պէտք է գիտենալ, որ զլիսաւոր խնդիրը ոչ թէ պարզապէս աստուածաբանական վերացեալ կէտ մըն է, Քրիստոսի բնութեանց տեսական խնդիրը, այլ բուն նպատակը՝ կատարելապէս գործնական եւ գերազանցապէս թանձրագեալ կէտ մըն է, այսինքն են հայրապետական արժանատի փոխադարձ յարաբերութեանց եւ առաւելագոյն ազդեցութեան խնդիրը»²³:

Ուրեմն միութեան խնդիր ասելով պէտք է հասկանանք, որ բացի դաւանաբանական եւ ծիսական խնդիրներից, եկեղեցիները ձգտել են լուծել նաեւ գերակայութեան հարցերը: Եւ յոյն, եւ լատին եկեղեցական առաջնորդները հայ եկեղեցու սպասաւորներին առաջարկում էին իրենց դաւանաբանական տեսակետը, որն ընդունելու դէպքում հայ եկեղեցին պէտք է յայտնուէր նրանցից մէկնումէկի գերակայութեան ներքոյ:

Կարելու հարց է, թէ ինչու յատկապէս հայ եկեղեցին պիտի փոխէր իր արարողակարգը, ճանաչէր, ասենք, լատինների գերակայութիւնը, եւ ոչ հակառակը: Այս կապակցութեամբ պարզաբանումներ ունի Մ. Մուրատեանցը. «Հայք, իբրեւ դարբերով հարստահարումս ազգ, միշտ օգնութեան կարօտ էին. իսկ Յունաց եւ Լատինաց համար՝ օգնելու սկզբունքն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ տիրապետել Հայ Ազգի հոգւոյն եւ մարմնոյն, այսինքն քաղաքական ազատութեան հետ՝ բռնաբարել կրօնական ազատութիւնն եւս»²⁴:

Թէ Կաթոլիկ, թէ՛ Օրթոդոքս եկեղեցին, հայ ժողովրդի համար օրհասական պահերին, օգնութեան ձեռք մեկնելուց առաջ փորձում էին լուծել միութեան խնդիրը: Հանրայայտ է

նման դեպքերից մեկը, որ տեղի է ունեցել Ներսես Շնորհալու կաթողիկոսութեան օրօք. «12-րդ դարի վաթսունական բուսականներին, օգտուելով հայերի քաղաքական դժուարին կացութիւնից, բիզանդական կողմը վերստին, բայց առակ սրութեամբ հրապարակ բերեց միութեան խնդիրը՝ միտելով իրականացնել ձուլման իր վաղեմի նկրտումները Հայ եկեղեցու նկատմամբ. որ դարեր ի վեր իր մեջ կրում էր նաև ազգային ինքնուրոյնութիւնից զրկելու, նրանց քաղաքականապէս նուաճելու հեռահար, բայց սեւեռուն նպատակը»²¹: Բնական է նաև հայ հոգեւոր գործիչների ձգտումը՝ «կրօնադաւանաբանական հարցերը ժողովրդի քաղաքական կեանքի խնդիրներին ի սպաս դնելու որոշակի նպատակադրումը»²²: Պէտք է միշտ յիշել, որ սա պարտադրուած կեցուածք էր հայ եկեղեցականների համար, բայց թերեւս հոգեւոր գործիչները գտել էին ճիշտ ուղին: «Հայ եկեղեցին միշտ բարեմտութեամբ ընդունած է միաբանութեան առաջարկները, քանի անգամ որ իրեն ներկայացուցած են, բայց միշտ հեռացած չէ իւր ինքնուրոյն եւ առանձնայատուկ կացութեան դիրքէն»²³:

Այս խօսքերը յատկապէս կապուած են Կիլիկեան Հայաստանի արքունիքի եւ կաթողիկոսների գործունէութեան հետ: Միութեան խնդիրներով, բացի արդէն յիշուած Ներսես Շնորհալուց, ստիպուած էին զբաղուել նրա նախորդը՝ Գրիգորիս Պահլաւունին, յաջորդները՝ Գրիգոր Տղան, Յակոբ Կլայեցին... գրեթէ բոլոր կաթողիկոսները: Եւ դրա համար կաթողիկոսները խիստ կերպով քննադատուել են Արեւելեան Հայաստանի հոգեւորականների կողմից, որոնց ամենավառ ներկայացուցիչը, թերեւս, Ստեփանոս Օրբելեանն է: Նրա նախորդը՝ Գրիգոր Տուղեորդին, որ նոյնքան անհանդուրժող էր ու անզիջում, Կիլիկիայի արքունիք յղած նամակում յայտարարում էր. «Եւ այս յայտնի լիցի ձեզ եւ ամենայն աշխարհի, զի եղբարքս կատարեալ Հաղբաղ եւ Սանահին այօք, որ են յաշխարհի. գրեա թէ Ադուանք, Այրարատեանք, Տարօն. Անի եւ Կարս, Արշարունիք եւ այլք ճշմարտեալք հաւատովք անբաժանելի եւ անմեկնելի են ի միմեանց որպէս Պօղոս ի Պետրոս, եւ Վասպուրական ոչ դառնայ ի լուր այսպիսի խռովութեան»²⁴: Հիմայ, երեւի, կարելի է ասել, որ արեւելեան վարդապետները, հեռու լինելով քաղաքական սուր երկխօսութիւնների թատերաբեմից, լաւ չէին պատկերացնում իրավիճա-

կը. ուստի կարծր եւ անհանգիստ դիրք էին ընդունել: Միութեան խնդիրը հոգեւոր եւ քաղաքական գործիչները՝ հայերը մի կողմից, յոյները եւ լատինները փոփոխաբար՝ միւս, տարբեր կերպ էին հասկանում ու մեկնաբանում: Ըստ Մ. Օրմանեանի, Հայ եկեղեցին «...միաբանութիւն ըսելով, ուզեց եկեղեցիներու միջեւ ունենալ հոգեւորական հաղորդակցութիւն, փոխադարձ յարաբերութիւն, եւ իրարու դիրքին հանդէպ յարգանք... Դժբախտաբար Յունական եւ Լատինական եկեղեցիները այն համոզմամբ վարուեցան, թէ եկեղեցիներու միաբանութիւնը ուրիշ կերպով չկրնար իրականանալ, բայց եթէ ուրիշները իրենց եկեղեցոյն հնազանդեցնելով»²⁵:

Բաւականին երկար ժամանակ գիտնականները բացասական տեսակէտներ ունէին Կիլիկիայի թագաւորների եւ կաթողիկոսների վարած քաղաքականութեան վերաբերեալ, յատկապէս արեւմտեան քաղաքականութեան կապակցութեամբ. որի հիմնաքարը միութեանական շարժումն էր: Սակայն այժմ գնայով ատելի շատ գիտնականներ են գալիս այն եզրայանգման, որ սխալ է Կիլիկիայի իշխանաւորների քաղաքականութեան միակողմանի եւ պարզունակ վերլուծութեան հիման վրայ վերջիններիս քննադատելը: Նրանց վարած քաղաքականութիւնը շատ ատելի նրբին, ճկուն էր, քան առաջին հայեացքից կարելի է պատկերացնել: Այս առումով ուշագրաւ է Հր. Բարթիկեանի հետեւեալ դիտողութիւնը. «Ահա խուսանաւելու իրենց կարողութեան մէջ իր արտայայտութիւնը գտաւ Կիլիկիայի հայոց նրբին դիւանագիտութիւնը, որով կարողացան տասնեակ վտանգաւոր թշնամիների շրջապատում ամբողջ երեք դար պահպանել սեփական պետականութիւնը...»²⁶: Սակայն, որքան էլ ճկուն լինէր հայ կաթողիկոսների ու տեսաբանների «դիւանագիտութիւնը», այնուամենայնիւ, հնարաւոր չէր այդ ամենն իրագործել՝ մշապէս խուսանաւելով հակասութիւններից: Նման հակասութիւն նկատելի է Գրիգոր I: Անուարգեցու գործունէութեան, բնականաբար նաև մատենագրական ժառանգութեան մէջ: Կամովին, թէ ժամանակի պետական-քաղաքական գործիչների ազդեցութեան հետեւանքով, կարելու չէ, նա հարկադրուած է եղել, գոնէ երբեմն, հայ եկեղեցու դաւանած միաբնակութիւնն աղանդ համարել²⁷, էապէս նահանջելով իր դիրքերից:

Միութեան մասին խօսելիս անհնար է չյիշել Գրիգոր

**Գ. ԳՐԻԳՈՐ ԱՆԱՄԱՐՁԵՑՈՒ
ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՈՍ ՈՒՐՈՒԿՎԻԾ**

*Այսպէս ի հռչակասարանչ
աստուածագգեաց հայրապետիոյ
Սրբոյ Լուսատրչիոյ
պատշաճաւոր երեց որդիոյ,
Նախ զգործն առերերելով
'ի ապս զանուն հայրապետիոյ
Տեառն Գրիգոր Անաւարդոյ դիտապետիոյ...»³³*

Անաւարզեցուն: Այս կաթողիկոսը միջնադարի հայ իրակա-
նութեան ակնառու դէմքերից մէկն է: Ստորեւ կտեսնենք, որ
անգամ նրա քննադատներն էին ընդունում նրա մեծ անհատա-
կանութիւնը՝ հաշուի առնելով հետեւեալ համագամանքը: Գրի-
գոր Անաւարզեցուն մեղադրում են, իբր թէ նա համա-
ձայնութեան է եկել օտար եկեղեցիների հետ. նորամուտ ծե-
սերով ապականելու Հայ եկեղեցու արարողակարգը, երկու
բնութեամբ ճանաչելու Քրիստոսին, եւ այլն: Անհատականու-
թիւնից զուրկ մարդը դժուար թէ դիմէր նման քայլերի՝ պարզ
գիտակցելով դրանց հետեւանքները: Հաւանաբար ամենա-
ցաւալի հետեւանքն այն էր, որ լուրջ քննութեան չենթարկուեց
կաթողիկոսի գործունէութիւնը, շուտամնասիրուեց գրական
հարուստ ժառանգութիւնը:

Առ այսօր Անաւարզեցու կեանքին եւ գրական գործու-
նէութեանը քիչ թէ շատ անդրադարձել են Ղեւոնդ Ալիշանը,
Գրիգոր Սարգսեանը, Մահակ Ամատունին, Գրիգոր Յակոբե-
անը, Մայիս Աղալբեգեանը: Ինչպէս կտեսնենք հետագայում.
վերջիններիս անդրադարձերը մէկ-երկու էջ ծաւալ ունեն, յա-
րեւանցի են: Ալիշանը յատուկ քննութեան նպատակ չի էլ ունե-
ցել, այլ պարզապէս իր առջեւ խնդիր էր դրել տալ կաթողիկոսի
կեանքի եւ գործունէութեան ընդհանուր բնութագիրը: Քննու-
թեան է ենթարկուել նաեւ Անաւարզեցուն վերագրուող մի թուրք.
ուր դիտարկման նիւթ է հանդիսացել բացառապէս նամակի
լեզուն³²: Ըստ էութեան ուսումնասիրուած չեն կաթողիկոսի
դրուատներն ու ճառերը, որոնց մեծ մասը հասել է մինչեւ մեր
օրերը՝ ի տարբերութիւն շարականների, որ չնչին քանակու-
թեամբ են պահպանուել: Ահա այս հատուկեմտ շարականների
ուսումնասիրութեան վրայ հիմնուելով՝ հետագօտողները Անա-
ւարզեցուն համարել են «յետին» շարականագիր: Մենք
կձգտենք, քննելով կաթողիկոսի հրապարակուած ու նորա-
յայտ շարականները, ինչպէսեւ այլ նորայայտ փաստեր, վե-
րանայել այս հարցի կապակցութեամբ իշխող տեսակէտը:

Հայ միջնադարեան գրականութեան մէջ յաճախ ենք
ակնատես լինում չափածոյ թղթերի: Նմանատիպ մի թղթից է
բաղուած քառատողը, որ ներկայացրինք: Դրա հեղինակը՝
Կանչի ամրոցի իշխան Օշինը, իր նամակը գրել է մօտաւորա-
պէս 1293 թուականին, իսկ թէ ինչու «մօտաւորապէս» կփոր-
ձենք բացատրել հետագայում: Կանչ դղեակը, ինչպէս գիտենք,
Կիլիկիայի կարեւոր ամրոցներից մէկն է, կառուցուած Կանչ
գիւղի հարեւանութեամբ, որ իշխի մերձակայ բարձունքներին³⁴:
Թերեւս այստեղ է Օշին իշխանը՝ Հեթում պատմիչի եղբայր
(ծն. անյայտ-1307)³⁵, գրել իր նամակը, որով շնորհաւորում է
Գրիգոր Անաւարզեցուն՝ կաթողիկոս ընտրուելու կապակ-
ցութեամբ:

Ամենայն Հայոց 73-րդ կաթողիկոսը՝ Գրիգոր Անաւար-
զեցին, հայ գրականութեան մէջ բազմիցս յիշատակուած, իր
հակասական խառնուածքի ու գործունէութեան բերումով
տարածուած բնութագրումներ ու գնահատականներ ստացած,
այնուամենայնիւ ստուերի մէջ մնացած, մշուշապատ կենսագ-
րութիւն ունեցող մի գործիչ է: Նրան առնչուող հնագոյն յիշա-
տակութիւններից մէկը հենց Օշին իշխանի նամակն է: Բաւա-
կան մեծ վարպետութեամբ գրուած այս բանաստեղծութիւնը
ամբողջութեամբ բաղկացած է զովեստներից ու հիացումնքի
խօսքերից, եւ Գրիգոր Անաւարզեցին ներկայանում է որպէս
սուրբ. «լոյսի օսհ, լուսաւորող արփի, հրեշտակներին գերա-
զանցող» մի անձնաւորութիւն.

ՅՕշնէ հնազանդ որսրոյ ընկալ գողջոյն՝ նդ նմանիդ,

*Եւ համբոյր տիրաշոշափ եւ շնորհաբաշխ սրբոյ աջիդ,
Մանաւանդ բունն
հարեալ գերկնազնաց գարշապարիդ³⁶:*

Առանց վարանելու կարող ենք ասել, որ Օշին իշխանն ուղղակի երկրպագում է Անուարզեցուն:

Գրիգոր Անուարզեցու մասին դրուատանքով է խօսել նրա ամենամանրամանի ժամանակակիցներից մէկը՝ Յովհաննէս Պլուզ Երզնկացին. որ կլիկեան իր ճամփորդութեան ընթացքում կարողացել է մօտիկից ծանօթանալ նրան: Կլիկիայի հայ կեանքի երեւելիների խնդրանքով Երզնկացին հանդէս է եկել խրատական քարոզներով, եւ Անարզաբայի արքեպիսկոպոս Գրիգորը նոյնպիսի առաջարկութիւն է արել նշանաւոր գիտնական-վարդապետին: Պահպանուել է «Յոհաննէս վարդապետի ի բան մարգարէին Գաթի՝ Սքանչելի եղև գիտութիւն քոյ յիս, յԱնուարզայ խօսեցեալ, առ տէր Գրիգոր վարդապետ եւ եպիսկոպոս» քարոզը (ՄԱՄ, ձեռ. 2173): Ինչպէս ուսումնասիրողն է ասում, քարոզը, որի մէջ արծարծում է եկեղեցիների միութեան խնդիրը, Երզնկացին «կարդում է ժամանակի խոշորագոյն գիտնական-աստուածաբան, իր միարարական հակումներով յայտնի եւ Կլիկիայում մեծ ազդեցութիւն վայելող Գրիգոր Անուարզեցու պատուերով»³⁷: Էդ. Բաղդասարեանի ենթադրութեամբ իր «Խրատ հասարակաց»-ի համառօտ խմբագրութիւնը՝ «Խրատը կանոնականը», նոյնպէս կարող էր Պլուզը կազմած լինել Անուարզեցու խնդրանքով: Յայտնի է, որ վերոյիշեալ քարոզում Երզնկացին, չնայեա՞ծ հայեացքների տարբերութեանը, համակրանքով է խօսում Գրիգոր Անուարզեցու մասին:

Սակայն Անուարզեցուն առնչուող միջնադարեան ոչ բոլոր յիշատակութիւններն են այս ոգով գրուած: Մեծ մասամբ սառն եւ խիստ է նրա մէկ այլ ժամանակակցի՝ Սյունիքի արքեպիսկոպոս Ստեփանոս Օրբէլեանի³⁸ խօսքը, որ իր Պատմութեան մէջ հետեւեալ դժգոհութիւնն է յայտնում. «Եւ սակաւ առ սակաւ սկսաւ զամենայն աւանդութիւնս հոռոմոց եկեղեցոյն սպրդեալ մուծանել ի մերս եկեղեցի. եւ ի մերոյս ի բաց քեցել մի մի»³⁹: Բերենք եւս մի օրինակ. «Իսկ հայրապետն մեր Տէր Գրիգոր սխալեաց մեծապէս եւ ի բաց եկեաց ի ճմարտութենէն»⁴⁰:

Օշին իշխանի նամակից նկատելի էր, որ հեղինակը

անձամբ ճանաչել է նորընտիր կաթողիկոսին: Թէեւ Օրբէլեանն այդպիսի վկայութիւն չունի, կարող ենք եզրակացնել, որ նա նոյնպէս ծանօթ էր Գրիգոր Անուարզեցուն:

Հանրայայտ է, որ Գրիգոր Անուարզեցին ապրել է ստեղծագործել է Կլիկիայում, եւ, ի տարբերութիւն Օշինի, Օրբէլեանը գուցէ ուղղակի հնարատրութիւն չի ունեցել Անուարզեցուն ճանաչելու: Սակայն պէտք է ընդունել, որ չնայեա՞ծ աշխարհագրական զգալի հեռաւորութեանը, նրանք միմեանց հետ շփուելու հնարատրութիւն ունեցել են, երբ Օրբէլեանը Կլիկիա էր ժամանել եպիսկոպոս ձեռնադրուելու⁴¹: Բայց սա բնարար չէ համոզուած լինելու համար, թէ Գրիգոր Անուարզեցին եւ Ստեփանոս Օրբէլեանը իրար հանդիպել են: Ուստի ստիպուած ենք յիշելու, որ 1286-ին, երբ մահացել էր Յակոբ Ա Գիտնական կաթողիկոսը, թէ՛ առաջինը, թէ՛ վերջինը կաթողիկոսութեան թեկնածուներ էին եւ պէտք է նստած լինէին միեւնոյն դահլիճում, ժողովական սրբազան հայրերի առջեւ: Այս կապակցութեամբ Օրբէլեանը բոլորովին չի յիշում Գրիգոր Անուարզեցու անունը, իր մասին խօսելով երրորդ դէմքով. «Եւ բազում պատիւ եւ մեծամեծ փառս ընդունէր [Ստեփաննոս] ի քազաւորն Հայոց Լեւոնէ, որ եւ յոյով թախանձանս առնէր նմա մնալ անդէն եւ նստել յաթոռ կաթողիկոսութեան Հայոց: Եւ մինչ ոչ առնոյր յանձն՝ ապա արարեալ մեծ աշխարհաժողով եւ բազում ընտրութեամբ կացուցանեն կաթողիկոս Հայոց գտէր Կոստանդին»⁴²: Ահա այսպէս Ստեփանոս Օրբէլեանը հրաժարուեց կաթողիկոսութիւնից:

Սակայն Մ. Չամչեանցը, որ բացի Օրբէլեանից նաեւ այլ աղբիւրներ էր օգտագործել, նոր կաթողիկոսի ընտրութիւնը վերարտադրում է մի փոքր այլ կերպ. «Ապա ժողով արարեալ եպիսկոպոսօք եւ վարդապետօք՝ ջանացաւ Լեւոն հաւանեցուցանել զնոսա, զի ընտրեսցի կաթողիկոս Գրիգոր Անուարզեցի, որ մականուամբ Տուրք երիցանց եւ Երզնցօղ կոչիւր. բայց վանականը եւ առաջնորդը ընդդէմ կացին... Կամեցան ապա ընտրել ոմանք զՍտեփաննոս քահանայն՝ գորդին Տարսայիճայ. բայց հարք ժողովոյն ոչ հաճեցան ընդ այն. նա, ասեն, այր խրոխտ է՝ եւ երեւի լինել ինքնահաճ»⁴³: Ըստ այսմ ոչ թէ քազաւորն էր կողմ Օրբէլեանի թեկնածութեանը, այլ «ոմանք», եւ ոչ թէ նա ինքն է հրաժարուել կաթողիկոսութիւնից, այլ «հարք ժողովոյն ոչ կամեցան»: Ինչեւէ, մեզ համար տուեալ

դէպքում կարելոյ է, որ երկու հոգեւոր բարձրաստիճան գործիչները միմեանց ի մօտոյ ճանաչելու հնարաւորութիւն ունեցել են:

Կրկին վերադառնանք Ստեփանոս Օրբէլեանի Պատմութեանը: Այստեղ հեղինակը Անաւարզեցու մասին կարելոյ տեղեկութիւններ է հաղորդում: Մասնաւորապէս գրում է, թէ նա «Գիտէր եւ զլեզու եւ զպարութիւն լատին եւ յոյն ազգին»⁴⁴: Անաւարզեցու՝ լեզուների իմացութեան մասին Մ. Օրմանեանն արտայայտում էր ոչ թէ Օրբէլեանի, այլ Կղեմէս Գալանոսի խօսքերից ելնելով. «Բազում պատմութիւն սուրբ վկայից թարգմանեաց ի հռոմայեցոց, ի յունաց եւ յասորոց ի մերս»⁴⁵: Բնական է Օրմանեանի եզրայանգումը, թէ Անաւարզեցին, բացի յունարէնից եւ լատիներէնից տիրապետել է նաեւ ասորերէնին: Յատր սրտի չենք կարող պարզել, թէ Անաւարզեցին որտեղ է սովորել այս լեզուները: Ըստ Հր. Աճառեանի. «Մեծքարի վանքումն էր սովորել»⁴⁶: Հարկ է նշել, որ Մեծքար կամ Մեծ այր վանքի⁴⁷ հետ սերտօրէն կապուած է Անաւարզեցու ճակատագիրը: Գրեթէ բոլոր կենսագիրները նշում են, որ մինչեւ Անաւարզեցի կոչուելը, Գրիգորը Մեծքարեցի կոչումն է կրել⁴⁸: Բայց եթէ Աճառեանը դա կապում էր ուսումնառութեան տարիների հետ, ապա Այիշանը ուրիշ բացատրութիւն է տալիս. «...այլ գառաջինն կոչէր Մեծքարեցի. առաջնորդ գոյով այնր թեմի կամ ուխտի»⁴⁹: Միգուցէ կարելի է երկու գիտնականների կարծիքները չհակադրել, բացառուած չհամարելով, որ Անաւարզեցին կարող էր սկզբում սովորել, իսկ յետոյ նաեւ ղեկավարել Մեծքարի ուխտը:

Ուշադրութիւն դարձնենք Ստեփանոս Օրբէլեանի մէկ այլ մտքին. «Եւ երկակի պատճառաւ դնենք առաջի գայս, մի՛ վասն ամենեւին մաքրութեան եւ սրբութեան հօրդ մերոյ եւ աներկբայ հաստատութեան յեցելոյ մեզ ի Չեզ. եւ մի՛ վասն պարսելոյ եւ կոշկոճելոյ զբերանս զրաբան եւ ունայնախոյզ պարսաւադիր արանց, որք իբրեւ զսկիւթիանոս, զօրէն զաբաւոնացեացն շրջին՝ սպրդեալք տանէ ի տուն, եւ շշուկ չարակարծ զամենեքումքք արկանեն այսպէս յօղելով՝ «հոռոմ է մեր կաթողիկոսն. եւ ընդ նոսա դաշնադիր»⁵⁰: Ա. Աբրահամեանը վերջին հատուածը թարգմանում է հետեւեալ կերպ. «Մեր կաթողիկոսը յոյն է եւ յոյների հետ է դաշնակցում»⁵¹: Հոռոմ բառի ճիշտ ընկալման համար, արժէ մի քաղուածք անել «Հայկա-

զեան բառարանից». «Իբր Հոռոմ, այսինքն հռովմայեցի, սեպհական կոչումն լատին ազգի իտալացոց բնակելոց ի Հոռով քաղաքի եւ ի սահմանս նորա. այլ ի փոխադրիլ կայսրութեան ի Բիզանդիոն՝ յոյնք եւս սկսան ի նոյն անուն կոչիլ»⁵²: Այսինքն մենք կարող ենք հոռոմը հասկանալ եւ որպէս յոյն, եւ որպէս իտալացի, բայց թարգմանութեան մէջ դրանցից մէկը կարող ենք ընտրել: Այլ խնդիր է, թէ ինչ է նկատի ունեցել Օրբէլեանը, այս բառը գործածելով՝ արդեօք նա ուզեցել է ասել, որ կաթողիկոսը «ազգութեամբ յոյն է» կամ լատին, թէ խօսքը Գրիգորի դաւանաբանական ուղղութեանը, լատինամէտ լինելուն է վերաբերում: Եթէ ճիշտը երկրորդն է, ապա առանց դժուարութեան կարող ենք որոշել թարգմանութեան ուղիղ ձեւը, յիշելով Օրբէլեանի գրի առած՝ Անաւարզեցու խօսքերը. «Խնդրենք զաթոռն Անտիոքու մեզ լինել»⁵³: Ինչպէս գիտենք, չնայեա՞ծ Անտիոքի լատինական իշխանութեան անկմանը (1288), այնուամենայնիւ Անտիոքի հոգեւոր առաջնորդը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Հոռոմի պապի ենթակայութեան տակ էր⁵⁴: Ուստի ցանկանալով Անտիոքի հոգեւոր իշխանութիւնը իր ձեռքը վերցնել՝ Անաւարզեցին պէտք է յարաբերութիւններ ունենար յատկապէս Հոռոմի պապի հետ, որոշ գիջումներ անէր, փոխարէնն ստանալով Անտիոքի աթոռը: Զիչ ուշ կփորձենք մատնանշել, որ Անաւարզեցու առնչութեամբ թէ՛ Օրբէլեանը, թէ՛ Չամչեանը հոռոմ ասելով լատիներէնին ի նկատի ունեն:

Բայց նոյնիսկ Անաւարզեցուն խստիւ քննադատող մատենագիրները չեն կորցնում արդարութեան զգացումը եւ դրական կողմերը եւս նշում են: Նոյն Օրբէլեանն Անաւարզեցու կաթողիկոս դառնալու առթիւ գրում էր. «Իսկ յետ այսր ամենայնի դիպուածոց դարձեալ առնէ ժողով թագաւորն Հեթում եւ տայ ձեռնադրել կաթողիկոս Հայոց գՏէր Գրիգոր՝ Անաւարզոյ եպիսկոպոս, այր գիտնական եւ առաքինի, սիրող եկեղեցոյ, օրինասէր եւ տօնախմբիչ տօնից...»⁵⁵: Գրեթէ նոյն իմաստն ունեն Օշին իշխանի հետեւեալ խօսքերը.

Այլ ըզմարմնոյդ առողջութիւն,

զի է ճնշեալ պահեցողիդ

Յարօթից եւ ի պահոց. ի հսկելոյ ճգնաւորիդ...⁵⁶

Երկու աղբիւրները համեմատելով՝ կարող ենք համոզուած լինել, որ ամբողջ հոգով եւ էութեամբ Անաւարզեցին նուիրուած էր եկեղեցուն: Բացի այդ, Օրբէլեանից վերը բերուած պարբերութիւնը եւս մի կարեւոր հարց է բացայայտում: Մեզ համար պարզ է դառնում, թէ ինչու նա կոչուեց Անաւարզեցի. «Գրիգոր Անաւարզոյ եպիսկոպոս»: Փաստօրէն ապագայ կաթողիկոսը Անաւարզեցի կոչուեց Անարգաբայի արքեպիսկոպոս (խօսքը յատկաբար արքեպիսկոպոսութեան մասին է, ինչպէս կարծում է Գ. Ալիշանը. «Ռալէս առ Յունովք՝ նոցա, նոյն եւ մերոցս արքեպիսկոպոսական աթոռ էր Անաւարգա»⁶¹) օծուելուց յետոյ, իսկ այդ աթոռին նա բարձրացել էր 1263-ին եւ մնաց մինչեւ կաթողիկոս դառնալը⁶²: Այս սուղ տեղեկութիւններից դատելով կարող ենք եզրակացնել, որ Անաւարզեցին պէտք է ծնուած լինի 1240-ականներից ոչ ուշ, կամ, որ առաւել հաւանական է՝ աւելի վաղ:

Նշեցիմք, որ մինչեւ կաթողիկոս դառնալը Գրիգորը Անարգաբայի արքեպիսկոպոսն էր: Հայրապետական աթոռին բարձրանալով՝ Անաւարզեցին ստացաւ Սսեցի մականունը: Գրիգոր է կաթողիկոսի ապրած ժամանակաշրջանը նկարագրելիս, մենք յիշեցիմք կաթողիկոսանիստ Հռոմկլայի գրաւումն ու աւերումը, յիշեցիմք նաեւ գերեվարումը Ստեփանոս Գ Հռոմկլայեցի կաթողիկոսի, որին պիտի յաջորդէր Գրիգոր Անաւարզեցին: Այստեղ ճիշտ կլինի յիշել Մ. Չամչեանցի բացատրութիւնը. «Եւ զի յայնժամ աւերեալ էր Հռոմկլայ, փոխեցաւ աթոռ կաթողիկոսութեան ի թագաւորական քաղաքն ի Սիս, որոյ վասն եւ սոյն այս կաթողիկոս կոչի նաեւ Գրիգոր Սսեցի կամ ի Սսոյ»⁶³: Մ. Չամչեանցը ենթադրում է նաեւ, որ սա տեղի է ունեցել 1294 թուականին:

Ժամանակակիցներից թերեւս ամենից շատ Անաւարզեցուն յիշատակում է Օրբէլեանը: Ուստի նրա Պատմութեանը անդրադառնալու պատեհ առիթներ մենք դեռ կունենանք, իսկ այժմ կփորձենք ասարտել խօսքը Անաւարզեցու մականունների մասին: Դրանցից մէկը Չամչեանցի յիշած Տուրք երիցանցն է⁶⁴, որ հետագայ ուսումնասիրողներն օգտագործում են միացած՝ Տուրքերիցանց. «Ուրիշ տեղ իրեն տրուած է Տուրքերիցանց մականունը, որուն ոչ բացատրութիւնը ունինք եւ ոչ մեկնութեամբ կը գտնենք. զի եթէ երիցու տուրք կամ քահանայի որդի իմանանք, անմեկնելի կը մնայ երիցանց յոգնակի

կիրառութիւնը»⁶⁵: Երիցանց բաղադրիչով միջնադարում գործածուած մականուններ սակաւ, բայց այնուամենայնիւ հանդիպում են⁶⁶: Տուրքերիցանցը թերեւս կարելի է հասկանալ քահանաների որդի, քահանաների շառաւիղ: Այսինքն նման մականուն կրողների նախնիների մէջ բացի հայրերից ուրիշ հոգեւորականներ են եղել: Բայց առաւել հմարար է, որ երիցանց մասնիկը ինչ-որ կապ է մատնանշում Իրիցանք կամ Երիցանք բնակավայրի հետ:

Ժամանակին Անաւարզեցին ստացել է նաեւ Ջրող մականունը, որի մասին կխօսենք աւելի ուշ:

Իսկ այժմ յիշենք Անաւարզեցու ամենակարեւոր կոչումը՝ Երզնեցոյ⁶⁷: Այս անուան պատարբերութիւնը լաւ պատկերացնելու համար բաւական է ասել, որ մինչեւ Անաւարզեցին այդ կոչումը կրել է հայ քերթողական, արեւի ճիշտ բանաստեղծական-երաժշտական արուեստի մեծագոյն վարպետ Նելսէս Շնորհալին⁶⁸: Իր հռչակարար նախորդի նման, Անաւարզեցին եւս Երզնեցոյ անուանուեց նոր շարականներ յօրինելու համար, ու թերեւս դրանք քաղցր ու հնչեղ էին, քանզի Երզնեցոյ ամեն շարականագրի չէին կոչում, այլ յատկապէս նրանցից ամենաբեղմնաւորներին, լաւագոյններին: Շատ ցաւալի է, որ Գրիգոր է կաթողիկոսի շարականների մի շնչին մասն է միայն պահպանուել:

Անաւարզեցու գրական ժառանգութեան կապակցութեամբ յոյժ տեղին է անդրադառնալ Ստեփանոս Օրբէլեանի մի բնութագրութեանը՝ ասուած կաթողիկոսի մասին, թէ «պայծառացուցիչ յիշատակաց մարտիրոսաց» էր⁶⁹: Ինչպէս կտեսնենք հետագայում, Անաւարզեցին «մարտիրոսների յիշատակը պայծառացրել էր» նաեւ նրանց շարականներ ձօնելով: Բայց Օրբէլեանի խօսքը շարականներին չի վերաբերում: Օրբէլեանից քիչ ուշ, կէս դար յետոյ Սսոյ «Մաշտոցում» հետեւեալ կերպ է ձեռակերպուած նոյն միտքը. «Բագում պատմութիւն սուրբ վկայից թարգմանեաց»⁷⁰: Անաւարզեցուց առաջ վկայաբանութիւնների թարգմանութեամբ մեծապէս զբաղուել են Գրիգոր Բ (1066-1105) եւ Գրիգորիս Գ (1113-1166) կաթողիկոսները, որ համապատասխանաբար կոչուել են Գրիգոր Վկայասէր եւ Գրիգոր Փոքր Վկայասէր: Այս առումով հետաքրքրական են Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս Երկնային Քահանայապետութեան» գրքի յիշատակարանում Վար-

դան Բարձրբերդու (1260-1326) գրած Անաւարզեցուն վերաբերող հետեւեալ տողերը. «Էր թիւն Հայոց ՉԽԷ (1298), ի քազաւորութեանն... ի հայրապետութեան Հայոց Տեսնն Գրիգորիոսի Երկրորդ Վկայասիրի եւ գերակատար իմաստասիրի. այր առաքինոյ՝ ուղիղ եւ ճշմարիտ դասանողի գերորդութիւնն»⁶⁷:

Իսկ թէ ինչ նպատակով է բարգմանել Անաւարզեցին վկաների պատմութիւնները, կարելի է հասկանալ, յիշելով Գ. Ալիշանի տողերը. «Կարեւոր գործ գրատրական ի սմանէ (Անաւարզեցուց-Գ. Մ.) մնաց մեզ ՅԱՅՄԱԻՌԻՐՔՆ, համախմբութեամբ յիշատակաց երկից եկեղեցեաց»⁶⁸: «Յայսմաւորք» ժողովածուն մեր հեղինակի գործերից ամենաուսումնասիրուածն է, բայցեւ վերջնական գնահատականի կարօտ: Առաւել մանրամասն, եթէ կարելի է այս բարդ գործածել, դրանով զբաղուել են Պ. Պետերսը, Գրիգոր Սարգսեանը, Սիրարփի Տէր-Ներսիսեանը, Մայիս Աղաբէգեանը⁶⁹: Գր. Սարգսեանը պնդում է, որ Անաւարզեցին «Եպիսկոպոս եղած ատեն, գուցէ եւ ատելի առաջ պատրաստած եւ իր խորհած ձեւով յարմարցուցած էր [Յայսմաւորքը] յոյն եւ լատին ծեսերու նմանողութեամբ»⁷⁰: Ալիշանն ատելի լաւ է ձեռակերպել. «համախմբութեամբ յիշատակաց երկից եկեղեցեաց», առանց ստորադասելու մէկը միւսին: Մինչդէռ Գ. Սարգսեանի վերջին խօսքերը պնդում են Անաւարզեցու Յայսմաւորքի հիմնական տարբերութիւնը միւս նման ժողովածուներից՝ «ոչ հայկական, այլ լատինադասան տօնակարգով»⁷¹ կազմուած լինելը: Հանրայայտ է, որ քրիստոնէական եկեղեցիները տէրունական տօները դասակարգում են՝ հիմք ընդունելով Փրկչի ծննդեան օրը: Համաձայն արանդութեան՝ Յիսուսի ծնունդը Յովհաննէս Մկրտչի ծննդեան օրուանից ուղիղ վեց ամիս յետոյ է: Սակայն տարբեր եկեղեցիներ տարբեր օրերից են սկսում հաշուարկը, եւ դրանից բխում է տօնացոյցների բացարձակ անհամապատասխանութիւնը:

Թէ ո՞ր օրուանից է ցանկանում սկսել հաշուարկը Անաւարզեցին, մանրամասնօրէն կտեսնենք հետագայում, այժմ միայն նշենք, որ կաթողիկոսը, լատին եկեղեցու նմանողութեամբ Յիսուսի ծնունդը դրել էր դեկտեմբերի ԻԵ, համապատասխանաբար փոխելով միւս տօների օրերը: Բայց չնայեա՞ծ այս յատկանիշի գոյութեանը, որ չկայ ոչ մի այլ

խմբագրութեան մէջ, Անաւարզեցու Յայսմաւորքը յաճախ շփոթուել է եւ մի անգամ նոյնիսկ հրատարակուել հեղինակի ժամանակակից Տէր-Իսրայէլի անունով⁷²: Մ. Աղաբէգեանը դա բացատրում է հետեւեալ կերպ. «Գրիգոր Անաւարզեցու Յայսմաւորքը Տէր-Իսրայէլի անունով ճանաչուած լինելու պատճառն այն է, որ Գրիգոր Անաւարզեցին իր վերափոխիչ աշխատանքն արել է տէրիսրայէլեան խմբագրութեան վրայ»⁷³:

Անաւարզեցու Յայսմաւորքում հանդիպում ենք հեղինակի արձակ գործերին՝ ներքողեաններին: Դրանք բաւականին մեծ թիւ են կազմում: Մասնաւորապէս միայն Աստուածածնի ծննդեան կապակցութեամբ վեց ներքողեան է գրուած, որոնցից երեքը հրապարակուել են⁷⁴: Յիշենք նաեւ մեզ յայտնի միւս երկուսը՝ «Դրուատ գովեստի ամենայն սրբոց» կամ «Ներքողեան ասացեալ ի սրբոց վարդապետաց». երկու վերնագրերի գոյութեան պատճառով երկու տարբեր դրուատ է համարուել⁷⁵. «Դրուատ ներքողի սմին իսկ նաւակատեաց մեծի ամուր տօնի գովեստի, սուրբ տնօրինականացն Քրիստոսի սրբեալ տեղեացն Երուսաղէմի» (ժամանակին վերագրուած է եղել Գրիգոր Փոքր Վկայասէրին)⁷⁶:

Եւ վերջապէս, առանձին կարեւորութիւն ունի կաթողիկոսի նամականին, ատելի ճիշտ թղթերից մէկը, որ արանդել է Կղեմէս Գալանոսը:

Ինչպէս գիտենք, 451 քականին Քաղկեդոնի ժողովում ընթերցուեց Հռոմի Լեոն Ա Մեծ պապի նամակը, տարածուած է նաեւ Լեոնի Տոմար, Տումար, Տօմար ձեւերով, ըստ որի Քրիստոսը երկու բնութիւն ունէր՝ մի կողմից մարդ, իսկ միւս կողմից՝ Աստուած: Հայ Առաքելական եկեղեցու դիրքորոշումն այլ է՝ միայն մի բնութիւն՝ Աստուած: Այս կանոնին հետեւելով՝ դարեր շարունակ Հայ եկեղեցու սպասաւորները Պատարագի բաժակի մէջ միայն գինի էին լցնում, իսկ քաղկեդոնական եկեղեցու արարողութիւնների ժամանակ միշտ գինուն ջուր է խառնուել՝ խորհրդանշելով Քրիստոսի մարդեղութեան եւ աստուածայնութեան միասնութիւնը: Խորթ եւ օտար է եղել պատարագի բաժակին ջուր խառնելը հայերի համար, ուստի շատ բնական է, որ նման քայլի դիմող հոգեւորականները՝ Կարնոյ Գրիգոր եպիսկոպոսի պէս, կարող էին սպանուել ժողովրդի ձեռքով⁷⁷: Եւ այս կապակցութեամբ զարմանալի չէ⁷⁸, որ Գրիգոր եպիսկոպոսի ժամանակակից Գրիգոր Անաւար-

զեցին ոչ միայն ջուր էր խառնում գինուն. այլև մտմտում էր եւս մի քանի փոփոխութիւն կատարել եկեղեցու ծխակարգում:

Երկար տարիներ անվերապահօրէն ընդունում է եղել, թէ Հայոց կաթողիկոսը, առնուազն կեանքի վերջում, գաղտնաբար ջուր է խառնել գինուն: Դրա համար Անաւարզեցին կրում է Ջրող մականունը: Սա ամենամեծ կոռուսներից է՝ ապացուցելու նրա նորամուծութիւնները: Հաւանաբար այս էր առիթը Մովսէս Երզնկացու՝ Կաթողիկոսի եւ Լեւոն Գ թագաւորի դէմ ուղղուած անհաշտ առարկութեան⁶⁷: Այս պարագայում եւս կարծիքներն իրարամերժ են ու հակասական:

Անդրադառնանք առկայ փաստերին: Պահպանուել է Անաւարզեցու նամակը՝ «Թուրք Տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի, զոր գրեաց առ կրօնաւոր թագաւորն Հեթում, հայր արքային Հայոց Լեւոնի», հետեւեալ խոստովանութեամբ. «Վասն այսորիկ, ես ի հերուեց ի վեր սահմանեալ եմ, որ երբ պատարագ կու առնեմ. նա ջուր դնեմ ի ծածուկ, մինչեւ լինէր զի ժողովով հաստատուէր»⁶⁸: Ուսումնասիրողներն ամենահակասական տեսակէտներ են արտայայտել նաեւ այս կապակցութեամբ, կասկած յայտնել նամակի իսկութեան վերաբերեալ եւ այլն: Մերք կարդում ենք. «Իր այս ճգանց եւ գրաւոր աշխատութեանց պսակն եղաւ ընդարձակ հոգելից թուրքն, որ գրեաց իր արլիւնաշատ կենաց վերջին առ Հեթում Բ թագաւորն»⁶⁹, մերք՝ «...մի թուրք է յերկարուել, որ Գրիգոր Անաւարզեցուն են վերագրում»⁷⁰: Իրարամերժ կարծիքներ ու հակասութիւններ կան յաճախ միեւնոյն հեղինակի գործերում: «Ընդունելով հանդերձ, թէ Անաւարզեցիին ուղղութիւնը կատարելապէս օտարամետ էր, - գրում է Մ. Օրմանեանը, - մենք չենք կրնար Անաւարզեցիին վերագրել իր անձին անվայել եւ իր կարողութեանց անյարմար գրումը մը»⁷¹: Մի այլ դէպքում բազմափորձ հետազօտողը ոչ միայն ընդունում է, այլեւ փորձում է ճշտել, թէ երբ է Անաւարզեցին շարադրել այդ «գրումը». «...ըստ այսմ Հեթումի ուղղուած հռչակաւոր թուրքը հաւանաբար 1303-ին գրուած կրնայ ըլլալ»⁷²: Օրմանեանն իր նշումով ուսումնասիրութիւնները կատարել է 1909-1914 թուականներին, եւ եթէ վերջին շրջանում նա լռելեայն ընդունում էր, որ նամակը գրել է Անաւարզեցին, ապա սկզբնական շրջանի կարծիքը ինչ-որ կերպ հիմնաւորում էր. «Մակայն կրնա՞նք արդեօք ապահովաբար հաստատել. թէ իրօք Անաւարզեցոյն

գրածն է Հեթումի մէջ տեղ յերաժ թուրքը: Կաթողիկոսը մեռած էր եւ չէր կարող դիտողութիւն ընել, նորա կնիքը ուրիշի ձեռք էր ընկած, որ կարող էր ուզածին պէս գործածել, եւ զարմանալի է, որ թագաւորի արքունիքէն կ'ելլէր այդպիսի զիր մը եւ ոչ կաթողիկոսարանի եպիսկոպոսներուն ձեռքէն»⁷³: Նկատելի է նաեւ, որ Օրմանեանը նախապէս նամակի ստեղծման այլ թուական էր ընդունել:

Ուշադրութիւն դարձնելով միեւնոյն մարդու՝ նամակին վերաբերող վարանումներին, անշուշտ, ազատում ենք այն հնարաւոր զարմանքից, որ սպառնում է ամեն մէկին, ով կփորձի համեմատել շրջանառութեան մէջ գտնուող տեսակէտները Գրիգոր Անաւարզեցու կամ նրան վերագրուող թղթի մասին: Միակ փաստը, որի կապակցութեամբ ուսումնասիրողները համեմատաբար համակարծիք են, նամակի գրութեան ժամանակն է: Այստեղ որոշ պարզութիւն է մտցնում այն հանգամանքը, որ թուրքն ընթերցուել է Սսի եկեղեցական ժողովում՝ 1307 թուականին: Բնական է հետետօթիւնը, թէ թուրքը գրուել է դրանից առաջ: Սակայն բնական է նաեւ անմիջապէս ծագող հարցը՝ որքա՞ն առաջ. չէ որ Հեթում Բ 1301-ից ի վեր թագաւորահայր էր, իսկ մինչեւ Ստոյ ժողովը վեց տարի ժամանակ է ընկած: Դ. Ալիշանն այս մասին գրում էր. «Ծանօթ է ամենեցուն սերտ մտերմութիւն սոցա (Գրիգորի եւ Հեթումի-Գ. Մ.) եւ գործակցութիւն՝ ի խնդիրս եկեղեցոյ, յոր սակս ոչ ժամանեալ Գրիգորի գումարել ժողով, զոր պատշաճն դատէր՝ գրեաց թուրք աշխարհիկ բարբառով՝ առ նոյն Հեթում, որպէս կտակ հոգեւոր աւանդելով»⁷⁴: Այսինքն ըստ Ալիշանի Անաւարզեցին նամակը գրել է բառացիօրէն կեանքի վերջին: Օրմանեանի համոզմամբ, նամակում տեղ գտած «քանի կենդանի կամք» արտայայտութիւնն է ստիպել Ալիշանին սոյն եզրայանգումն անելու⁷⁵: Օրմանեանն իր հերթին, ինչպէս արդէն ցոյց ենք տուել, գտնում էր, որ Անաւարզեցին նամակը գրել է 1303 թուականին:

Միով քանիս, թղթի ստեղծման ճշգրիտ տարեթիւր յայտնի չէ, մի հանգամանք, որ, թերեւս, շատ օգտակար կարող էր լինել ստուգապէս հեղինակին պարզելու գործում:

Փորձենք բացատրութիւններ գտնել բուն նամակում, որ բազում հետաքրքրական հանգամանքներ կան: Օրինակ. «Ապա յորժամ Ձեր երէցս՝ ես սկիզբն արարի, որ ժողովի ի հայ

գրոցն զվկայութիւնս, որովք զիրն հաստատէի եւ գրի Չեզ եւ պատրաստեցայ, որ չգային խումար մարդիկ, եւ լինէր աղմուկ. երբ (կարդա՛ եւ) Չեր իրաւունքն չկենար հետ մեր եւ ձերոցն ամենեւին»⁷⁷: Առաջինը աչքի է ընկնում՝ պատրաստուեցի. որ չգային հարբած⁷⁸ մարդիկ, եւ լինէր աղմուկ, միտքը: Այնպիսի տպաւորութիւն է ստեղծում, իբր կաթողիկոսը պատեհատր նստավայր չունէր, եւ մարդիկ. որ փողոցում անելիք չէին ունենում, այցելում էին եւ սկսում զբօսնել կաթողիկոսի առանձնասենեակում: Մինչդեռ Գրիգոր է կաթողիկոսի նստավայրն այլ կերպ են նկարագրել. «Նշանակալի էր այն ժամանակ եւ կաթողիկոսարանը, որի աւերակներն այժմ երեւում են քաղաքի հարաւային ծայրում, եւ որ Լեւոն Բ-ի ժամանակ մի արքեպիսկոպոսական առաջնորդարան էր՝ Հեթում Երկրորդի օրօք կաթողիկոսի վեհարանը Հոռմկլայից այդտեղ փոխադրուեց, եւ առաջին կաթողիկոս հայկական մայրաքաղաքում Գրիգոր Անուարզեցին նստեց: Իհարկէ այն ժամանակուայ վեհարանը անշուք չէր լինելու, այլ թագաւորավայել մի պալատ: Հեթումը իւր մտերիմին չէր թոյլ տայ խարխուլ եւ գծուծ բնակարան ունենալ. իւր ճոխ պալատի կողքին»⁷⁹: Դժուար է թղթից բերուած նախադասութեան կապակցութեամբ որեւէ բացատրութիւն գտնել: Անկասկած, անկախ ամեն ինչից. կաթողիկոսարանում պատահական մարդիկ չէին կարող լինել. որ եւ ստիպէին հայրապետին յատուկ պատրաստուել. որ աղմուկ չլինէր: Հաւանաբար ներկայ մէջբերումը լաւ կոտան է յօգուտ այն կարծիքը պաշտպանողների, թէ նամակի հեղինակը Գրիգոր Անուարզեցին չէ: Բայց դա կարող էր հետագայ ընդմիջարկութիւն լինել:

Ծայրայեղօրէն հետաքրքրական է նամակի լեզուն, որ մերթ համարուել է Անուարզեցու «անձին անվայել», մերթ «աշխարհիկ բարբառ», մերթ «ժամանակին ուսմկօրէն»⁸⁰: Բոլոր դէպքերում հարկ է ընդգծել նամակի լեզուի կոշտութիւնը, եւ հեղինակի անհետեւողականութիւնը. երբ Հեթումին դիմում է թէ՛ յոգնակի, թէ՛ եզակի թւերով: Լեզուական անհարթութիւնները կարելի է բացատրել պնդելով, որ «բոլորովին մտերմական ոճ» է, ինչպէս դա անում է Մ. Օրմանեանը⁸¹: Ի նկատի ունենալով բոլոր թեր եւ դէմ կողմերը՝ յիշվին հասկանալի է դառնում Ա.

րր: Ապարանեցին եւս մի ուրիշից է վերցնում. ուրեմն այդ անշնորհ թողթն երեք մարդու ձեռքով անցել եւ նոր մեզ է հասել»⁸²:

Եւս մի ուշագրաւ հանգամանք. «Դու գայոյ մեծ սերդարարւր Աստուծոյ շնորհօքն, եւ թէ գայոյ այլ կարես առնել, որ զմեզ օրհնել տաս եւ Աստուծոյ եկեղեցոյն միաբանես՝ նա համարէ. թէ Բրիստոս ես, զմեզ արեսամբ ի դժոխոյն կու գնես քեզ հոգով եւ մարմնով ծառայք եւ միշտ աղօթօղք եւ օրհնօղք, զի եղեր մեզ առաքեալ եւ լուսաւորիչ, եւ երանի եղել քոյ ամենայն ազգին, եւ քոյ ամենայն սղալանացն ապաշխարութիւն ի մեր վերայ. երբ խոստովանիս՝ թէ զԱստուծոյ եկեղեցոյն առնես. քանզի կարես ջանալ: Եւ այս մեր ձեռաց զիր է»⁸³: Կարծես հայրապետն զգալով, թէ նամակը կարող է վեճերի առիթ դառնալ, եւ բողոքներ են լինելու՝ իբր հեղինակը կաթողիկոսը չէ. ինքն անձամբ է հաստատում, որ դա իր գրածն է: Մենք հաւանաբար նախադասութիւնը պետք է թարգմանենք հետեւեալ կերպ՝ «Եւ այս է մեր կամքը...»: Այլապէս անհնարին է մտքի ընկալումը. կամ որեւէ բաւարար բացատրութիւն գտնելը:

Ժամանակին լուրջ քննարկումների առիթ է հանդիսացել հետեւեալ միտքը, որ նոյնպէս կարօտ է լուսաբանման. «Զի այժմ, երբ ստոյգ գմտաւ կու ածեն, նա երեք ամ է, որ այդ առ յիս ճշմարտապէս յիստակել է, թէպէտ հետոց զամենն էի լուեալ յիմ սուրբ նախահարցն՝ ի Տէր Յակոբայ, եւ ի Դաւիթ վարդապետէն եւ ի Ներսիսոյն»⁸⁴: Հեղինակի «սուրբ նախահարցերից» ամենաշատը խօսուել է Տէր Յակոբի մասին: Այլիշանը համոզմունք էր յայտնում, որ թղթի մէջ յիշատակուած Յակոբը հասարակ ոք չէր, այլ Յակոբ Ա Գիտնական Կլայեցի (Տարսնուացի կամ Սսեցի) կաթողիկոսը (1268-1286): Հաշուի առնելով ժամանակի կանոնները, երբ կաթողիկոս էին դառնում բացառապէս ազնուական ծագում ունեցող այրերը, շատ հնարաւոր է, որ բարեկամական կապ լինի երկու կաթողիկոսների միջեւ: Երեւոյթը չի հակասում այն տողին, ուր հեղինակը նշում է, թէ ինքն անձամբ է լսել «զամենն» իր սուրբ նախահարցերից: Իրականում Յակոբ Կլայեցին եւ Գրիգորը, խուսափենք Անուարզեցի մականունը գործածելուց, կարող էին իրար հետ

որպես Անուարագեցու ազգական նշելով, այլ ընդգծում է. որ Կլայեցին Անուարագեցու քեռին է:

Նամակագիրը յաճախ է յիշում իր մօրեղբորը. «Եւ կայր ի մօտս իմ քեռոյն գիրքն, որ է «Հաւատոյ արմատն». յորում հետեւող առաքելոցն՝ Երինոս յիշէ գջուրն: Եւ իմ քեռին գրեալ է իւր ձեռօքն ի լուսանցն վասն ջրին. թէ. «Տէն, որ ջուր է պիտոյ ի պատարագն»⁹⁶: Սակայն ինչով է ջուր խառնելու գաղափարը յատկանշական Յակոբ կաթողիկոսի համար, որ յայտնի է իր՝ Նիկիական միաբնակութիւնը պաշտպանող բանակցութիւններով: Իգուր չէ, որ անդրադառնալով Ալիշանի պնդմանը, Օրմանեանը գրում էր. «Ոմանք ուզեցին Յակոբ Ա կաթողիկոսն իմանալ (Հայ. 119)⁹⁷: Հասկանալի է Օրմանեանի նման կեցուածքը՝ երկու անպատասխան հարցերից բխող՝ ինչո՞ւ յատկապէս Յակոբ Ա կաթողիկոսը, եւ ինչո՞ւ յատկապէս քեռին: Հետագայում Օրմանեանի տեսակէտը ուշադրութեան արժանի չհամարելով՝ Մխիթարեան հայրերից մէկը կրկին առաջ էր քաշում Յակոբ Կլայեցու «թեկնածութիւնը». «Բայց հեղինակն (Գրիգոր Անուարագեցին-Գ. Մ.) իւր այս աշխատութիւնը (Յայասմաւորքը-Գ. Մ.) կատարած է բարեհռչակ մօրեղբօրն՝ Յակոբ Ա կաթողիկոսին օրով, գոր պաշտելու չափ կը յարգէ, եւ որմէ, անշուշտ, չեմ յուսար ծածկած ըլլայ այս խնդրին շուրջ իր հիմնական գաղափարը»⁹⁸: Հիրաւի նորութիւններով լեցուն խօսք: Գր. Սարգսեանի մէկ նախադասութիւնից ոչ միայն տեղեկանում ենք, թէ երբ է Անուարագեցին կազմել իր Յայասմաւորքը՝ չթաքցնելով իր կաթողիկամէտութիւնը կաթողիկոսից. այլեւ պարզ է դառնում. որ Յակոբ Ա Գրիգոր Անուարագեցու մօրեղբայրն է, եւ ոչ սովորական. այլ պաշտելու չափ յարգուած: Այսինքն Գր. Սարգսեանին ոչ միայն փաստն է յայտնի, այլեւ մանրամասները: Իսկ ինչ վերաբերում է Ալիշանին, ապա նա միշտ չէ, որ հակում է եղել Գրիգոր Անուարագեցու եւ Յակոբ կաթողիկոսի միջեւ բարեկամական կապ տեսնելու. «Գրիգոր Ապիրատի մահուամբ (1203) վերջացաւ երկրորդ Պահլաւունեաց քահանայապետութիւնն. անոնց յաջորդն Յովհաննէս՝ կամ ասոնց, կամ Ռուբինեան իշխանաց ազգական կարծուի. իրմէ վերջ ալ ատեն ատեն կերելի ժառանգական յաջորդութիւն. ինչպէս ԺԴ դարում մէջ յիշուի Գրիգորի Է (Անուարագեցու)՝ անոր քուերորդին Յակոբ Բ, յետ երկուց Կոստանդեանց. իսկ վերջին դարերուս

Աջապահից յաջորդութիւնն ի Սիս՝ ամենեցուն յայտնի է»⁹⁹: Գժուար չէ համոզուել, որ Յակոբ Կլայեցու եւ Գրիգոր Անուարագեցու կապը ոչ միայն կարելի էր յիշել. այլեւ ճիշտ տեղն էր դա անելու:

Նշուած երեք հոգեւորականների եւ Գրիգոր Անուարագեցու միջեւ ազգակցական կապի քննութիւնը չի յանգեցնի որեւիցէ հետեւութեան՝ նամակի հեղինակին պարզելու հարցում: Տարբերութիւն չկայ. եւ Գրիգոր Անուարագեցին, եւ ենթադրեալ կեղծարարը կարող էին օգտագործել Յակոբ, Դաւիթ եւ Ներսէս անունները:

Ազգականների մասին խօսքը կարելի է աւարտել Ա. Տէր-Միքէլեանից մէջբերմամբ. «Իսկ շուրջ 1308-ին կեղծ թղթի գրողն է Անուարագեցու մի ազգականն, որ ուղղակի զրպարտում է իւր քեռուն, իսկ ապա այլք են այդ թուղթը Անուարագեցուն վերագրել»¹⁰⁰: Սակայն Ա. Տէր-Միքէլեանի տեսակէտում եւս կան քննադատութեան չդիմացող կէտեր: Օրինակ՝ ինչով բացատրել նամակի 1308-ին գրուած լինելը, երբ արդէն 1307-ին այն ընթերցուել էր Սսի եկեղեցական ժողովում:

Ռուսումնասիրութեան առարկայ նամակը, չնայեաժ ծաւալի մեծութեանը, խիստ սահմանափակ է գաղափարական տեսանկիւնից: Պատարագի բաժակին ջուր խառնելու անհրաժեշտութիւնը հաստատող վկայութիւններից ու դիտողութիւններից յետոյ, հեղինակը խնդրում է թագաւորահօրը ժողով գումարել եւ ընդունել տալ նորութիւնը: Թեթեւակի ընդգծուած միւս առաջարկները, այն է՝ Յիսուսի ծնունդը դեկտեմբերի 25-ին նշելը, կամ եօթ Տիեզերական ժողովներն ընդունելը՝ լուրջ ուշադրութեան չեն արժանացել: Ի դէպ երեւոյթը խորթ չէ Անուարագեցուն: Նրա շարականների ցուցակում իր ուրոյն տեղն է զբաղեցնում «Է ժողովոց» կանոնը, եւ, որ առաւել անհերքելի է, նրա «Յայասմաւորքում» եկեղեցու տօները հարմարեցուած են լատինական սկզբունքին, ու Քրիստոսի ծնունդը դրուած է դեկտեմբերի ԻԵ¹⁰¹: Սակայն այս հանգամանքով հնարաւոր չէ ապացուցել, թէ նամակը յատկապէս Անուարագեցին է գրել, քանզի իրազեկ ուզած մարդ կարող էր նրա «Յայասմաւորքից» օգտուել:

Այսպիսով, նամակը կարելի էր ծայրից ծայր կեղծել: Միւս կողմից բացառուած չէ. որ հեղինակը իրօք Անուարագեցին լինի: Յիշատակենք միայն, որ լոկ ոճական մանրամասն

քննութիւնը կպարզի գործի բուն դրուածքը: Մեզ հետուն կտանէր միջնադարեան հեղինակի ոճի ուսումնասիրութիւնը, ուստի մի հանգամանք նշենք: Գրիգոր Անուարագեցու եւ չափածոյ, եւ արձակ գործերում յաճախ ենք հանդիպում հնչիւնների խմբի կամ ամբողջական արմատի կրկնութեան. «Ծերունիս՝ ես կելլեմ ասպարես»¹⁰¹, «Քաջամարտիկ մարտիրոսն Քրիստոսի եւ զօրեղ զօրականն Գեորգեոս»¹⁰², «Ապա փորեցին հոր խոր եւ լցին ի նոր շրջեալ փռանէ կիր հողով»¹⁰³: Միտում չունենալով նշուածը որպէս ապացոյց հրամցնել ուղղակի արձանագրենք, որ նամակում այսպիսի օրինակներ չկան:

Ի մի բերելով ասուածը, տեսնում ենք, որ չկան հեղինակին հաստատող կամ հերքող ծանրակշիռ ապացոյցներ, բացի ընդհանուր այն գիտելիքից, որ Անուարագեցին ծիսական նորամուծութիւնների կողմնակից է եղել եւ կոչուել է Ջրող:

Բայց նամակի հետ կապուած շատ հարցեր գուցէ լուսաբանուէին, եթէ պարզուէր Մխիթար Ապարանեցու ինքնութիւնը, կամ յայտնաբերուէր նրա օգտագործած աղբիւրը: Այս առումով հետաքրքրական է Մեսրոպ Մաշտոցի անուան մատենադարանի հ. 2268¹⁰⁴ ձեռագրում պահպանուած (էջ77ա-77բ), Գրիգոր Անուարագեցուն վերագրուող «Վասն ջրոյն թէ պայտ է (վերնագիրը գրուած է կարմիր մելանով, իսկ է-ից առաջ սեւ քանաքով աւելացուած է Չ՝ «պարտ չէ») խառնել ի սուրբ խորհուրդն որպէս այլ քրիստոնեայք» ճառը: Ի դէպ այստեղ հանդիպում ենք Գրիգոր Անուարագեցու «Ջրող» կոչուելու հնագոյն յիշատակութեանը, որը իր շարքի մէջ, թերեւս, ամենամեղմ արտայայտութիւնն է. «Գրիգորի կաթողիկոսի Հայոց ջրողի, երկաբնակի, ուրացողի...»:

Ճառի եւ թղթի համեմատութեան ժամանակ առաջին հերթին ակնառու է դառնում երկու գրուածքների լեզուական խիստ տարբերութիւնը, որ կասկածների առիթ կարող էր հանդիսանալ, եթէ բացայայտ չլինէր մտքերի նոյնութիւնը: Ինչպէս տեսանք նամակի կապակցութեամբ, հեղինակը, քրիստոնէական աշխարհահռչակ սրբերին վկայակոչելով, փորձում էր ապացուցել Պատարագի բաժակին ջուր խառնելու անհրաժեշտութիւնը: Նոյն երեւոյթն է եւ ճառի պարագայում, ուր ոչ միայն նամակում մէջ բերուած աստուածաբանների խօսքերն են քաղուած, այլեւ նրանց միեւնոյն աշխատութիւն-

ների միեւնոյն տողերը: Այժմ տեղին ենք համարում զուգարար քաղուածքներ ներկայացնել թղթից եւ ճառից.

ՃԱՌ

ԹՈՒՂԹ

Նաեւ մեծն Գրիգոր Նիսեա յերգ երգոցին մեկնութիւնէ այսպէս գրէ թէ Բաց զբերանդ եւ արք ջուրն գոր տէգն աղբերացոյց քեզ, եւ զի զինին ջուր է. նոյն ինքն սուրբս ասէ, թէ Գինին ոչ այլ ինչ է քան եթէ ջուր, որակացեալ ի փայտի՝ այս ինքն գոյն առեալ յորթոյ:

Ունեաք եւ զսուրբն Գրիգոր Նիսացին ի յերգ երգոցն, որ կու ասէ. Բաց զբերանդ եւ արք զջուրն ի կողէն, գոր տէգն աղբերացոյց քեզ... թող, որ, զրեալ է Նիսացին, թէ Գինին ջուր է որակացեալ, այս ինքն գոյն առեալ ի փայտէ¹⁰⁵:

Համեմատութեան ժամանակ, լեզուական տարբերութիւններից բացի, նկատուում է, որ ճառում հեղինակը աւելի ճշգրիտ է մատնանշում իր օգտագործած աղբիւրը:

ՃԱՌ

ԹՈՒՂԹ

Եւ այն գոր ասէ սուրբն Յովհաննիս Մեկնութիւն աւուրնին, թէ ոչ արբից ի բերոյ որթոյ մինչեւ արբից զդա նոր ընդ արքայութեան Հօր իմոյ եւ ի վերայ բերէ թէ չար հերձուածն արմատաքի խլեսցէ որ ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանեն:

Նաեւ յիշեալ են եւ մեկնեալ զՅովհաննու Ոսկեբերանի, թէ Ոչ արբից ի բերոյ որթոյ, կու ասէ զայդ ասաց. զի միւս չար հերձուածն արմատաքի խլեսցէ, որ ի սուրբ խորհուրդն ջուր ի կիր արկանեն¹⁰⁶:

Նման օրինակները բազմաթիւ են ու խօսում: Դրանք բառացիօրէն կրկնում են միմեանց: Միայն մի դէպքում է, որ միեւնոյն խօսքը հանդէս է գալիս որպէս տարբեր հեղինակների միտք: Նամակում այն երկու անգամ է գործածուած. «Եւ յիշեալ են բանքն. թէ խառնեաց ի խառնարանս զգինի յոր»¹⁰⁷: Բայց արդեօ՞ք դրանից կարող ենք եզրակացնել, որ ճառում եղածը

սխալ է. «Նմանապէս սուրբն Աթանասիոս ասէ ի Ալլատութեան ճառին վերջին... եւ խառնեաց ի խառնելիս զգինի իւր»¹⁰⁸: Այստեղ հասունանում է սոյն հարցը, թէ երկու գրուածքներից ոյրն է առաջինը, որն է հինք հանդիսացել: Անսխալ կողմնորոշուելու համար յիշենք թղթի հետեւեալ չեթումին ուղղուած խօսքերը. «Երբ ժողով առնես, նա եւ ցուցանեն եւ զԾնունդն յիւր յատուկ ատուր տօնենք եւ զՉատիկն շարաթ օրն պահենք եւ զՅինանցն ուրբաթն ի մտ պնտենք, զՊագերն, զտօներն, որպէս նոքա եւ մէք առնենք»¹⁰⁹: Փրկչի ծննդեան օրուան վերաբերող խոստումը ճառում կատարուած է: Բաւական երկար դատողութիւններով հեղինակն ապացուցում է Ծնունդը դեկտեմբերի 25-ին նշելու անհրաժեշտութիւնը. «Այլ եւ գտօնքն Ծննդեան Քրիստոսի պարտ է ըստ մետասան ազգաց քրիստոնէից կատարել ԻՆ դեկտեմբերի ամսոյ. ըստ վկայութեան Յովհաննու Ոսկեբերանոյ»¹¹⁰: Ու թէպէտ միւս տօների ու փոփոխութիւնների մասին ճառում ոչինչ ասուած չէ. ճառի նամակից յետոյ գրուած լինելը միանգամայն ընդունելի է:

Վերջին եզրայանգումից բխում է հերթական հարցը. ի՞նչ նպատակով է գրուած ճառը: Այս հարցին պատասխանելու համար պէտք է հրաժարուել մինչեւ այժմ շրջանառութեան մէջ գտնուող կարծիքներից, թէ չեթումին ուղղուած թուղթն ընթերցուել է 1307 թուականին Միս մայրաքաղաքում գումարուած ժողովի ժամանակ: Մենք կարծում ենք, որ ժողովականների համար ընթերցուել է ճառը: Որպէս համոզիչ փաստարկ բերենք ճառի վերջում տեղ գտած միտքը. «Եւ եղեւ կանոնս դրութիւն եւ սահման սրբոյ ժողովոյս ի մեծ թուականութեանս Հայոց ՉԾԶ (1307) ի փոքր թուին Ե, յամսեանն մարտի ԺԹ (19) ի Յօդօգամեան տօնին ի սուրբն Սոփի մեծ կաթողիկէն մայրաքաղաքին Միսոյ...»¹¹¹: Այսպիսով ակներեւ է, որ նամակի նպատակը չեթումին ժողովի անհրաժեշտութիւնը բացատրելն էր, եւ այն նախատեսուած չէր ժողովում ընթերցուելու համար: Ասել է թէ փոփոխութիւնների նախաձեռնողը Գրիգոր Անուարզեցիին էր, նա էր խնդրում չեթումին, որ վերջինս ժողով գումարի: Մինչդեռ գրչագրում պահպանուած եւ Գրիգոր Անուարզեցուն վերագրուող խոստովանութիւնը կարծես այլ բան է ապացուցում. «Առէք ձեզ կռիւ, պատերազմ եւ հակառակութիւն. զի իմ շահելով զկամս թագաւորին՝ գայս արարի. եւ փոխանակ կրեմ արքայուն յաթոռոյս»¹¹²: չեթական հակա-

տութեանն ենք ակամատես լինում. մի դէպքում կաթողիկոսն արքային համոզում է, միւսում նրա հրամանով է շարժում՝ երախտիքի փոխարէն «աթոռից արքայունելով»:

Լուրջ մտորումների տեղիք է տալիս ճառից քաղուած հետեւեալ նախադասութիւնը. «Այժմ ողորմութեամբն եւ շնորհօքն Աստուծոյ ի ձեռն եպիսկոպոսապետին Գրիգորի եւ Կոստանդնա եւ բարեպաշտ տեառնս մերոյ Լեւոնի եւ որ այժմն է բարեպաշտ թագաւորիս Օշնի եւ Պարալինախի. ընկալաք ի վերստին եւ ենք համաձայն յամեն բարեկարգութիւնս եւ տօնս եկեղեցոյն Հռոմայ»¹¹³:

Նախ ասենք, որ ժողովի գումարման եւ Օշինի թագաւոր դառնալու ժամանակների միջեւ (1308) մօտաւորապէս մէկ տարուայ տարբերութիւն կայ: Բայց սոյն հատուածում առաւել հետաքրքրականը առաջնորդների զուգադիր յիշատակումն է: Կասկածից վեր է, որ «եպիսկոպոսապետ Գրիգորը» Անուարզեցին է. իսկ Կոստանդինը՝ Կոստանդին Գ Կեսարացի կաթողիկոսը: Վերջինիս հակումները պատկերացնելու համար, բաւական է յիշենք, որ իր նախորդի նման նա «արժանացել էր «Զորոյ» մականուանը»¹¹⁴: Պարալինախ անունը չի հանդիպել Հր. Աճառեանին, նրան ծանօթ է միայն Ալինախ ձեւը, որ նոյնպէս կայ ճառում եւ վերաբերում է միեւնոյն անձնաւորութեանը: Ալինախը Լեւոն Գ թագաւորի որդին էր, Օշին Առաջինի երկուորեակը (1272-1317): Աճառեանը ծննդեան յատկապէս այս թիւն է բերում, հակադրելով Օրմանեանի 1283-ին¹¹⁵: Բերում է հատուածից արդեօք կարո՞ղ ենք եզրակացնել, թէ որոշ ժամանակ երկուորեակ եղբայրները միասին են իշխել, եւ արդեօ՞ք կաթողիկոսը տեղապահ է ունեցել այդ պահին: Ներկայ հարցերին նոյնպէս առայժմ անհնար է միանշանակ պատասխան տալ:

Ճառի վերջում անյայտ մեկնաբանողը գրառել է նաեւ Անուարզեցու այն խօսքերը, որոնք, իբր, կաթողիկոսն ասել է վախճանուելիս. «Եւ որ գրեացն այսորիկ ի ժամ վախճանին զղջացեալ ասէր. Հայ եմ, հայ եմ եւ հայ մեռանիմ»¹¹⁶: Երեւի սա Գրիգոր Անուարզեցու խառնուածքի հակասականութեան ամենավաղ ապացոյցն է:

Համոզիչ է թուում, որ թագաւորի դրոյմամբ արուած մեղքերը խոստովանող կաթողիկոսը մահացած լինի հենց այս բառերը շուրթերին: Մակայն հակասական կարծիքներ կան եւ

այս խնդրում: Օրինակ. «Բազար Չահկեցի իր Գառազանագրքին մէջ, գրաւոր թէ անգիր աւանդութենէ քաղելով կյիշէ, թէ օր մը երբ իր աթոռին վրայէն հայիոյէր զառաջին սուրբ հայրապետս մեր, ի հարկէ իր նորոգութեանց յարգը դրուատելով, աթոռէն ինկաւ եւ դիւահար եղաւ. իմա՛ կաթուածահար եղաւ կամ վերնտեցաւ եւ քիչ օրէն վախճանեցաւ»¹¹⁷: Հետաքրքրական է Ա. Չամիսեանի տեսակէտը. «Հեթոմն ու Լեւոն Գ այս չափով չբաւականացան. նրանք Արեւմուտքից օգնութիւն ստանալու յոյսով պահանջեցին Անաւարզեցոց լիակատար միաբանութիւն, եւ այս առթիւ նրանց մէջ գծտութիւն ընկաւ: Լեւոն Գ տեսնելով կաթողիկոսի ընդդիմութիւնը՝ գահընկեց արաւ նրան ու աքսորեց: Եւ այս աքսորի մէջ՝ զոջալով որ քազաւորի կամքը կատարելու համար բաժակի մէջ ջուր է խառնել, Անաւարզեցին վշտագին մեռաւ ասելով. Հայ եմ եւ հայ մեռանիմ (1306)»¹¹⁸: Ա. Չամիսեանի հետ համաձայնելու դէպքում պէտք է ընդունենք, որ թերեւս Գրիգոր Անաւարզեցին ոչ մի կապ չունի ո՛չ նամակի, ոչ ճառի հետ՝ պատճառաբանելով, թէ Անաւարզեցին այնքան դէմ էր փոփոխութիւններին, որ միայն նրան աքսորելուց յետոյ կարող էին նորամուծութիւններ մտցնել:

Բազմաթիւ են Գրիգոր Անաւարզեցու կենսագրութեան հետ կապուած անպատասխան հարցերը: Նոյնիսկ նրա հովուապետութեան տարիների կապակցութեամբ միասնական կարծիք չկայ: Ստոյգ մի բան է յայտնի, որ Գրիգոր Անաւարզեցին կաթողիկոսական աթոռին է եղել ԺԳ (14) տարի: Բայց սա բաւարար չէ ճշգրիտ թուականները պարզելու համար: Ոմանք նոյնիսկ այս ելակէտային փաստը ունենալով կարողացել են սխալուել. «Գրիգոր Անաւարզեցին ընտրեցաւ կաթողիկոս յամին 1294... վախճանեաց զկեանսն յամին 1306, կացեալ ի հայրապետութեան զամս չորեքտասան»¹¹⁹: Իսկ թէ ինչպէս է 14 տարի լինում 1294-ից մինչեւ 1306-ը, դա միայն Ի. Փափազեանցին է յայտնի: Ներկայումս եւ Հայաստանեայց Առաքելական եկեղեցու եւ գիտական շրջանների կողմից առաւելապէս ընդունուած է Մ. Օրմանեանի տեսակէտը, համաձայն որի Գրիգոր Անաւարզեցին մեր եկեղեցին առաջնորդել է 1293-1307 թուականներին: Մ. Օրմանեանը նաեւ ենթադրում է, որ կաթողիկոսը մահացել է բնական մահով, «յունուարի վերջերը»¹²⁰, ասել է թէ անկարող էր մասնակցել Սոյ եկեղեցական ժողովին:

Գրիգոր Անաւարզեցու չարաչար մահուան մասին իսկապէս պահպանուել է գրաւոր տեղեկութիւն, որ անշուշտ կարող էր հերքուանք լինել նաեւ: Է. Բաղդասարեանը, որ հրապարակել է Գեորգ Սկեռացու վարքը, իրաւացիօրէն նկատել է, թէ անյայտ վարքագիւրը զայրոյթով ու ատելութեամբ է խօսում Գրիգոր Անաւարզեցու եւ ուրիշների մասին, «սակայն զայրոյթն ու ատելութիւնը չեն մթազնել նրա ուղեղը, եւ նա հանդէս է բերում զարմանալի անաշտութիւն... Գրիգոր Անաւարզեցու մասին (վարքագիւրը գրում է-Գ. Մ.). «Եւ զի էր Գրիգորն քաջ գիտնական եւ կատարեալ տէլետ»¹²¹: Նոյնպիսի վերաբերմունք ունէին նաեւ Ստեփանոս Օրբելեանը եւ միւս ժամանակակիցները:

Բայց գանք Անաւարզեցու կեանքի վերաբերեալ մատենագրական վկայութեանը: Վարքագիւրը պատմում է այդպիսի մահուան պատճառների մասին. «Եւ կարկեցաւ լեզուն հայիոյիչ ըստ բանի սրբոյն Գեորգեայ, թիրեցաւ մտոր բերանոյն եւ մատուց յատամանց՝ թափեցան, եւ ակնողիքն ակամբն՝ յայլանդակ դէմս շրջակրեցան, եւ աջոյն առաւ եւ ձախին նուաղեցաւ, եւ ջիւք ոլորացն եւ բազկացն իբր ջուր բուլացան... նաեւ գործի ձայնին խափանեցաւ...»¹²²:

Գրիգոր Անաւարզեցու անհատականութեան, խառնուածքի հակասականութեան ամօջական անդրադարձն է բանասիրութեան մէջ մինչեւ օրս իշխող հակասականութիւնը: Եւ քանի որ ուսումնասիրողների մեծ մասը Հայոց առաքելական եկեղեցու սպասաւորներ էին, բնականաբար նրանց գնահատութիւնների մէջ գերիշխող պիտի լինէր թերագնահատութիւնը, կամ Անաւարզեցու անհուսալի լատինամոլ լինելու վարկածը ժխտելը: Ենթակայական սկիզբ ունեն նրան տրուած գնահատականներից շատերը: Խօսքը հաւասարապէս վերաբերում է նաեւ Անաւարզեցու գեղարուեստական ժառանգութեանը, որ, անկասկած, թերագնահատուած է: Ընդհակառակն, հազարապիտ են եղել ճշմարիտ, առարկայական գնահատականները: Մակաւաթիւ այդպիսի գնահատականներից մէկը պատկանում է Մ. Չօլեանին եւ Ն. Թահմիզեանին: Անաւարզեցուն բնութագրելով որպէս Կիլիկեան երաժշտաբանաստեղծական դպրոցի ակամաւոր գայրձիլի հետազօտողները նշում են՝ նա մէկն էր արեւելաքրիստոնէական արուեստի դասական շրջանի այն վերջին ներկայացուցիչներից, «երբ բա-

նատեղծն ու նուագահանը հանդես էին գալիս մէկ անձի մէջ».
յարելով. թէ Անաւարզեցին «յօրինել է մի շարք տաղեր ու
գանձեր, իսկ հիմնականում՝ տարբեր տօների նուիրուած շա-
րականներ: ԺԴ-ԺԵ դարերից յետոյ այդ շարականները հա-
նուել են կանոնական ժողովածուից՝ գլխատրապէս Գրիգորի
կրօնական հայեացքները մերժելու պատճառով: Անաւարզե-
ցին մեծ ուշադրութիւն էր դարձնում հայոց ծիսական գրքերի,
այդ թւում եւ Շարակնոցի կարգաւորմանը: Նրա՝ երաժշտու-
թեան եւ կատարման կարգին վերաբերող լուծումները
համընդհանուր ճանաչում են ստացել եւ ընդհուպ մինչեւ այժմ
հաշուի են առնում հայ եկեղեցում»²³:

Այսպիսի գնահատականները, ցաւօք, յաճախադէպ
չեն:

ԳԼՈՒԽ Ա

ԳՐԻԳՈՐ ԱՆԱՒԱՐԶԵՑՈՒ
ԱՍՏՈՒԱԾԱՇԱՀՉԵԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԵՐԳԵՐԸ

*Մի հաս եկեղեցի ունինք՝ մերն է գուտ,
Պարզ է, չունի այնչափ բաներ նորամուտ,
Երգերը գրաւիչ, մեղմ, հոգեօգուտ,
Մեր շարականի պէս շարական չկայ:*

Ջիւանի

Գրիգոր Անաւարզեցու ստեղծագործական կեանքում
ամենաակնառու յաջողութիւններից է շարականների յօրինու-
մը, մի գործ, որին անշուշտ շատ երկար ժամանակ է տրամա-
դրել նա, որքան էլ զբաղուած լինէր հոգետր պաշտօնեայի
ամենօրեայ գործերով ու հոգսերով: Ընդհանրապէս հայ եկե-
ղեցական գրականութեան մէջ կարեւոր տեղ են զբաղեցնում
շարականները, առանց որոնց անհնար է պատկերացնել մեր
եկեղեցու ներկայիս արարողակարգը: Ի յայտ գալով գրաւոր
գրականութեան արշալոյսին՝ հոգետր երգի այս տեսակն
անցաւ զարգացման, յղկման ու կատարելագործման երկա-
րատելի մի ճանապարհ, զարմանալի հետեւողականութեամբ
պահպանելով առաջին հեղինակների սահմանած ոսկեդա-
րեան կարգը: Իրենց երգերով հեղինակները զովերգում ու
փառաբանում էին Աստծուն, ինչպէս Առաքել Միւնեցին է գրել.

*Ռեւոյն կենաց պատրաստեցին
Եւ շարական անուանեցին,
Երգելով միշտ յեկեղեցին
Ի փառս անճառ թագաւորին»²⁴:*

Շարականների հեղինակները ոչ միայն յօրինում էին
խօսքերը, այլ նաեւ քաղցրահամ երաժշտութիւնը: Բայց չնա-

յեւթմ միջնադարեան հեղինակները միշտ գովեստով ու մեծարանքով են խօսում թէ՛ շարականների, թէ՛ դրանց հեղինակների մասին, գիտական շրջաններում գերիշխել է Մ. Արեղեանի տեսակետը, որ թերևս ժամանակի արեխտական ճնշման որոշ տարրեր է կրում. «Թէ՛ն մեր շարականների մէջ կան այնպիսիները, որոնք ունին զգացմունքի ջերմութիւն ու գաղափարի վսեմութիւն, եւ արտայայտուած են մեծ ուժով, բայց նրանց մէջ ընդհանրապէս չպիտի որոնել քնարերգութեան բարձր թռիչքներ եւ փայլուն ու բազմազան արտայայտութիւններ»¹²⁵: Տրգերի գեղարուեստական կողմին թերևս նշանակութիւն չի տրուել, եւ Գրիգոր Տաթևացու խմբագրած Շարակնոցից, այժմ իսկ գործածական, դուրս են մնացել բարձրակարգ շարականներ, որ հիմա գտնում ենք Ս. Ամատունու հրատարակութեան մէջ: Այս հարցի կապակցութեամբ չցանկանալով երկարաբանել՝ կաթողիկոսներից յիշենք միայն Գրիգոր Պահլաւունու (1113-1166) եւ, որ առաւել զարմանալի է, Ներսէս Շնորհալու (1166-1173) պարականոնների շարքը դասուած ստեղծագործութիւնները¹²⁶: Մի խօսքով, գործածութիւնից դուրս մնալը միշտ չէ, որ նշանակում է, թէ տուեալ շարականը որակական առումով զիջել է իր տեղը առաւել արժէքաւորին: Ընտրութեան հիմք կարող էին ծառայել այլեւայլ հանգամանքներ, այդ թւում դաւանաբանական պահանջները եւս: Վերջապէս, եթէ միեւնոյն տօնին կամ սրբին նուիրուած են բազմաթիւ երգեր, բնականաբար դրանց սահմանափակ մասը կարող էր կիրառուել պաշտօններգութեան ժամանակ:

Այլեւայլ մեծանուն բանաստեղծներ են զբաղուել շարականների ստեղծմամբ: Նրանցից շատերը սրբերի կարգն են դասուած, ինչպէս Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթեւը, Մովսէս Խորենացին եւ արդէն յիշատակուած Ներսէս Շնորհալին, որ գերագոյն կատարելութեան էր հասել թէ՛ երաժշտութեան, թէ՛ չափածոյի մէջ: Ներկայումս շարակնոցում որպէս հեղինակ նշուած են քսան խոշորագոյն բանաստեղծներ¹²⁷, բայց շարական գրողների թիւն անհամեմատ աւելի է: Դա իսկոյն երեւում է, եթէ համեմատենք տարբեր շարակնոցների հեղինակային ցուցակները ուշադրութիւն դարձնելով ոչ թէ այն բանի վրայ, որ միեւնոյն շարականի համար տարբեր հեղինակներ են յիշատակուած, այլ որ իւրաքանչիւր շարակնոցի խմբագիր ըստ իր

հայեցողութեան եւ ճաշակի տէրմունական գլխաւոր տօներին ձօնուած շարականներից բացի տեղ է յատկացրել նաեւ «երկրորդական» տօներին ու սրբերին փառաբանող երգերին, որոնց հեղինակը, բնականաբար, կարող էր նոյն մարդը չլինել:

Նման խմբագրութիւններից մէկում Սարգիս Տրեցը (ԺԳ դար) 10-րդ տեղում յիշում է. «Ձեռոյն Սրբոյ Գալստեան ութերորդ աւուրն, եւ զՍուրբ ժողովոյն Մանկունքն՝ Հիման յառաքեալսն. Տէր Գրիգոր Անաւարզեցին ասաց»¹²⁸: Այս վկայութիւնից պարզ է դառնում, որ շարականների հեղինակների շարքում կարող ենք յիշել եւս մէկին՝ Գրիգոր Անաւարզեցուն: Սա մի հին վկայութիւն է այն մասին, որ հայրապետը «Յայսմատուրքից» ու դրուատներից բացի զբաղուել է նաեւ չափածոյով:

Ինչպէս ընդունուած է ասել, կրօնական տեսակետից Անաւարզեցին լատինամէտ ուղղուածութիւն ունէր: Անկասկած այդ բանը պիտի իր ազդեցութիւնը թողնէր նրա ստեղծագործութիւնների վրայ: Եւ իսկապէս դա ակնառու է «Յայսմատուրքում»: Նոյնն է նաեւ Անաւարզեցու գրած շարականների պարագայում: Համոզուելու համար մի հայեացք ձգենք նրա յօրինած շարականների ցուցակին:

- «1. Կանօն անարատ յղութեան Սուրբ Աստուածածնի,
2. Ընծայեցման Սուրբ Աստուածածնի,
3. Ճրագալուցի մկրտութեան եւ յայտնութեան Տեառն,
4. Ա աւուր ծննդեան,
5. Բ աւուր ծննդեան,
6. Գ աւուր ծննդեան,
7. Ճրագալուցի մկրտութեան,
8. Ա աւուր յայտնութեան,
9. Բ աւուր յայտնութեան,
10. Գ աւուր յայտնութեան,
11. Թղթատութեան Յիսուսի,
12. Ամենասուրբ Երրորդութեան,
13. Աւագ երկուշաբթի,
14. Աւագ երեքշաբթի,
15. Աւագ չորեքշաբթի,

16. Ամենայն սրբոց այբուբենական. վերջին երեք տունքն նուիրեալ են սրբոց Անարծաթիցն, քանզի առ լատինս ի նմին աւուր կատարի տօն Ամենայն սրբոց եւ սոցա առանձինն.

17. ՀԲ աշակերտաց Քրիստոսի.
18. Մատթի Աւետարանչի.
19. Մարկոսի Աւետարանչի.
20. Դուկասու Աւետարանչի,
21. Անդրէի Առաքելոյ,
22. Թումայի Առաքելոյ,
23. Սրբոյն Բարսղի,
24. Ս. Գրիգոր Աստուածաբանի,
25. Սրբոյն Լէոնի Պապի,
26. Է ժողովոց,
27. Ս. Նիկոլայոսի,
28. Գէորգայ Զօրավարի,
29. Թէոդորոսի Ստրատելատի,
30. Թէոդորոսի Զօրավարի,
31. Մերկեոնիոսի Զօրավարի,
32. Սրբոց Տարագոսեանց,
33. Յոհաննու Ոսկիբերանի...»¹²⁹:

Աւելացնենք նաեւ, որ ցայսօր Անաւարզեցու երգերից հրապարակուած են հետեւեալները՝

Հրաշափառ ծննդեան Տեառն ճրագալուցին («Սիսուան եւ Լեւոն Մեծագործ», էջ 242),

Կանոն Տնօրէնութեան եւ անուանադրութեան Տեառն կամ Թշփատութեանն Յիսուսի (ԱՄՏ էջ 4),

Կանոն Գէորգայ Զօրավարին (ԱՄՏ էջ 46),

Կանոն Թաղէոսի առաքելոյն (ԱՄՏ էջ 33),

Կանոն Բարսղի հայրապետին (ԱՄՏ էջ 153),

Կանոն ամենայն սրբոց (ԱՄՏ էջ 145),

Կանոն ամենասուրբ Երրորդութեան կամ Հոգեգալստեան ուրբերոյ աւուր (ԱՄՏ էջ 108),

Կանոն սրբոյն Բէնէդիկտոսի («Գարուն», 1993, հ. 3, էջ 90),

Կանոն Լեօնի Մեծի քահանայապետին Հոռմեականի («Բանբեր Երեւանի համալսարանի», 1993, հ. 2, էջ 96),

Կանոն Ա աւուր ծննդեան, Բ աւուր ծննդեան, Գ աւուր ծննդեան (հրապարակել ենք մասամբ՝ «Մանանայ», 1994, հ. Ա),

Աւագ շաբաթուայ Բ2, Գ2, Դ2 օրերի Մեծացուցէները (ԱՄՏ էջ 157),

Հիման յառաքեալսն սկսուածքով Մանկունքը (ԱՄՏ էջ 155),

Կանոն Ճրագալուցի Սկրտութեանն («Հայկազեան հայագիտական հանդէս», հ. 18, 1998, էջ 219-226),

Շարականք ի տօնի ամենասրբոյ մարմնոյ եւ արեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ («Հանդէս Ամսօրեայ», 1999, հ. 1-12, էջ 437-440)

Գրիգոր Անաւարզեցու լատինամէտոութեան ամենակնառու օրինակները Ալիշանի ցուցակի 25 եւ 26-րդ կէտերում յիշուած կանոններն են: Հանրայայտ Լ. որ Տիեզերական ժողովներից միայն առաջին երեքն է ընդունում Հայ առաքելական եկեղեցին: Այս փաստը բաւարար չհամարելով երգահանքանաստեղծի լատինամէտոութեան հաստատման համար, քանզի միայն Հոռմի եկեղեցին չէ, որ ընդունում է Է տիեզերական ժողովները, այլ ընդհանրապէս արեւմտեան եկեղեցիները, յատուկ ուշադրութիւն դարձնենք Հոռմի Լեւոն Ա Մեծ պապին ձօնուած կանոնին:

Դեռոնյ Ալիշանի բերած ցուցակը յոյժ կարեւոր է Գրիգոր Անաւարզեցու ստեղծագործութիւնն ուսումնասիրելու համար: Այն համադրելով Սարգիս Երէցի յիշատակութեան հետ՝ կարելի է որոշ եզրայանգումներ անել: Սարգիս Երէցի ցանկում տեղ գտած «Հոգոյն Սրբոյ գալստեան ուրբերոյ աւուրն» կարգը Ալիշանի նշած «12. Ամենասուրբ Երրորդութեան» կանոնն է. որ եւ Ամատունին հրատարակել է (ԱՄՏ 108): Սակայն խնդիրը բարդանում է, երբ անդրադառնում ենք Սարգիս Երէցի միւս տեղեկութեանը. «Սուրբ ժողովոյն Մանկունքն՝ Հիման յառաքեալսն»: Այդեօք պէտք է կարծենք, թէ սա մի մասն է «Է ժողովոց» կանոնի, թէ ուղղակի Ալիշանը չի անդրադարձել, չի նշել այս շարականի ամբողջական կարգը:

Այս վերջին ենթադրութիւնը, թէ Ալիշանը չի նշել Գրիգոր Անաւարզեցու գրած բոլոր շարականները, վաղ թէ ուշ պիտի ծնուէր եւ շրջանառութեան մէջ մտնէր: Բազմիցս խօսուել է այն մասին, որ Անաւարզեցին ձգտում էր փոփոխութիւններ մտցնել Հայ եկեղեցու արարողակարգի մէջ: Յանկանայով դրանց միջոցով արարողակարգը մօտեցնել լատինականին՝ նա համապատասխանաբար պէտք է ձեւափոխէր թէ՛ «Յայսմաւուրք» ժողովածուն, թէ՛ Շարակնոցը: Կասկածից վեր է, որ Ալիշանի նշած 33 կանոնները բաւարար չեն, արելի ճիշտ՝

պրանցից միայն երեքն են նորաձուծութիւն, եւ անհնար է պնդելը, թէ այսքանով Անաւարզեցիւն հասել է իր նպատակին: Ճիշտ կլինի կարծել, որ հեղինակը ամբողջական կարգ կամ առնուազն շարական պիտի նուիրէր այն սրբերին ու տօներին, որ ընդունում է հռոմէական եկեղեցին. բայց դրանք բնականաբար անտեսուած են մեր եկեղեցու կողմից: Մ. Օրմանեանը զգալ է տուել, որ Ալիշանը հեղինակի շարականների միայն մի մասն է գրանցել. «Անաւարզեցիւն իւր Երզնցոյ մականունն արդարացուցած է նոր շարականներ յօրինելով, որոնցմէ 33 կանոն ցուցակագրուած կը գտնենք (ՄԻՍ 242): Իւր գրած շարականները հաւանաբար յիշուածներէն աւելի ալ եղած պիտի ըլլան, զի 33 կանոնը միմիայն ցուցակագրողին ձեռքը հասած գրչագիրներուն մէջ տեսնուածներն են»¹³⁰: Նոյն կարծիքին է նաեւ Ա. Մաղոյեանը: «Սուրբ Բէնէդիկտոսի» կանոնը հրապարակելիս նա ասում է. «Մեր թռուցիկ ակնարկը թերեւս թոյլ է տալիս ենթադրելու, թէ հայ-իտալական գրական աղերսների հետաքրքրական այս էջը՝ ս. Բէնէդիկտոսին նուիրուած կանոնը, արգասիքն է կիլիկեան մշակութային կեանքի, իսկ հեղինակը Գրիգոր Է Անաւարզեցի կաթողիկոսն է»¹³¹: Սրանով անուղակիօրէն ընդունում է, որ Անաւարզեցու շարականները ամբողջովին չեն գրանցուած, հետեւաբար Ալիշանի ցուցակը լրի չէ. յիշենք, որ Ալիշանի ցուցակում ս. Բէնէդիկտոսին ձօնուած կանոն չկայ:

Եւ մէկ հանգամանք: Ալիշանը գրի է առել միայն ամբողջական կանոնները, բայց Գրիգոր Անաւարզեցիւն ունէր նաեւ ուղղակի որեւէ կարգի վերաբերող շարականներ: Դա նոյնպէս իմանում ենք Օրմանեանից՝ «Բազմաթիւ Մեծացուցէ շարականներ ալ յօրինեաց...»¹³²: Ուշադրութիւն է գրաւում «բազմաթիւ» որոշիչը: Ուրեմն բաւականին մեծաքանակ են այս կարգի շարականները: Ապա Օրմանեանն ասում է, թէ ձեռագրերում հանդիպել է հեղինակի որոշ Մեծացուցէների, ցաւօք սրտի չնշելով ճշգրիտ տեղը: Ըստ երեւոյթին գրչագրերը պահուելիս կլինէին Կոստանդնուպոլսում, որ եւ արհաւիրքի ժամանակ փոխած պիտի լինէին իրենց հանգրուանը, եթէ չեն ոչնչացուել:

Ինչեւէ, ակնյայտ է, որ Անաւարզեցիւն զգալի ներդրում ունի շարականների ժանրում: Սակայն նրա ստեղծագործութիւններից քչերն են մեզ հասել: Այժմ գործածուող Շարակ-

նոցում նրա անունը բնաւ յիշատակուած չէ, իսկ Ամատունու գրքում կան. Աստուածայտնութեան ճրագալուցին, Հոգեգալստեան ութերորդ աւուր, Թլփատութեան Յիսուսի, Ամեւնայն սրբոց, Բարսղի հայրապետի, Գեորգ Ջօրապարի, Թաղեոս առաքեալի կանոնները, Հիման յառաքեալսն Մանկունքը, եւ Աւագ շաբաթուայ Բշ, Գշ, Դշ օրերի Մեծացուցէները (Ամատունին ոչ բոլորն է համարում Անաւարզեցու գրածը, այդ մասին հետագայում):

Մի՞թէ կաթողիկոսի երգերից միայն այսքանը հասան մեզ: Ինչ խօսք, հնարաւոր է: Նոյն ճակատագրին են արժանացել Գրիգոր Տաթեւացու խմբագրութիւնից դուրս մնացած հարիւրաւոր շարականներ: Բայց եւս մի հնարաւորութիւն կայ. հաւանական է, որ Անաւարզեցու որոշ շարականներ հասած լինեն մեզ որպէս «անանուն հեղինակի» կամ ուրիշ հեղինակի անունով: Եւ այսօր Շարականոցն ընթերցելիս, գուցէ առանց գիտենալու, կարդում ենք նաեւ նրա յօրինածները: Օրինակ այս մէկը.

*Անեղանելիդ Աստուած,
Բանդ անմեկնելիդ ի Հօրէ,
Ընդ ժամանակաւ լինի հաճեցար
Եւ մարմնացար ի սուրբ Կուսէն
Աստուած եւ մարդ յայտնեալ...¹³³*

Արդեօք սա Քրիստոսի երկու բնութեան վրիպած խոստովանութիւն չէ՞, որի կողմնակիցն էր Գրիգոր Անաւարզեցիւն: Կամ այս մէկը.

*Օգնական մեր լեր, Տէր,
Եւ ապաւէն յամենայն ժամ...¹³⁴*

Շարականի առաջին տողն ընթերցելիս անմիջապէս յիշում է Անաւարզեցու՝ վերելում արդէն բերում անխաղատութիւնը՝ «Փորեցին հոր խոր...»: Այս կապակցութեամբ լիովին հասկանալի է Գր. Յակոբեանի զգուշաւորութիւնը. «Սակայն նրա (Անաւարզեցու-Գ. Մ.) գրեթէ բոլոր շարականները պարականոն են»¹³⁵: Սրանով հետազօտողն ասում է, որ Անաւարզեցու շարականները չէին կարող տեղ գտնել Շարակ-

նոցում, բոլոր շարականները, բայց «գրեթե բոլոր»: Ուրեմն Գր. Յակոբեանը հնարատր է համարում, որ այնուամենայնիւ որոշ երգեր տեղ գտած լինեն շարակնոցում: Բայց այս ամենի մասին խօսելիս մեր իւրաքանչիւր բառ պարզապէս գուշակութիւն է, քանի դեռ լուրջ քննութեան չի առնուել Գրիգոր Անուարգեցու ժառանգութիւնը: Մասնատրապէս հեղինակի շարականներին վերաբերող կարծիքները յաճախ մէկ նախադասութիւնից ատելի չեն եւ միաբերան կրկնութիւնն են Ալիշանի գաղափարների: Նրան յաջորդած հետազոտողները, որպէս ելակէտային, թերեւս ընդունել են վերջինիս սոյն միտքը. «Կարելոյ գործ գրաւորական ի սմանէ (Անուարգեցուց-Գ. Մ.) մնաց մեզ «Յայսմատորքն»¹³⁶: Այսինքն Անուարգեցու ժառանգութեան մէջ Ալիշանը առաւել կարելոյութիւն էր տալիս վարքերի եւ վկայաբանութիւնների ժողովածուին, գերադասում շարականներից: Բայց անյայտ պատճառով մոռացութեան են մատնուած Ալիշանի միւս խօսքերը. «Միւս գրատր եւ ոչ անցան գործք Անուարգեցոյն են Շարականքն, ատելի քան գերեսուն կանոնք, ի յաւելուածս տօնից, եւ մեծ մասն չափական քանիւ. որոց եթէ չիք վսեմական ոճ նախնի շարականաց, ոչ պակասեն իմաստք գեղեցիկք, պարզագոյն եւ հոգիախօսք, հանդերձ վայելոյ ի հիւստածով»¹³⁷: Այնուհետեւ Օրմանեանը կրկին առաջ էր քաշում Ալիշանի խօսքերը՝ իրեն «ձեռնտու» կրճատումներով. «Անուարգեցիին գրական արժէքը շատ չբարձրանար այս շարականներով, որոնց մէջ իւր պաշտպաններն ալ կը պարտատրուին խոստովանիլ թէ. չիք վսեմական ոճ նախնի շարականաց»¹³⁸: Իսկ ինչպիսին է Գրիգոր Անուարգեցու շարականների «ոչ վսեմական ոճը»: Դիտարկենք նրա երգերը:

**ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՈՒԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
ԿԱՄ
ՔԼԹԱՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ԿԱՆՈՆԸ**

Ամատունու գրքում հրատարակուածներից առաջինը «Տնօրէնութեան եւ անուանադրութեան Տեառն» կարգն է: Այն բաղկացած է եօթ շարականից (ԱՄՏ 4-7), սկսում է Օրհներգութիւնով, որ եօթ տուն ունի: Կանոնի տների առաջին տա-

ները յօդում են հետեւեալ բանակապը՝ «Կոստանդիանոս արքայն խնդրեաց զբանս» (այստեղ եւ հետագայում բանակապերի կրկնուած կամ ատելորդ տառերն անտեսուում են):

Հանրայայտ է, որ Գրոգոր Անուարգեցու կենսագրութիւնը հիմնականում մշուշապատ է, ղեպերն անստոյգ, փաստերը սակաւ: Կաթողիկոսի կեանքից ոչ մի ճշգրիտ թուական չգիտենք: Երբեմն լինում է նաեւ հակառակը՝ հեղինակի մասին գիտենալով ամեն ինչ, կամ գրեթէ ամեն ինչ, անհնար է լինում կողմնորոշուել նրա որեւէ գործի ստեղծման թուականի հարցում: «Տնօրէնութեան եւ անուանադրութեան Տեառն» կանոնի բանակապի շնորհիւ յայտնի է դառնում դրա գրութեան թուականը՝ 1298-1299: «Կոստանդիանոս արքայն», որի խնդրանքով ստեղծուել են շարականները, Լեւոն Գ թագաւորի որդին է, Կիլիկիոյ Կոստանդին Բ թագաւորը: Ներկայումս պատմաբաններն անյայտ են համարում նրա ծննդեան թուականը՝ որպէս գահակալութեան տարիներ մատնանշելով վերում բերուած թուականները¹³⁹, որից եւ թխում է մեր հետեւութիւնը շարականների ստեղծման ժամանակի կապակցութեամբ: Անշուշտ լաւ է, որ գիտենք շարականների ստեղծման ժամանակը: Բայց բացատրութեան կարօտ հարցեր դեռեւս կան: Ասենք՝ կանոնի վերնագիրը: Արդեօք կանոնը Ալիշանի չգրանցածներից մէկն է. թէ այլ վերտառութեամբ է հանդէս եկել: Ուշադիր կարդալով երգերը՝ տեսնում ենք, որ դրանք վերնագրին համապատասխանում են:

Սակայն կայ եւ հարցի միւս կողմը: Համաձայն աստուածային օրէնքների, արու նորածինները ծնուելուց ութ օր անց պէտք է թլփատուէին¹⁴⁰: Իզուր չէ, որ Օրհնութեան 2-րդ տունը հետեւեալն է.

*Որ հնազանդելով Հօր ի մարմին խոնարհեցար
Եւ ծնեալ տղայացար,
Սկսեալ յարզանդէ զպատուիրանն առնել
Եւ ութօրեայ թլփատութեամբ Հօր հնազանդեցար.
Տնօրէնութեան քո երկիրպագաներ:*

Արդեօք կարելի է համարել, թէ ներկայ կանոնի շարականները Ալիշանի ցուցակի «Թլփատութեան Յիսուսի» հետ նոյնանում են: Հաստատապէս պնդելը անշուշտ դժուար կլի-

նէր, եթէ չլինէին Գրիգոր Ամաւարզեցու շարականները ներառող երկու նորայայտ ձեռագրերը: Առաջինը Լվովի Վլ. Ստեֆանէկի անուան գրադարանում պահուող Br-8 (Ֆ-49) բաւարար պահպանուած շարակնոցն է (այսուհետ շարադրանքի մէջ՝ Լ եւ էջը: Օգտուել ենք ձեռագրի մանրածապաւեհից, որ պահուում է ԵՊՀ Հայագիտական հետազոտութիւնների կերտրոնում)⁴¹: Երկրորդը՝ Մաշտոցի անուան մատենադարանի N 732 ժողովածուն է, որ սկսուում է Ամաւարզեցու շարականներով (հետագայում շարադրանքի մէջ՝ Ե եւ էջը, ցաւօք այս ձեռագրի վրայ իր դաժան հետքն է թողել ժամանակը. որոշ էջեր բացարձակապէս անընթեռնելի են): Լ գրչագրի իւրաքանչիւր էջ համարակալուած է առանձին թով, իսկ Ե գրչագրի երկու էջերը նշուած են մէկ թուով: Լ ձեռագրի յիշատակարանի մանրածապաւեհը չունենալու պատճառով չենք կարող որոշակիօրէն ասել դրա ժամանակը: Բայց գրչութեան հանգամանքները թոյլ են տալիս եզրակացնելու, որ այն ուշ միջնադարի ընդօրինակութիւն է: Ե մատյանի յիշատակարանները (ունի երկու յիշատակարան) հրատարակուած են Լ. Խաչիկեանի աշխատասիրութեամբ: Դրանք տարբեր թւագրում են տալիս՝ 1322 եւ 1401: Կարելի է կարծել, թէ Ամատունին իր գիրքը կազմելիս օգտուել է Ե ձեռագրից, որ Էջմիածնի գրատանը պահուում էր 620 համարով⁴²: Սակայն այս ենթադրութիւնը լիովին հերքելի է: Առաջին ապացոյցը կանոնի վերնագիրն է, որի կապակցութեամբ յիշեցինք երկու գրչագրերը: Լ ձեռագրում քննուող շարականները 151-161 էջերում են, իսկ Ե ձեռագրում՝ 32ա-37ա էջերում:

Եւ այսպէս, բացի նրանից, որ Ամատունին չի յիշում 732 ժողովածուն, գրքին նրա անձանօթ լինելը երեւում է նաեւ կանոնի վերնագրից: Ե ձեռագրում հետեւեալն ենք կարծում. «Կանովն ութօրեայ թլփատութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ»: Գրեթէ նոյնն է Լ մատենանի վերտառութիւնը՝ «Կանոն թլփատութեան Քրիստոսի»:

Եւ վերջապէս, ամենագորեղ ապացոյցը, որ Ե ձեռագիրն ուսումնասիրուած չէ Ամատունու կողմից: Բանակապը դիտարկելիս թոււմ էր, թէ կանոնը մեզ է հասել առանց կորուստների, բայց կորուստ կայ: Եւ Լ, եւ Ե մատենաներում կանոնն սկսուում է Օրհներգով: Նոյնն է նաեւ Ամատունու հրատարակութեան մէջ, բայց «պարունակութիւնն» է տարբեր:

Նշեցինք, որ Ամատունու գրքում կանոնը բաղկացած է եօթերկուց: Նոր աղբիւրներում ութական շարական է: Սրանցում արտագրուած Օրհներգն սկսում է «Որ խոստացար...» տնով: Նորայայտ Օրհներգը բանակապից գուրկ է, բոլոր տներն սկսում են Ո տառով, բոլորի վերջից չորրորդ տողերն աւարտում են ՌՎ յանգով՝ շիւնընկնելով միւս տողերի հետ: Այնուհետեւ կարդում ենք Ճաշու շարականը՝ Ամատունու մօտ՝ Օրհներգ: Պարզում է նաեւ, որ Ամատունու գրքում միայն ԳԿ գրանցումն ստացած շարականը Համբարձի է: Ամատունու գրքից բացակայում է Տէր յերկնից շարականի «Սպասատրեալդ ի քերովբէից» սկսածքն ունեցող տունը, որ նոյնպէս բանակապի վրայ չի ազդում: Մնացած հարցերում տարբերութիւնները չնչին են:

Լ եւ Ե ձեռագրերի Օրհներգը, ի տարբերութիւն Ամատունու տպագրածի, անվիճելիօրէն յատկաբար այդ կարգին է պատկանում: Կարգը ծագում է «Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեայ» աստուածաշնչեան խօսքերից, եւ սովորաբար դրանց մէջ արտացոյցուած է այդ միտքը, կամ «օրհնել» բառն է հանդիս գալիս այդ երգերում⁴³ (տե՛ս ցանկացած տուն): Սրանց վերջին տողը՝ կրկնակը, հանդիպում է բոլոր տներում, բացի վերջինից: Այս շարականը, ինչպէս նաեւ բազում այլ երգեր իւրօրինակ աղօթքներ են: Բոլոր տներում հեղինակը դիմում է Աստծուն, բացի վերջինից, որն ուղղուած է Աստուածածնին, հետեւաբար փոխում է նաեւ կրկնակը: Հետաքրքրական է, որ բացի Օրհնութիւնից, Աստուածածնին են նուիրուած նաեւ Ճաշու, Համբարձի եւ Տէր յերկնից շարականների վերջին տները: Փաստօրէն զգալի է դառնում Ամաւարզեցու յատուկ վերաբերմունքը Աստուածամօր նկատմամբ: Մ. Օրմանեանը ժամանակին գրում էր. «...փափաք ունեցած է եկեղեցւոյ մէջ փոփոխութիւններ մտցնել նաեւ անկախաբար լատինական նմանողութիւններէ: Այդ կարգէն է առաւօտեան ժամերգութեան մէջ Մեծացուցէ կարգը հանապազօրեայ ընել... Այդ նպատակով բազմաթիւ Մեծացուցէ շարականներ ալ յօրինեաց»⁴⁴: Այսինքն ըստ Օրմանեանի Ամաւարզեցու այս վարքագիծը լատիններից անկախ է, ուրեմն հեղինակի յայտնագործութիւնն է:

Թէ՛ այս, թէ՛ միւս կանոններում յաճախ ենք հանդիպում Աստուածածնին վերաբերող գեղեցիկ համեմատու-

քիմները: Բայց սոյն մտքերի կապակցութեամբ հարկ է յիշել Մ. Աբեղեանի խօսքերը, որ ասում է Աստուածամօրն ուղղուած մակդիրների կապակցութեամբ. «Ուրիշ երգերի մէջ նա է խորան լուսոյ, անապական տաճար, մօրենի անկիզբի եւն, եւն. բոլորը մեկնաբանների յօրինած բացատրութիւններ եւ ոչ թէ բանաստեղծների երեւակայութեան արդիւնք»¹⁴⁵: Սա պէտք է հաշուի առնել Աստուածածնին ձօնուած բոլոր երգերի պարագայում, հնարաւոր համարելով, որ երբեմն կարող էին յօրինել նաեւ շարականագիրները: Օրինակ, եթէ նկատի ունենանք Ներսէս Շնորհալուն, որ եւ շարականների, եւ մեկնութիւնների հեղինակ է, կզգացուի հակադարձ գործընթացի հնարաւորութիւնը, ուստի պարտադիր չէ ակնփակ ընդունել Աբեղեանի միտքը: Պարզապէս դժուար է խիստ սահմանափակում կատարել: Օրինակ, Համբարձիի վերջին տունը անվիճելիօրէն բանաստեղծական մտքով եւ վառ երեւակայութեամբ է ընդգծուած:

Ինչպէս այս, այնպէս էլ Անաւարզեցու ստեղծած երգերի մեծ մասում զգալի է հեղինակի յանգաստեղծման վարպետութիւնը, վանկերի չափի կայունութիւնը, կանոնաւորութիւնը:

ՅԻՍՈՒՄԻ ԾՆՈՒՆԴՐ ԱՆԱՎԱՐԶԵՑՈՒ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Վերելում յիշատակեցինք Անաւարզեցու բանաստեղծական նախասիրութիւնները: Բացի չափածոյ ու յանգաստեղծման լինելուց Անաւարզեցու շարականները եզրակապով են օժտուած լինում: Դրանց միջոցով մերթ իմանում ենք, թէ ով է հեղինակը, մերթ պարզում երգերի ստեղծման շարժառիթը, ժամանակը՝ ինչպէս «Տնօրէնութեան եւ անուանադրութեան» կանոնում: Անձինքում նշելով Կոստանդին Առաջինի անունը՝ հեղինակն ակամայ թուագրել էր շարականները:

Կոստանդին Ա թագաւորի խնդրանքով են գրուել նաեւ Ղ. Ալիշանի ցուցակում 4-6 տեղերում յիշուած «Ծննդեան Ա. Բ. Գ. աւուր» կանոնները: Այժմ դրանք կարող ենք ընթերցել Ե ձեռագրում, աւելի ճիշտ՝ միայն Ա եւ Գ օրերի շարքերը մասամբ: Համաձայն վերելում արուած մեր նշումների, արդէն պարզ պիտի լինի, որ այս գրչագրից կանոնների լրի վերծանումն ան-

հնար է: Առայժմ լոկ դրանց բանակապերը կարելի է ամբողջութեամբ կարդալ, որովհետեւ գրիչը սկզբնատառերը կարմիր բանաքով է գրել, եւ չնայեա՞ծ խունացածութեանը, այնուամենայնիւ կարելի է կարդալ, օրինակ, «Ծննդեան Բ. աւուր» երգաշարի եզրակապը՝ «Կոստանդին արքայն խնդրեաց» (Ե, էջ 22բ-26բ): Ցաւօք սրտի, ներկայ կանոնից ոչ մի տող հնարաւոր չէ ընթերցել. էջերը գրեթէ սպիտակ են: Ի տարբերութիւն «Ծննդեան Բ. աւուր» կանոնի «Ծննդեան Ա. աւուր» շարականները դժուարութեամբ, բայց կարելի է կարդալ (Ե, 10ա-22բ): Վերջինի բանակապը քիչ է տարբերում «Ծննդեան Բ. աւուր» շարքում յօդուածից, «Փառք, որ սիրով խնդրեաց արքայն Կոստանդիանոս»: Այստեղ 40 տնից բաղկացած մի շարքի հետ գործ ունենք, որից ընթեռնելի են «խնդրեա» տառերով սկսուող տները:

Կանոնի վերնագրից, ինչպէսեւ մեզ հասած տներից պարզ է, որ այս երգերում Անաւարզեցին վերարատադրել է Յիսուսի ծնունդը:

Նոյն սկզբունքով է գրուած նաեւ «Ծննդեան Գ. աւուր» կանոնը:

ԿԱՆՈՆ ԱՄԵՆԱՍԱՔՐՈՅ ՅՐՈՒԹԵԱՆ ԵՐԱՆՈՒԴԻՈՅ ԿՈՒՄԻՆ ՄԱՐԻԱՄԱՅ

Դատելով բանակապից (Լ էջ 131-138)՝ սրանք եւս գրուած են Կոստանդին Ա թագաւորի խնդրանքով. «Կոստանդին արքայ Հայոց է՞ Գրի»: Սակայն բանակապը նաեւ տարակուսանք է հարուցում: Ըստ երեւոյթին կանոնը շարունակութիւն է ունեցել, չէ որ հեղինակի անունը (կասկածից վեր է, որ եզրակապի վերջում նրա անունն է) կիսատ է մնում: Նոյնի օգտին է խօսում կանոնի վեց երգից բաղկացած լինելը:

Ընդգծենք նաեւ, որ այս բանաստեղծութեան մէջ նկատելի են յանգի եւ չափի կատարեալ նմուշներ. (տե՛ս Տէրյերկնից 2 տուն):

**ԿԱՆՈՆ
ԸՆԾԱՅԵՑՄԱՆ ԱՍՏՈՒԾԱԾՆԻՆ**

Լ, էջ 139-150, Ե, 4ա-9ա: Բանակապը՝ «Գրիգորի է երգս այս»: Ուշագրաւ է օրինակ Տէր յերկնիցի 2-րդ տունը, որ երկրորդ Օրինութեան 9-րդ տան հետ որոշակիօրէն նոյնանում է, բայց եւ աչքի է ընկնում պատկերաւորութեամբ:

**«ՇԱՐԱԿԱՆՔ
Ի ՏՕՆԻ ԱՍԵՆԱՍՐԲՈՅ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵԱՆ
ՔՐԻՍՏՈՍԻ ՏԵԱՆՆ ՄԵՐՈՅ»
ԵՐԳԱՇԱՐԸ**

Հայ շարականագրութեան մէջ մեծ է յատկապէս Ներսէս Շնորհալու աւանդը: Նրա ջանքերով լրացուեց պակասը, եւ գրեթէ բոլոր տօների համար ստեղծուեցին համապատասխան երգաչարեր, որ բառացիօրէն պիտի զարդարէին մեր եկեղեցու շարակնոցը: Կարելի է ասել, թէ Շնորհալին իր ծրագիրը լիովին իրականացրեց. նրանից յետոյ սակաւաթիւ շարականներ են աւելացուել, այսինքն հատուկեմտ տօներ էին մնացել առանց համապատասխան օրհներգերի: Ելնելով սոյն դատողութիւններից՝ շատ զարմանալի է, որ Շնորհալուց հարիւր տարի յետոյ մէկ այլ ստեղծագործող անհրաժեշտ է համարել առնուազն երեսուն կանոն շարական յօրինել: Սակայն Գրիգոր Անաւարզեցու հանգամանքն այլ է: Արտաքուստ նրա ծրագիրը նոյնն էր, ինչ Շնորհալունը. ստեղծել շարականներ առանց երգերի մնացած տօների համար: Բայց ուրիշ էր հարցի էութիւնը. այս անգամ ստեղծագործութեան նիւթը կարողիկ եկեղեցու տօներն էին: Իբրեւ օրինակ բերենք Լ ձեռագրում պահպանուած երգաչարը, որի վերնագիրն իսկ բաւականին խօսուն է՝ «Շարականք ի տօնի անենասրբոյ մարմնոյ եւ արեան Քրիստոսի Տեառն մերոյ»։ Լ 107-114 (հարկ է շեշտել, որ այսպիսի վերնագիր չկայ Ղեւոնդ Ալիշանի ցուցակում): Նման տօն չի նշուած Հայ Առաքելական եկեղեցու օրացոյցներում: Երգաչարը բանակապ չունի, բայց հեղինակի

ինքնութեան վերաբերեալ տեղեկութիւն ենք ստանում վերնագրից առաջ գրուած հետեւեալ խօսքերից. «Նորին Գրիգորի ասացեալ...»: Հաշուի առնելով, որ ձեռագրում մինչեւ այս կանոնն էլ արտագրուած երգերը Անաւարզեցունն են, բոլորովին գերծ ենք մնում կասկածներից: Բայց նոյնիսկ գրիչի գրանցման բացակայութեան դէպքում էլ թերեւս դժուար կլինէր Անաւարզեցու ոճը շփոթել.

*...Հարբ եւ Ոգուով ի քեզ սքօղի իրակապէս
Եւ քեւ ի մեզ օրագայի ճշմարտապէս...*

Փաստօրէն գործ ունենք Ալիշանի չգրանցած մէկ այլ երգաչարի հետ, ինչը կրկին անգամ հաստատում է Մաղաքիա Օրմանեանի եւ Արշակ Մաղոյեանի՝ վերետում բերուած խօսքերը:

Երգերը հիմնականում յանգաւոր են ու կանոնաւոր տաղաչափութեամբ՝ կառուցուած նորկտակարանական պատկերների եւ աստուածաբանական կաղապարների միափոխմամբ:

Բանաստեղծութիւնների նիւթը խիստ կաղապարային է: Այսինքն բանաստեղծի խօսքը, եթէ կարելի է ասել, «շրջանակուած» է. այստեղ նա ազատութիւն չունի, եւ նրա ձիւղքը կերեալ միայն արտայայտութեան ձեւի մէջ: Անաւարզեցու յանգաստեղծման սովորութիւնների մասին խօսուել է եւ դեռ առիթ կլինի խօսելու, բայց կուզենայինք մի գողտրիկ օրինակ ներկայացնել ընթերցողի ուշադրութեանը.

*Ընթրիս բազմի՛ նոյ աշակերտս,
Մահնանելով զհրաշակերտս...*

Սա կարելի է համարել հայ շարականագրութեան մէջ տեղ գտած բաղադրական յանգաւորման լաւագոյն նմուշներից մէկը:

Հրաչայի յանգաւորում ունի նաեւ «Նուագ առ սրբագնորիւն ամենասրբոյ մարմնոյ եւ արեան Տեառն» գողտրիկ երգը, որի տողատունն իսկ դժուար է յաճախ կրկնուող վերջաւորութիւնների պարագայում: Այդ է պատճառը, որ բերում ենք առանց տողատման:

Երկու ստեղծագործություններում էլ հեղինակի խօսքը քառականաչափ սահուն է, եւ կարող ենք ասել, որ գեղարուեստական տեսակետից այս կանոնը (Նուագը իր տեսակի մէջ մեզ յայտնի միակ գործն է) լաւագոյններից մէկն է Գրիգոր Անաւարզեցու աստուածաշնչեան թեմաներով գրուած շարականների շարքում:

ԳԼՈՒԽ Բ

ԳՐԻԳՈՐ ԱՆԱՎԱՐԶԵՑՈՒ «ԱԶԱՏ» ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Այստեղ պայմանականօրէն «ազատ» ենք անուանում այն ստեղծագործությունները, որ նուիրուած են այս կամ այն սրբին՝ տարբերելու համար նախորդ գլխում դիտարկուած շարականներից, որոնք առնչուած են Յիսուսին ու նրա մերձատրոներին, եւ որոնց նիւթը Նոր կտակարանին է վերաբերում:

«ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ» ԿԱՆՈՆԸ

Գրիգոր Անաւարզեցու ազատ գործերը յամենատարաբար ծաւալուն են: Դ. Ալիշանն իր ցուցակում «Ամենայն սրբոց» կանոնի մասին ասում է. «Ամենայն սրբոց». այբուբենական, վերջին երեք տունքն նուիրեալ են սրբոց Անարծաթիցն, քանզի առ Լատինս ի նմին ատուր (1 նոյեմբեր) կատարի տօն Ամենայն սրբոց եւ սոցա առանձինն»¹⁴⁶: Այժմ մենք հնարաւորութիւն ունենք տեսնելու Ալիշանի խօսքերի ճշտութիւնը. կանոնը հասել է մինչեւ մեր օրերը եւ տպագրուած է՝ ԱՄՏ, էջ 145-149: Իսկապէս, ըստ հերթականութեան, Անաւարզեցին այբուբենի բոլոր տառերով մէկական տուն է նուիրել սրբերին, այսինքն 36 տուն՝ Այբ-ից Քէ: Բայց եւս մէկ տուն կայ՝ եզրափակող, որ մի գողտրիկ հանելուկ ունի: Այս մասին ոչինչ չի ասել Ալիշանը, իսկ Ամատունին միայն կրկնել է նրա խօսքերը: Եւ հիմա տողատելով վերջին տունը, սկզբնատառերով կարող ենք կարդալ Անաւարզեցու մի ուրիշ քանակապ:

Տովորաբար եզրակապ կազմող տառը գրիչները աչքի ընկնող էին դարձնում. քայց այս տան քանակապն ընդգծուած չի եղել Ամատունու օգտագործած աղբիւրում, դա քացայայտ է, որովհետեւ Ամատունին տեղեակ չէ, թէ գործ ունի ակրոստի-

քոսի հետ: Տառերն ընդգծուած չեն նաև և ձեռագրում. որ կանոնը նոյնպէս ընդօրինակուած է (էջ 119-130): Սակայն բանակապը կասկած չի յարուցում: Նրա առաջին տառ Հ-ն ապացուցման կարիք բնաւ չունի, քանզի սկզբնագիր է: «Լերջին տառի հարցում՝ Մ, եւս կարող ենք համոզուած լինել, որովհետեւ այդ կրկնակը նոյնն է եւ նախորդ տներում (տես Մանկունք 1 եւ 2-րդ տներ): Մնացեալ շորս տողերը համապատասխանաբար նկատուում են մտքերի ասարտներով եւ նոր մտքի սկիզբ են հանդիսանում: Յատկանշական է «իւսեալ» բառի կիրառութիւնը. սովորաբար Ի-ով սկսուող բառերը բանակապերի ժամանակ են ի յայտ գալիս: Հաշուի առնելով վերը ասուածը՝ կարող ենք ընդունել, որ իրօք բանակապ կայ. եւ այն հիւսում է յատկապէս Անաւարդեցոյ բանակապերում յաճախ հանդիպող ՀԵԹՈՒՄ անունը:

Անդրադառնանք Ալիշանի միւս մտքին, որ վերջին երեք տները՝ Մանկունքն ամբողջութեամբ, նուիրուած են Անարծաթ բժիշկներին: Մանկունքի երկրորդ տան մէջ յիշատակուում են նրանց անունները: Բայց Մանկունքից բացի Դամիանոսի եւ Կոզմասի անուններին հանդիպում ենք նաեւ Ողորմեայի չորրորդ տան մէջ: Կոզմաս եւ Դամիանոս անուններով Անարծաթ բժիշկների երկու գոյգ է եղել. որ եւ Ողորմեայի տնից անհնար է պարզելը. թէ խօսքը որ եղբայրների մասին է յատկապէս:

Երգերի շարադրանքը կուռ է. սահուն եւ գեղեցիկ. յանգաւորումն ու չափը գրեթէ կատարելութեան են հասցւած: Հանդիպում են առաջին հայեացքից թոյլ թուացող յանգեր.

*Որպէս տաճարին զսրբութիւն սրբոց
Յուցեր զնա սուրբ ամենայն սրբոց:*

Անշուշտ նոյն բառը կրկնելը յանգ ստեղծելու ամենա-հեշտ. ուստի ամենահասարակ ձեւն է: Սակայն նման օրինակներով չի կարելի պատկերացում կազմել Անաւարդեցոյ մասին, որ յանգի մեծագոյն վարպետներից է: Արդէն անդրադարձել ենք նրա ոճին. արձակ խօսքում բառերի կրկնութիւն կամ արմատների կրկնութիւն: Կանոնում այդպիսի օրինակներ եւս կան. «պարագլխոյդ պար բոլորեալք» Ող 2, «գԲանի՛ն ուռկան ի բազմապատիկ տան» Հցն 2 եւ այլն: Անաւարդեցոյ

տվարութիւնը կրկնակի յանգի հեռաւոր շորշոփ կարելի է համարել: Հեղինակը յանգերով համապատասխանեցնում է ոչ միայն տողերի վերջին բառերը, այլ նաեւ նախավերջինները: Սկզբում դա թոյլ ընդգծուած երեւոյթ է, որ կարելի է պատահականութիւն համարել, եթէ օրինակները եզակի լինեն.

*Ճզնաւորաց հոյլքն նեղութեամբ
Եւ սուրբ կուսանաց խումբն զգաստութեամբ:* Գ

*Ղեկավարեալ Ոգոյն զօրութեամբ
Տապան աշխարհի կրկին նորոզման:* Գ

*Ռամից հանուրց են հրաշայի
Որք ծրի առան եւ ետուն ծրի
Սուրբ Անարծաթքն սքանչելի:* Ող 4

Ստիպուած ենք բերել այլեւայլ օրինակներ՝ մատնանշելու համար, որ նախավերջին բառերի տառերը պատահականութեան արդիւնք չեն.

*Պայծառ բանին պտղայի
Եւ վկայութեամբ խառն երամի
Փրթեալ արեամբն ծաղկայի... Օղ 3*

*Վասն Բանին վկայք զինեալք
Եւ մարտիրոսք, որք խաչեցեալք... Օղ 9*

Վերեւում բերեցինք նոյն բառի կրկնութեամբ յանգաւորելու օրինակ. նախավերջին բառերի հետ կապուած նմանատիպ դէպքերը, թերեւ, հաստատում են Անաւարդեցոյ քայլերի ոչ պատահական, նպատակամղուած լինելը.

*Չեօք ծննդօք զորս երկնեցիք,
Պտղօք բարեաց զորս տնկեցիք... Օղ 7*

*Անճառ զբազում վարձս ընդ կալեալք
Յօղեալ բոլորդ ընդ մասունս... Տյ 6*

*Աստուածայնոյ քոյ տաճարի.
Կոյս մօր Որդոյ քոյ եւ ծնօղի... Օհ 1*

Եւ վերջապէս, օրինակներ, որ ամբողջովին վերացնում են կասկածները.

*Չեօք օրինութիւն աղբիւրացաւ.
Ուխտի բնութիւնս արժանացաւ... Օհ 8*

*Աղանացեալք երամովին
Եւ ձագախառն ելեալ յերկին... Օհ 11*

*Շնորհիւ դասակցեալք ոգիք
հրեշտակաց գնդին
Ժողովք սրբոց անդրանկաց յերկրին:*

*Ժուժկալութեանք զմարմին սպանեալք-
Յայրս եւ ի ծերպս երկրի ճգնեալք՝
Սուրբք ճգնաւորքն. հարք ի շնորհե
Հրեշտակացեալք ի մարդկանէ... Օհ 10*

Կարելի է համոզուել, որ երեւոյթը պատահականութեան արդիւնք չէ, եւ հաշուի նստելով այս հանգամանքի հետ, նորից կարդանք տունը, ուր հեղինակը միայն վերջին եւ նախա-վերջին բառերը չի յարձարեցրել, այլ նաեւ.

*Չեօք ծննդօք զորս երկնեցիք,
Պտղօք բարեաց զորս տնկեցիք,
Այսօր բոլոր սրբօք մաղբել
Մատիք առ Տէր բարեխօսել...*

Գրիգոր Անաւարզեցիւն նման միջոցների յաճախ է դիմում, որ գուցէ կարելի է յանգախաղ անուանել: Բայց պէտք է նշել, որ այսպէս հեղինակը իրեն կամովին սահմանափակման է ենթարկում, եւ դրանից անկասկած տուածում են երգերը բանաստեղծական տեսանկիւնից:

**«ՀՈԳԻՌՅՆ ՍՐԲՈՅ ԳԱԼՍԵԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ԱՒՈՒՐ»
ԿԱՍ
«ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ» ԿԱՆՈՆԸ**

Այս կանոնը յիշատակելու առիթ արդէն ունեցել ենք: Սարգիս Նրեցը որպէս վերնագիր բերում է «ՁՀոգոյն սրբոյ գալստեան ութերորդ ատորն», իսկ Ալիշանը՝ «Ամենասուրբ Եր-լայրոյութեան», որով եւ առաջին անգամ հրատարակուեց եր-գաչարը: Վերահրատարակելիս Ամատունին վերտառութիւն-ները յիշում է միաժամանակ (ԱՄՏ 108): Լ ձեռագրում գտնում ենք հարգի բացատրութիւնը «Կանօն Ամ[ենա]ս[ր]բ[ո]յ Երրոր-լայութեան. որ տօնի յութներորդում ատուր գալստեան Ոգոյն սրբոյ» (161-167):

Հետաքրքրական է կանոնի բանակապը: Այս մասին Գ.ր. Յակոբեանը գրել է. «Հոգեգալստեան ութերորդ ատուր» կանոնը նոյնպէս ծայրանուն է՝ բաղկացած հինգ բազմազան շարականից, որոնց տների սկզբնատառերը յօդում են՝ «Յո-հաննես որեր (վերջին բառն անհասկանալի է մեզ համար) արքայն խնդրեաց»¹⁷: Բանակապերում յաճախ անհրաժեշտ տառի փոխարէն կիրառում էր նրա «նմանակը»: Է եւ Ե ձայ-նաւորների խառն գործածումն յիշելու համար բերենք «Յո-հաննես» բառի գրութիւնը նոյն բանակապից եւ ճիշտ տառերը տեղադրելով կկարդանք՝ «Յոհաննէս որ էր արքայն, խնդ-րեաց», այսինքն Անաւարզեցիւն կանոնը գրել է Յովհաննէսի խնդրանքով, որն արքան էր: Այս անգամ շարականագիրը գործածել է Հեթումի հոգեւոր անունը:

Լ ձեռագրում Գործքի 3-րդ տան միջից բացակայում է շորրորդ՝ Հոգու բխումը նկարագրող տողը, որ դաւանա-բանական լուրջ վեճերի դրդապատճառ է հանդիսացել:

**«ՀԻՄԱՆ ՅԱՌԱՔԵԱԼՍԸ»
ՄԱՆԿՈՒՆՔԸ**

Ինչպէս նշում է Մ. Աբեղեանը. «Բացի Աւետարանի պատմութեան ուսումնից՝ հոգեւոր երգը յաճախ միաժամանակ

ծառայել է նաև դաւանաբանական ուսում տալու»¹⁴⁸: Անաւար-
զեցու նմանատիպ շարականներից է այս կանոնը:

Նկատի ունենալով Անաւարզեցու նուրբ քաղաքակա-
նութիւնը բնական կլիմի կարծել, որ դաւանաբանական բնոյթի
իր շարականներում նա պիտի արտայայտէր կաթողիկէ եկե-
ղեցու տեսակէտները: Այս առումով ուշագրաւ է Հիման յառա-
քեալսն մանկունքը (ԱՄՏ 155)՝ ձօնուած Տիեզերական ժողո-
վներին, ինչպէս երեսում է երգից (տե՛ս առաջին տուն):

Բանաստեղծութիւնն ամրակուռ ամբողջութիւն է կազ-
մում: Սակայն եթէ եօթերորդ եւ ութերորդ տները իրար միտք են
շարունակում, ապա հնարատր է, որ Հոգու աշտանակից վա-
ռուած եօթ ճրագները Փոքր եւ Մեծ Հայքերից գնացած պա-
տուիրակներն են: Հնարատր վարկած է նաեւ այն, թէ հեղի-
նակը մկատի ունի եօթ տիեզերական ժողովները:

«Տնօրէնութեան եւ անուանադրութեան Տեառն» կանո-
նը, որ վերետում արդէն քննարկուեց, վառ կերպով ապացուցում
էր, որ կանոնից կարող է մի երգ պակասել, եւ պակասը չի
անդրադառնայ բանակապի վրայ: Բացառուած չէ նաեւ այն
տալիքերակը, որ կանոնից միայն մի կարգ բանակապ ունենայ,
ասենք, այս Մանկունքը, ուստի Ամատունու գրքում ընդգծուած
«Հեթմո ի Գլխոյրէ» ծայրակապը չի կարելի ապացոյց հա-
մարել երգի՝ որեւէ կանոնի մաս լինելու կամ չլինելու օգտին:
Բանակապում Հեթում արքայի անուան կիրառումը օրինաչա-
փութիւն է, որովհետեւ յիշեցնում է նրան ուղղուած նամակում
տեղ գտած «Է՛ ժողովներն» ընդունելու առաջարկը: Գրանից
բացի, խօսք բանալով բանակապի վերաբերեալ, նշենք,
երեքական տուլի բաժանելով տները դրանց երկրորդ տողերի
առաջին տառերով կապում է «Հէթոմ Նիկիէ Բ», որ դժուար է
համոզուածութեամբ պնդել (նախավերջին տունն անկասկած
աղճատուած է): Նիկիայի Բ ասելով, կարելի է պատկերացնել
եւ երկրորդ Նիկիական ժողովը կամ նրա կանոնները¹⁴⁹, մեր
եկեղեցուց ընդունուած, եւ Նիկիական երկրորդ ժողովը՝ թով
եօթերորդը Տիեզերականների շարքում, ու բնականաբար
հայոց կողմից մերժուած: Եթէ յիշենք Ալիշանի գրած վերնա-
գիրը՝ «Է ժողովոց», պարզ է դառնում, որ Անաւարզեցին պիտի
գովերգած լինէր բոլոր եօթ ժողովները: Քիչ այլ է կանոնի՝ Մ.
Օրմանեանի յիշատակութիւնը. «Եօթներորդ ժողով, որ է

Նիկիոյ Բ»¹⁵⁰: Անյայտ է կանոնը նուիրած է եղել եօթ տիե-
զերական ժողովների՞ն, թէ միայն եօթերորդին: Անորոշ է նաեւ,
թէ «Հիման յառաքեալսն» շարականը մի մասն է վերոյիշեալ
կանոնի, թէ առանձին երգ է: Այս հարցերը միմիայն նոր
բնագրերի յայտնաբերումով կպարզուեն թերեւս:

Բայց ամենահետաքրքրականը շարականի վերջին
տունն է: Այստեղ եւս Անաւարզեցին չի դաւաճանում իր սովո-
րութեանը եւ խօսքն արարտում է Աստուածածնի փառա-
բանութեամբ:

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ ԿԱՆՈՆԸ

Բազմիցս ընդգծել ենք, որ Գրիգոր Անաւարզեցին
վատ ուսումնասիրուած հեղինակ է: Յաճախ գիտնականները
Անաւարզեցու անունը տալիս են հարկադրաբար, առանց յուրջ
ուսումնասիրելու նրա ստեղծագործութիւնը, կեանքը, ժամա-
նակը: Այս կապակցութեամբ կարելի է յիշել Կ. Մուրադեանին:
«Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցօրեան» հայ մատենա-
գրութեան մէջ» գրքում նա ուղղակի ստիպուած պիտի յիշէր
Անաւարզեցուն՝ «Բարսեղ Կեսարու եպիսկոպոս» կանոնի առ-
թիւն¹⁵¹: Անշուշտ. Բարսեղ Կեսարացուն վերաբերող բազում
յիշատակութիւններ կան հայ գրականութեան մէջ, եւ Կ.
Մուրադեանն անկարող էր խուսափել սխալներից: Սակայն
սխալը բացառուած կլինէր Անաւարզեցու պարագայում, եթէ
հեղինակը գոնէ մինչեւ վերջ կարդար շարականի տունը, որ
մտադիր էր մէջ բերել:

Ամբողջութեամբ ներկայացնենք Կ. Մուրադեանի խօս-
քը. «Վարքագրական տուեալների հիման վրայ է գրուած նաեւ
«Շարական սրբոյն Բարսեղի հայրապետի» խորագիրը կրող
օրհնութիւնը, որի հատուածների գլխատառերը յօլում են
ԱՐ.ԶԱ ՀԵԹՈՒՄ: Օրհնութեան հեղինակ է ենթադրուում Գլխո-
գոր Անաւարզեցի կաթողիկոսը (այստեղ ուսումնասիրողը 122
համարով տողատակում յիշում է Ամատունու գիրքը՝ ԱՄՏ 153-
156-Գ. Մ.): Ինչպէս յուշում է օրհնութեան ստորեւ բերուող
հատուածը, այն գրուել է Կեսարացու ծննդեան տօնի առթիւ.
«Այսօր գոր ծնար մարդ ճշմարիտ բնութեամբ, հրեշտակք
յերկնից Աստուած ծանուցին զէիցս արարիչ, ներմարդանալ

հարքն ի յերկրի քեւ քարոզեցին»։ Օրինութեան հեղինակը, անշուշտ, յաւատեղեակ է Կեսարացու եկեղեցական գործունէութեան մանրամասներին, յատկապէս քրիստոնէութեան տարածմանն ունեցած նրա մասնակցութեանը եւ արիոսականութեան դէմ մղած յաղթական պայքարին, ուստի եւ գրում է.

*Ոգոց սովուն մահացու,
Քասիլիոս նոր հացատու,
Չքան հաւատոյն սփռեցեր,
Չաղտ հերժուածողաց վանեցեր»¹⁵²։*

Շարականն ըմբռնելու համար նախ կարելոր է ճիշտ տողատել խնայողութեան նպատակով կողք կողքի շարուած տողերը։ Կ. Մուրադեանի տողատման մէջ մի բառ անհասկանալի է դառնում։ Ի՞նչպէս հասկանանք «ճերմարդանայ հարքն ի յերկրի» միտքը՝ «երկրի վրայ հայրերը մարդու կերպարանք առան (°)»¹⁵³։ Մինչդէռ պատկերը կփոխուի, եթէ տողատենք այսպէս (բերում ենք ամբողջ տունը).

*Այսօր, գոր ծնար մարդ ճշմարիտ բնութեամբ,
հրեշտակք յերկնից Աստուած ծանուցին
Չէիցս Արարիչ ներմարդանայ,
հարքն ի յերկրի քեւ ծանուցին.
Ընդ նոսին այսօր, զքե՛զ, Կոյսոյ, երանենք։*

Բառերը նոր կարգի բերելուց յետոյ պարզում է, որ ոչ թէ հայրերը, այլ էակներն Արարիչն է մարդու կերպարանք առել։ Բայց եւս մէկ հարց կայ։ Ըստ Կ. Մուրադեանի «ծնար» բայը պէտք է հասկանալ «ծնուեցիր»։ Մակայն «ծնար»-ը կազմութեամբ կրաւորական չէ, այլ պարզապէս կրաւորածէ խոնարհման է ենթարկուած¹⁵⁴, ուստի պէտք է հասկանալ «ծնեցիր»։ Եւ տունը, որ Կ. Մուրադեանի պատկերացմամբ ուղղուած էր Բարսեղ Կեսարացուն (Այսօր, որ ծնուեցիր մարդ ճշմարիտ բնութեամբ), դառնում է հասցեագրուած Աստուածածնին (որ ծնեցիր)։ Տան՝ Աստուածածնին ձօնուած լինելը երեւում է նաեւ կրկնակից (քեզ ենք երանում, Կոյս), որ ուսումնասիրողը բաց է թողել։ Վերջինս մնան վրիպում չէր թոյլ տայ, եթէ ծանօթ լինէր Անուարգեցու սովորութեանը. շարականն

ստարտել Աստուածածնի փառաբանութեամբ։ Գիտարկուող տունը Օրինեբութեան հինգերորդն է, եզրափակում է շարականը. բայց համապատասխան գրանցում չկայ լուսանցքում։ Գրանցում չկայ եւ դրանից չորս տուն յետոյ, սակայն կրկին տունը սուրբ Կոյսի բարձրարարումն է։ Ուրախալի է, որ գրանցումները կան Ե ձեռագրում (էջ 37բ-41բ), որի համադրութեամբ կան ենք հետագայ յղումները։

Անբացատրելի է բանասէրի եւ այս միտքը. «Օգտագործուած են նաեւ Կեսարացու զբասրտութեան, սրտացաւորեան ու կենսագրական որոշ իրողութիւններ...»։ Կանոնի մէջ կենսագրական միակ նիւթը Կեսարացու՝ սուրբ Գրքերի մեկնիչ լինելու հանգամանքն է.

*Այսօր զկանոնքն հաւատոյ
Կարգեաց սուրբ եկեղեցոյ։*
(Տյ 2-րդ տ.)

Թէ ինչ «իրողութիւններ» նկատի ունի Կ. Մուրադեանը՝ զգացում է յատկապէս «որոշ» ճշգրտող բառից։ Բարսեղ Կեսարացուն ձօնուած շարականներում Անուարգեցին պարզապէս փառաբանում ու բարձրարարում է քրիստոնէութեան ջատագովին, եւ թում է՝ հեղինակը եկեղեցական թոյլատրելի սահմաններից դուրս է գալիս.

*Ի՛ծեալ ցաւոց փարատիչ,
Քաղցեալ անձանց կերակրիչ,
Գթածդ այցելու,
Սրբոց հայր եւ խնամածու։*
(Շարական հ. 2, 2րդ տ.)

Ճիշտ է, Կեսարացին իր ուրոյն տեղն է զբաղեցնում սրբերի շարքում, բայց «սրբերի հայր եւ խնամակալ» միայն Աստուած կարող էր կոչուել։ Եթէ չլինէր Ե ձեռագիրը, դժուար կլինէր բացայայտել աղճատումը, որ երբեմն մէկ տառով մէկ նախադասութեան իմաստ է փոխում։ Այս դէպքում եւս բոլորովին ուրիշ պատկեր է ստեղծում, երբ սրբոց կարողալու փոխարէն կարդում ենք որբոց։

Թերևս կանոնի ամենագեղեցիկ հատուածը բերուող է, որ ներշնչուած է «Երգ երգոց»-ով.

*Թափեալ եղ զանուն Զրիստոս բուրեալ,
Որ հաւատոյ եւ վարուց թեօք այսօր ամբարձեալ,
Որպէս մեղոյ զաստուածաշունչ
որախտիոյ ծաղիկս հաւաքեալ:*

ԳԵՈՐԳ ԶՕՐԱՎԱՐ ԿԱՆՈՆԸ

Նախորդ շարականներում տեսանք, որ Գրիգոր Անարպեցի սովորաբար բանակապով է օժտում իր երգերը, որի միջոցով հեշտութեամբ կարելի էր գուշակել հեղինակին: Գեորգ Զօրավար կանոնը նոյնպէս բանակապ ունի՝ «Գրիգորիոսի առ Գեորգէոս Վկայ»: Սակայն չնայեա՞ծ բանակապը կոչուած էր անմար պահելու հեղինակի անունը, այն, աւելի շատ, շփոթութեան պատճառ դարձաւ: Չէ՞ որ Անարպեցիին Գրիգոր անունով միակ շարականագիրը չէ, եւ կանոնը վերագրուեց մէկ այլ կաթողիկոսի՝ Գրիգոր Պահլաւունին: Շարականագիրը երեւի երկար ժամանակ հաստատ չէր որոշուի, եթ չլինէր Ս. Ամատունին, որ հիմնաւորել է, թէ ումն է կանոնը՝ «Երկրորդ շարականի՝ Գովեալ գնդից իւր սարօք. հեղինակն է Շնորհալու երեց եղբայր Գրիգոր Փոքր Վկայասէր: ...Հ. Ալիշան Զօրավարիս կանոնը ընծայում է Անարպեցի Գրիգոր է կաթողիկոսին... Բայց շարականներիս գրութիւնը հեռու է Անարպեցու կոչոյ եւ պոչոյ լեզուից. կարդա՛ համար 6» (ԱՄՏ 46): Իհարկէ Անարպեցիին չէ հեղինակը «Գեորգ Զօրավար» կանոնի, որովհետեւ տուեալ դէպքում այս երգը նոյնպէս պէտք է համեմուած լինէր նրա լեզուի «կոչտութեամբ եւ պոչտութեամբ»: Իսկ վերջին ապացոյցը ամենագորեղն է՝ «կարդա համար 6», որ մեր դիտարկած «Տնօրէնութեան» կանոնն է: Ուստի Ամատունու խօսքերի հակառակն ապացուցելու համար իր իսկ տրամաբանութեամբ շարժուենք եւ «Գեորգ Զօրավարին» ձօնուած երգերը համեմատենք միայն եւ միայն «Տնօրէնութեան» կանոնի հետ:

Հարկ է նշել, որ Ամատունին միակը չէր. մնաց կարծիք

արտայայտել են եւ ուրիշ գիտնականներ: Դժուար է հաւատալ. թէ այդպէս մտածող եւ իր աշխատութեան մէջ Գրիգոր Պահլաւունուն ամբողջական գոյիս նուիրած Գր. Յակոբեանը կարող էր սխալուել: Ընդգծենք միայն, թէ Գր. Յակոբեանին չի յաջողուել ճիշտ նշել նոյնիսկ կանոնի շարականների տների թիւը. որ վրիպակի հետեւանք չէ, այլ՝ տները հաշուելու փոխարէն իր գրանցած բանակապի տառերը հաշուելու արդիւնք¹⁵⁵:

Նշել են նաեւ գիտնականներ, որ հարցին յոյժ զգոյշ են մօտեցել: Օրինակ, Մ. Օրմանեանը հաստատում է, թէ Անարպեցին կանոն է նուիրել ս. Գեորգին, բայց ուսումնասիրողի մտքից դիւրին չէ իմանալ, անյայտ է մնում՝ խօսքը Ամատունու տպագրածի՞ մասին է, թէ՞ այդ կանոնը մեզ չի հասել¹⁵⁶:

Ընդհանրապէս կանոնի ճակատագիրը շատ հետաքրքրական է: Մինչ ամբողջական հրատարակութիւնը, այն լոյս է տեսել հատուածաբար: Հնատիպ մի տաղարանում գտնուած ենք կանոնի մի մասը՝ Ողորմեա շարականից սկսած երեք երգ՝ վերնագրուած «Տաղ Գեորգայ Զօրավարի»¹⁵⁷:

Իսկ քանի՞ երգից է կազմուած ամբողջ կանոնը: Խօսելով բանակապի մասին՝ Ամատունին նշում է, որ այն յօդում է «Օհ. Հց. Ող եւ Տյ» շարականների գլխատառերով: Երիցս ճիշտ է Ամատունին, երբ չի յիշում Մանկունքը, որի բոլոր տներն սկսում են Ռ տառով, բայց բանակապի կապակցութեամբ հարկ է յիշել Գործքը: Փաստօրէն, ըստ Ամատունու հրատարակութեան, կանոնը վեց շարականից է բաղկացած: Դրանք փոքր երգեր են. Հրց, Գ՝ երեքական տուն, Ողր, Մնկ՝ չորսական, Տյ՝ հինգ, եւ միայն Օրհնութիւնն է, որ տասնմէկ տնից է բաղկացած: Բայց լոկ տների համեմատական շատութիւնը չէ զարմանալի: Օհ կարգի առաջին վեց տունը տողատելով ըստ գրքում եղած յատուկ կետադրութեան՝ ստանում ենք քառատողեր, իսկ յետոյ տները դառնում են վեց կամ եօթ տողանի: Սա նոյնպէս զարմանալի չէր թուայ, եթէ փոխուած չլինէր վանկերի քանակը. սկզբում կիրառուող 30-40 վանկանի տներին փոխարինում են 55-70 վանկանիները: Արդեօ՞ք լուսանցքի գրանցումը եւս չպէտք է փոխուի: Արդեօ՞ք երկու շարական չեն միացուած: Վեցերորդ տնից յետոյ նոր շարականի սկսուելը զգացում է նաեւ կրկնակների (բառը կիրառում ենք վերապահումով) փոփոխութիւնից (տե՛ս 3, 4, 5-րդ տները):

Իսկ վեցերորդից սկսած կրկնակը միշտ նույնն է՝ «Բազմագոյն սորա շարչարանօք, Տէր, կեցո զմեզ»: Թերեւս այսքանը բաւական է համոզուելու համար, թէ վեցերորդից յետոյ նոր շարական է, բայցեւայնպէս բերենք մի վերջին ապացոյց, որը եւ հաստատումն է այն մտքի, թէ կանոնը գրել է Գրիգոր Անարպեցիին: Նախապէս խոստացել էինք համեմատութիւններ անել յատկաբար «Տնօրէնութեան» կանոնի հետ, ուստի յիշենք մի գեղեցիկ հանգամանք: Վերոյիշեալ կանոնում Անարպեցիին շարականները վերջացնում էր արտաքնապէս սովորական տնով, որ ձօնուած էր յինում Աստուածածնին: Հելինակի այս սովորութիւնը ուշ շրջանի շարականագրութեան մէջ անզուգական, կարծես իւրօրինակ կնիք լինի՝ դարաւոր եւ անուրանալի, եւ ուրախալի է, որ սուրբ Գեորգի շարականներում եւս գտնում ենք հելինակի գողտրիկ մտահաղացումը¹⁵⁸: Հինգ տուն Գեորգ Զօրավարին մեծարելուց յետոյ շարականագիրը վերստին դիմում է Տիրամօրը:

*Որ դաւանեալ ի նահատակաց,
Բերկրեալ յարութեամբ Որդուոյ, Մայր փառաց,
Հայցեա վասն մեր, միշտ կոյս Տիրուհի՝
Առ քեզ մաղթանօք Գեորգէոսի:*

Անարպեցիին (այժմ դա կարող ենք պնդել լիակատար համոզուածութեամբ) նորից, իր սովորութեան համաձայն, աղօթում է ս. Կոյսի պատկերի առջեւ ու ոչ միայն ընդգծում, որ Օհ շարականն արարտուեց, այլեւ պաշտպանում իր «հելինակային իրաւունքները»: Յիշենք նաեւ, որ Հգ կարգին նախորդող շարականի վերջին տունը նույնպէս Տիրամօր փառաբանութիւնն է: Նախկինում մենք յիշեցինք Մ. Աբղեանի խօսքերը աստուածաշնչեան պատկերներ վերարտադրող շարականների վրայ մեկնական գրականութեան թողած ազդեցութեան մասին: Սրբերին մեծարող երգերի վրայ մեծ ազդեցութիւն են գործել նաեւ նրանց անմիջական աղբիւրները՝ վարքերն ու վկայաբանութիւնները: Որպէս օրինակ յիշենք Ներսէս Շնորհալու շարականը՝ նուիրած Գեորգ Զօրավարին (տես ԱՄՏ էջ 45): Երգը կազմուած է տասը տնից, որոնց առաջին տառերով հիւսում է «Քաջամարտիկ» բառը: Շարականը նույնպէս սկսում է նոյն բառով, սակայն դա եւ շատ այլ

օրինակներ Շնորհալու բանաստեղծական որոնումների արդիւնք չեն: Տեսնելու համար կարող ենք համեմատել «Յայսմաուրբների» համապատասխան օրերի ընթերցումների հետ¹⁵⁹: Անշուշտ, եթէ վկայաբանական գրականութիւնը ազդեցութիւն է գործել անգամ Շնորհալու վրայ, դրանից անմասն չլր մնայ եւ ոչ մի ուրիշ հելինակ, նաեւ Գրիգոր Անարպեցիին: Եւ դա պարզորոշ երեւում է, օրինակ, Տյ շարականի երկրորդ տնից:

Անարպեցու այս երգերը սիւժետային առումով ամբողջովին հիմնուած են ս. Գեորգի վկայաբանութեան վրայ: Զօրավարի մարտիրոսուելու գրեթէ բոլոր մանրամասները հելինակը բարեխղճօրէն վերարտադրել է:

Այս եւ միւս կանոնների մասին խօսելիս, մենք խուսափում էինք որեւէ գնահատական տալուց: Դա դժուար է, երբ բոլորը միաբերան քննադատում են Անարպեցու շարականները: Շատ հետաքրքիր կլինէր այժմ ծանօթանալ շրջանառութեան մէջ գտնուող՝ «Գեորգ Զօրավար» կանոնի վերաբերեալ կարծիքներին: Առաջին կարծիքը, որ արդէն բերել ենք Ամատունուց, անթաքոյց հիացմունք էր Գրիգոր Պահլաւունու ոճի նկատմամբ՝ բնականօրէն արդէն հասցեափոխուած դէպի Անարպեցիին:

Մի փոքր դժուարութիւն կայ Գր. Յակոբեանի մտքերի առթիւ. «Այս շարականը ոչ միայն պարականոնների, այլեւ Շարակնոցի մէջ եղած լաւագոյններից է»¹⁶⁰: Ինչ խօսք, լիովին ընդունելի միտք: Սակայն անցնելով առաջ՝ կարող ենք. «Այն գրուած է մարտական մօտիւներով, որը նախատիպ է հանդիսացել Ներսէս Շնորհալու «Նորահրաշ պսակաւոր» եւ Սարգիս Զօրավարին նուիրուած «Ամենասուրբ Երրորդութիւն» շարականներին: Այս շարականը օրինակ է ծառայել Շնորհալուն թեմատիկայի տեսակէտից: Վարդանանց, ս. Սարգսին նուիրուած եւ այս պարականոնի միջեւ ոճի ու ոգու նմանութիւններն ակնյայտ են» (այս խօսքերն ասելիս Գր. Յակոբեանն իր հերթին ազդուել է Ս. Ամատունուց): Ինչպիսի խօսքեր, որ անկասկած չէին հնչի, եթէ նախապէս յայտնի լինէր հելինակը: Զարմանալի ոչինչ չկայ, երբ պարզում է, թէ Անարպեցիին ազդել է իրենից դար առաջ ապրած Շնորհալու վրայ. զարմանալի է այն, որ Անարպեցիին ստեղծել է մի գոհար, չնայեա՞ծ իր լեզուի անյաղթահարելի «կոշտութեանը» եւ

«պրոշտութեանը»: Իսկ ինչ վերաբերում է երեք շարականների նմանութեանը, դա մի բանով է պայմանաւորուած. երեքն էլ մարտիրոսների մասին են, հետեւաբար նոյն բառերն ու բառակապակցութիւնները կարող էին գործածուել՝ վկայ Պետրոս Գետալարձի ս. Սարգսին ձօնուած կանոնը, որ չի յիշում Գր. Յակոբեանը:

«ԿԱՆՈՆ ԹԱՂԷՆՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ»

Դեռեւս դարակգրին Սահակ վարդապետ Ամատունու աշխատասիրութեամբ հրատարակուած գլքում իր ուրոյն տեղն է գրաղեցնում Թաղէս առաքեալին նուիրուած երգերի շարքը (ԱՄՏ 33), որ նոյնպէս վերագրուել է Գրիգոր Պահլաւունի կաթողիկոսին: Կանոնի Օրհներգ, Հարցն, Մեծացուսցէ, Ողորմեա, Տէր յերկնից, Մանկունք եւ Ճաշու շարականները գրուած են բանաստեղծական բառականին մեծ վարպետութեամբ եւ ձօնն են սուրբ առաքեալի:

Չնայեաձ կատարելութեանը, կանոնն արժանի գնահատականի տակաւին չի արժանացել: Այս խնդրին կաշխատենք անդրադառնալ հեղինակի ինքնութեանը վերաբերող որոշ ճշգրտումների փորձին զուգահեռ:

Նախ ուշադրութիւն դարձնենք, թէ ինչպէս է Ամատունին պարգել, որ երգերի հեղինակը Գրիգոր Պահլաւունին է: Այս հարցում հաւանաբար աղբիւր է հանդիսացել 1768թ. Պօլսում հրատարակուած մի Շարակնոց, որից Ամատունին քաղում է հետեւեալ տողերը. «Երկոքին շարակնոցս այստսիկ. այսինքն սուրբ առաքելոյն Թաղէսի եւ սրբոյն Գեորգայ, եղեն գտանեցեալ ի հին եւ եղծեալ շարակնոցէ ումեքէ (ընդգծումը մերն է.-Գ. Մ.), որ է գրեալ ի թուին Հայոց ՈԸ (608), եւ վասն այնր եղաք աստ»: Սրանից յետոյ անչափ բնական է հնչում Ամատունու ցանկութիւնը. «Ո՛հ, որքան տարակուսանքներ կլուծէր՝ շարականների նկատմամբ, այդ հին եւ եղծեալ շարակնոցը, եթէ մի օր յարութիւն առնէր մեր շէն եւ անշէն սրբավայրերից»: Բայց, չնայեաձ իր խօսքերին, Ամատունին հին եւ եղծեալ շարակնոցին վերագրուող 1159 թուականը հիմնարար է համարում իր դիտարկումներում: Իսկ հետագայ շարադրանքում նա առաւել կտրուկ դատողութիւններ է անում.

«...պարզ յայտնի է. որ Գեորգ Զօրավարի բովանդակ կանոնը գրել է Գրիգոր Փոքր Վկայասէր, վասնզի Գեորգ Զօրավարի կանոնի... տների գլխատառերը կապում են հայրապետիս անունը... *Գրիգորիոսի առ Գեորգիոս Վկա*»: Մինչդեռ եթէ հաշուի առնենք, որ 1159 թուականը չենք կարող լիակատար վստահութեան արժանացնել, միանգամայն կասկածելի կդառնայ երկրորդ փաստարկը, ուր առանց այդ էլ անբացատրելի է մնում, թէ ինչու բանակապում յիշուած Գրիգորը պարտադիր Պահլաւունին պիտի լինէր: Ամատունու վերջին՝ երրորդ փաստարկն ամենեւին ընդունելի չէ: Վերջինիս կարծիքով Շնորհալին իր՝ «Քաջամարտիկ» Օրհնութիւնը գրելիս, ազդուել է աւագ եղբօրից. ապացոյցը կրկնուող բառերն ու բառակապակցութիւններն են: Մոռանաձ, որ դրա հակառակը եւս հնարաւոր էր. Գրիգորը կարող էր ազդուել եղբօրից, մոռանաձ, որ հետագայ մի գրող կարող էր օգտուել Շնորհալուց (կատարեալ բանաստեղծ, որ ուրիշի ազդեցութեան կարիք չէր զգում), այլ յիշենք, որ Ամատունու բերաձ նմանութեան բոլոր օրինակները կարելի է գտնել նաեւ սուրբ Գեորգին նուիրուած «Յայնամարտեան» հատուածներում: Եւ այդ դէպքում հաստատ է, որ աղբիւրը Գեորգի վկայաբանութիւնն է:

Ի մի բերելով ասուածը՝ կարելի է համոզուել, որ Թաղէսի կանոնի՝ Պահլաւունու կողմից գրուած լինելու հիմնական փաստարկն այն է, թէ երկու երգերն էլ մի մարդու գրած են: Եւ եթէ Գեորգ Զօրավարինը գրել է Պահլաւունին, ուրեմն միւս շարականի առնչութեամբ կասկած լինել չի կարող:

Ժամանակին Ամատունին հակադրում էր «Տնօրէնութեան եւ անուանադրութեան Տեառն» եւ «Գեորգայ Զորավարին» կանոնները, մինչդեռ նմանութիւններն ակնյայտ են: Մեր մատնանշաձ երեւոյթները նկատելի են նաեւ «Թաղէսի» կանոնում: Առաքեալի կանոնում եւս երկրորդ Օրհնութիւնը (աւելի ճիշտ՝ առաջին Օրհնութեան վերջին տունը), ինչպէսեւ Հարցին նախորդող տները նոյնպէս նուիրուած են Տիրամօրը:

Այս հանգամանքով երեք կանոնները նոյնանում են: Նկատելի էր նաեւ, որ Անարագեցին մեծ ուշադրութեամբ էլ յանգատուել իր գործերը: Թաղէսի կանոնը բացառութիւն չէ.

*Այսօր խնդայ մայր Աստուծոյ
Տաճար Բանին մարմնացելոյ
Յիշատակաւ Հօրն լուսոյ...*

Սակայն ատելի ուշագրաւ են յանգիտութեան օրինակները, որ հանդիպում են առկայ երեք կանոններում: Բերում տան մէջ կաթողիկոսը իրար է համապատասխանեցրել 1-2 ե 4-5-6-րդ տողերը, ըստ կարելոյն յաճախ կրկնելով ո-օ ձայնատրներն ու ձ-ծ-ց բաղաձայն հնչիւնները:

*Այսօր ծածկեալ զանձն յուտյ[ն]
Սարուր նշխարք երանելոյն
Վերացօրէ՛ զցօղ շնորհաց
Ի մարտիսն հոգոց մերոց
Եւ ի բուժումն ախտից մարմնոց...*

Այսինքն քերթողական արուեստի առումով երեք կանոնների ներդաշնակութիւնն անուրանալի է, եւ կարելի՛ պնդել, որ դրանք միեւնոյն շարականագրի ժառանգութիւն են:

Ահա եւ մի հետաքրքրական քաղուածք Սարգի Շրէցից, որ Ամատունին բերել է առանց յուրջ ուշադրութեան «...Շք. Թաղէոսի առաք[ելոյն]. հարցն զնորն ասա...» (ԱՄ 32): Չուտ տրամաբանական հարց է, թէ Սարգիս Շրէցը Պատկառնու գրածի՞ն նոր կատեր, թէ Անուարգեցու:

Հակառակի օգտին է խօսում միայն մի հանգամանք ժամանակին Ղ. Ալիշանը ցուցակագրել է Անուարգեցու յօրն անձ շարականները, ուր, ի տարբերութիւն Գեորգ Զօրավարի Անուանադրութեան կանոնների, չի յիշում Թաղէոս առաքելի կանոնը, մի հարց, որ արդէն իսկ քննարկուել է վերեւում Ուստիեւ կարելի է եզրայանգել, որ գործ ունենք Անուարգեցու ստեղծագործութեան հետ:

Այս կարգը եւս հեղինակի լաւագոյն գործերից մէկն է գրուած առանձնակի ոգետրութեամբ եւ խնամքով:

**ԲԷՆԵԴԻԿՏՈՍԻ
ԿԱՆՈՆԸ**

Քրիստոնէայ եկեղեցու սրբերին ձօնուած Անուարգեցու շարականները քննարկելիս պէտք է յիշել «Սրբոյն Բենեդիկտոսի» կանոնը՝ պահպանուած Լ ձեռագրում (էջ 168-177) Այս շարականներին մենք հպանցիկ անդրադարձել ենք

սակայն կրկին նշենք, որ Ղ. Ալիշանը իր ցուցակում նման կանոն չի արձանագրել: «Տնօրէնութեան եւ անուանադրութեան Տեառն» կանոնը դիտարկելիս փորձեցինք ապացուցել, որ Անուարգեցու ոչ բոլոր շարականներն են գրանցուած: Ուստի շատ հասկանալի է կանոնի Օրհներգ շարականի հրապարակող Ա. Մադոյեանի զգուշատրութիւնը¹⁶¹:

Այս մտքին մենք դեռ կանոնադառնանք, իսկ այժմ խօսենք Բենեդիկտոսի եւ նրան փառաբանող երգերի մասին: Թէ ով էր Բենեդիկտոսը, շարականագիրը մատնանշում է ամենակգրում.

*ՅՈՂՈՅՆ ՍՐԲՈՅ ՆԱԽՐՆՈՒՐԵՑԵԱՂ
Ի ՎԱՀՆՈՅՆ ՏԵԱՐՆ ԿՈՅԵՂԱՐ: (Օհ 1)*

Սուրբ Հոգու կողմից ընտրուած Բենեդիկտոսը ծնուել է 480 թուականին Հռոմից ոչ հեռու, Նուրսիա քաղաքում: Ազնուական ընտանիքից սերող այս պատանին 14 տարեկանից նուիրուեց ճգնաւորութեան. զուր չէ, որ նրան յաճախ ճգնաւոր են անուանում: Բենեդիկտոսի մասին բազում պատմութիւններ ու աւանդութիւններ կան, զուցէ եւ իսկապէս տեղի ունեցած, հետեւեալի նման հաւանական: «Եւ յաւուր միում, մինչ դեռ ի յուրեան էր սուրբն, նեղէր դեւն պոռնկական խորհրդով: Եւ նա հայցեալ ետես տատասկ. եւ անկեալ մերկ ի նա թաւալեցաւ եւ խոցոտեաց զամենայն մարմինն. եւ յետ այնորիկ՝ այլ աղտեղի խորհրդով ոչ կարաց մարտնչել ընդ նա սատանայ»¹⁶²:

Սրբերին ձօնուած բոլոր շարականների նման, Բենեդիկտոսի կանոնի երգերը եւս վերաբարտադրում են հերոսի կեանքի տարբեր դրուագները: Հարցն շարականից տեղեկանում ենք, որ Բենեդիկտոսին նաեւ բժշկելու ձիրք էր շնորհուած:

*Ձիրաշակերտողդ համայնից
բարեբանենք ամենեքեան,*

*Որ սրբոյն Պենեդիքթոսի
հտուր զշնորհ բժշկութեան:*

(Հց 1)

Բայց կան պատմութիւններ, որոնց անհնար է հաւատալ: Պատմում են, թէ դժբախտ պատահարի հետեւանքով գլխովին անդամահատուած մէկի մարմնի մասերը հաւաքում,

լցնում են զամբիոլի մեջ եւ տանում Բենեդիկտոսի մօտ, որն աղօթքով միացնում ու կենդանացնում է: Թերես այս է վերապատմում Ողորմեա 2-րդ տունը:

Մեկ այլ աւանդութեան մէջ համատարած սովի ժամանակ Բենեդիկտոսն ասում է իր կուսակայներին. «Մի տրտմիք, եղբարք, զի վաղին լիութիւն եւ առատութիւն լիցի ձեզ»¹⁶⁵: Եւ խօսքը ոչ թէ հանդերձեալ կեանքի առատութեան մասին էր, այլ հենց յաջորդ օրուայ: Ու Տիրոջ օրհնութեամբ Բենեդիկտոսի բառերն իրականանում են:

529 թուականին, Կասիմո լեռան վրա գտնուող մեհեանը ոչնչացնելով, Բենեդիկտոսը հիմնեց նոր կարգի ուխտ: Վանքի կանոնադրութիւնը՝ «Սահման առաջին ընթացիկ կրօնաւորաց», որ կազմել էր Բէն աբբան (արդէն այդպէս էին կոչում Բենեդիկտոսին), վանականներին պարտատրեցնում էր աղօթքից ազատ ժամանակը հանրօգուտ աշխատանքի վրայ ծախսել: Այս կարգի միաբանութիւններն ստացան Բենեդիկտեան անուանումը: Բենեդիկտեան ուխտերը յատկապէս շատացան ԺԱ-ԺԴ դարերում: Դրանցից դուրս եկան բազմաթիւ համաշխարհային դէմքեր, հռչակաւոր գործիչներ: Երկար ժամանակ Հռոմի պապ էին դառնում հենց այդ միաբանութիւնների անդամները:

Այժմ Բենեդիկտեան ուխտերի թիւը մեծ չէ: Բրիտանական հանրագիտարանը միայն «Մսիթարեան» միաբանութիւնն է յիշում¹⁶⁶: Բայց, այնուամենայնիւ, 6-րդ դարում բենեդիկտեանների կատարած աշխատանքն ահռելի էր: Նրանց ծառայած կրթական եւ մշակութային գործունէութիւնն անհնար է գերազնահատել: Ուստի բնական է, որ Բենեդիկտոսը դեռ կենդանութեան օրօք սրբացուել է Հռոմեական եկեղեցու կողմից: Եւ ոչ միայն Հռոմեական եկեղեցու: Նրա յիշատակը նշում է Հայաստանեայց Առաքելական եկեղեցին (Արեգի ԺԴ եւ մարտի ԻԲ): Մենք նպատակամղուած յայտնաւորքեան մէջքերումները կատարում էինք ոչ թէ Անաւարզեցու, այլ միւս խմբագրութիւններից, որպէսզի կարողանանք հեշտութեամբ համաձայնել Ա. Մադոյեանի հետ. Բենեդիկտոսի կանոնը Կիլիկիայի գրական դպրոցի եւ յատկապէս Անաւարզեցու գործերից է: Եւ այս 8 երգերը, որ ամրակուր են յանգի ու չափի տեսակետից, դժուար է ուրիշ որեւէ մէկին վերագրել:

ԼԵՒՆ ՄԵԾԻ ԿԱՆՈՆԸ

Կանոնի¹⁶⁵ մասին խօսելուց առաջ փորձենք տեսնել, թէ ով էր Լեւոն Մեծը: Հայ մատենագրութեան մէջ նա յիշուել է մերթ ուրպէս «մարդադաւան տոմարի» հեղինակ, մերթ՝ «ամբարիշտ», իսկ արեւի յաճախ՝ «նգովուած» ու «պիղծ» մակդիրներով¹⁶⁶: Նրա անունը կարելի է գտնել, իհարկէ նգովքների ուղեկցութեամբ, մինչեւ անգամ շարականներում (տես ԱՄՏ էջ 151):

Լեւոնը, որ նման ուշադրութեան է արժանացել, Հռոմի 45-րդ պապն է, «ազգաւ Դուսգան (Թուսկանցի), որդի Գինսիանու, կացեալ (ի պապութեան) ամս ԻԱ (21), ամիսս Ը (8) եւ ատուրս ԻԷ (27), (440-461թթ.)»¹⁶⁷: Նա պապական իշխանութեան գերակայութիւնը միւս եկեղեցիների նկատմամբ հիմնաւորում էր Պետրոս առաքելի առաւելութեամբ միւս առաքելներից (ինչպէս գիտենք, քրիստոնէութեան տարածողը Հռոմում հենց Պետրոսն էր, նաեւ առաջին պապը, եւ ըստ հռոմեական եկեղեցու իւրաքանչիւր պապ ոչ միայն Քրիստոսի տեղապահն է երկրի վրայ, այլեւ Պետրոսի հետեւորդն ու ժառանգորդը): Եւտիքեան խոռովութեան ժամանակ Լեւոնը իր եռանդագին նամակագրական քայլերով փորձում էր ազդել դէպքերի ընթացքին: Նամակներից ամենայայտնին 449-ին, իսկ արեւի ստույգ, «ի Յունիս ԺԳ, ի յամին բղեշխութեան գերապայծառ դատաւորացս Աստերիոսի եւ Պրոտունայ»¹⁶⁸, Կոստանդնուպոլսի պատրիարք Փլաքիանոսին ուղղուած է՝ «Թուրք առ Փլաքիանոս», որ յաճախ նշում է որպէս Լեւոնի տօմար: Դրա հիմնական բովանդակութիւնն ըստ «Կանոնագրքի» այն է, որ ընդունում է «Բ բնութիւն եւ Բ դէմս ի Քրիստոս»¹⁶⁹: Նամակը պէտք է ընթերցուէր Եփեսոսի ժողովում, սակայն նոյն իսկ Լեւոնի պատուիրակների միջամտութեամբ դա չարուեց: Այնտեղ «միաբնակութեան» գաղափարը դեռեւս հաստատուն էր: Տեսնելով իր գաղափարների մերժուածութիւնը՝ Լեւոնը Եփեսոսի ժողովն անուանեց «աւազակածողով» եւ սկսեց նոր ժողով գումարելու ջանքեր գործադրել: Ինչպէս նկատում է Ա. Տէր-Միքէլեանը, դրա համար նա բանադրուել է Դեոսկորոս Ալեքսանդրացու կողմից, որը Եփեսոսի 2-րդ

ժողովում նախագահողն էր¹⁷⁰: Այնուամենայնիւ, Լեւոնին յաջողում է ի կատար ածել իր ծրագիրը եւ գումարել տալ նոր ժողով: 451 թուականի հոկտեմբերի 3-ին Քաղկեդոն քաղաքում բացուեց ժողովը. եւ սկսուեց բաժանումը Արեւելեան եւ Արեւմտեան եկեղեցիների միջեւ:

Հիմնականում այս դէպքերի կապակցութեամբ է յիշատակուում Լեւոն Մեծը հայ գրականութեան մէջ, եւ բնական է, որ նրա նկատմամբ վերաբերմունքը անվերապահօրէն բացասական է: Կարծում ենք, առաջին հերթին այս տեսակետից է ուշադրութիւն գրաւում Գրիգոր Անաւարզեցու գրած կանոնը իբրեւ բացառութիւն:

Պապին նուիրուած կանոնը հարուստ է պատմական դէպքերով: Կենսակերական նիւթը, որ օգտագործել է Անաւարզեցին, անսխալ վերադարձուումն է Լեւոնի անցած ուղի: Անշուշտ Անաւարզեցին չէր կարող չանդրադառնալ Լեւոնի կեանքի ամենակարեւոր իրադարձութեանը, ամենակարեւոր փաստին: Գեոսկորոսի, Եւտիքէսի եւ Քաղկեդոնի ժողովի մասին հեղինակը խօսում է բաւական մանրամասն: Յիշում է նաեւ Լեւոնի թողթը (տե՛ս Մճկ 2):

Խնդրոյ առարկայ շարականներում Անաւարզեցին օգտագործել է Լեւոնի մասին աւանդութիւնները եւս: Պատմութիւնից յայտնի է, որ երբ հոռետի առաջնորդ Աթիլը իր բանակով մօտենում էր Հռոմին, նրա հետ բանակցելու է գալիս Լեւոնը, եւ փաստ է՝ 452 թականին հոռետը Հռոմ չմտան: Ըստ աւանդութեան պապը իր ճարտասանութեամբ է փրկել Հռոմը: Ասում են նաեւ, թէ նա հրէ թրով սպառնացել է Աթիլին: Հաւանաբար աւանդութիւնն ունեցել է այն շարունակութիւնը, որ գտնում ենք Անաւարզեցու շարականներում (Հցն 2): Անաւարզեցին մեծագոյն ձգտում ունի Լեւոնին մեծարելու, եւ դա նրան յաջողում է.

*Մեղրածորան լեզու սրբոյն
Միտն ուշիմ, սիրտն արիագոյն,
Հոգին բընակ սրբոյ Ոգւոյն:*

Սա շարականագրութեան մէջ թերեւս ամենակատարեալ կանոններից է. առնուազն յանգի եւ տաղաչափութեան առումով: Անգամ Գործքի սկսուածքը չափածոյի է վերածուած.

*Երգով հանդերձ գՏէր օրհնեցէք,
Ամենայն գործք եւ գովեցէք
Եւ առաւել բարձր արարէք:*

Տների առաջին տառերով բանակապ է հիսւում, որ հետեւեալն է. «Սրբոյն Լեւոնի Մեծի քահանայապետին Հոռմայ երգ»: Իհարկէ, չնայեա՞ծ կանոնի բացառիկութեանը, որ նկատելի է առաջին իսկ հայեացքից, միջնադարեան հայ եկեղեցական գործիչներն այն չէին խրախուսի, որովհետեւ արժէքների գնահատման իրենց «ուրոյն» սկզբունքն ունէին, որի կաղապարում Անաւարզեցու նման անհատականութիւնը ոչ մի կերպ չէր կարող տեղադրուել: Եւ պատահական չէ, որ նրա շարականների քիչ թէ շատ ամբողջական հաւաքածուն պահպանուել է յեհահայ, ասել է թէ կաթողիկական միջավայրում:

Գժուար կլինի այս շարականին որեւէ այլ երգ հակադրելը: Հեղինակի ստեղծած պատկերները խօսում են եւ հմայիչ. շարադրանքը ինքնին կարծես մի մեղեդի լինի, եւ ամբողջութեամբ զգալի է մեծ շարականագրի տաղանդը: Ցաւալի է, որ սա Գրիգոր Է Անաւարզեցուց մեզ հասած վերջին շարականն է:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈՒՍԱՐԵՆ

ԺԳ-ԺԴ դարերի սահմանագիծը, անշուշտ, Կիլիկեան Հայաստանի համար ծանր փորձությունների ժամանակաշրջան էր: Իշխանաւորների միջեւ տիրող հակասութիւններն այն աստիճանի սրուածութեան էին հասել, որ արտաքին թշնամիներից պաշտպանուելու մասին մտածելու ժամանակ չէր մնում: Գահը ժառանգած Հեթում Երկրորդը չէր կարողանում ամրապնդել իր իշխանութիւնը եւ մերթ գահընկեց էր արում եղբայրների կողմից, մերթ հեռանում էր աշխարհիկ կեանքից՝ կրօնաւորելով: Արքայական գահին երկար չմնացին նաեւ Սմբատը, որ ուժով էր խլել գահը աւագ եղբորից, ու Կոստանդինը, որ նոյն կերպ էր վարուել Սմբատի նկատմամբ: Անտարակոյս ստեղծուել էր մի իրավիճակ՝ շահեկան եւ օգտակար շրջակայ թշնամական պետութիւնների համար: Եւ, ահա, աշխարհիկ տէրերի մեղքով ծառայած սպառնալի կնճիռները փորձում էր հարթել՝ բնականաբար իր կարողութիւնների սահմանում. Հայոց 73-րդ կաթողիկոսը՝ Գրիգոր Անաւարզեցի: Յաօք, մեզ յայտնի չէ. թէ վերջինս ինչպէս էր ջանում հանդարտեցնել երկրի ներքին քաղաքական կեանքի ալեկոծութիւնը, սակայն կաթողիկոսի վարած արտաքին յարաբերութիւնների վերաբերեալ բաւականաչափ տուեալներ են պահպանուել:

Ընդհանրապէս յայտնուելով քաղաքական դժուարին կացութեան մէջ՝ հայերը յաճախ էին նուրբ դիւանագիտութիւն բանեցնում:

Միջնադարում պետութիւնների միջեւ բարեկամական յարաբերութիւնների ստեղծման համար կարեւոր ազդակ էր կրօնը: Վերոյիշեալ նուրբ դիւանագիտութեան հիմքն այն էր, որ հայերը փորձում էին հանդգել այս կամ այն հզօր տէրութեանը, թէ իրենք պատրաստ են, օգնութիւն ստանալու դէպքում, լիովին դաւանակից դառնալ նրանց, ինչը փաստօրէն կարող էր յանգեցնել հայ եկեղեցու ստորադասմանը յունականին կամ լատինականին: Բնականաբար սոյն վերաբեր-

մունքն աւելի շատ արտաքին ցուցադրութիւն էր, քան սրտաբուխ ցանկութիւն: Պէտք է նկատի ունենալ, որ չի կարելի այս հանգամանքը տեղայնացել եւ վերագրել միայն Կիլիկեան Հայաստանի հայութեանը: Ահա մի ուշագրաւ օրինակ Երուսաղէմի հայութեան մասին. «Հայեր այնքան հաւատարիմ բարեկամութիւն ցոյց կուտան լատինաց քաղաքական իշխանութեան եւ Հռոմի եկեղեցիին... որ նոյնիսկ այդ յարգանքը արեւմտեան հեղինակներու մօտ կը ստեղծէ այն կարծիքը, թէ հայեր կը դաւանին հռոմէական կրօնքն ու կը հպատակին իշխանութեան»¹: Միւշդեռ հայերի հիմնական նպատակը իրենց աւելի բարօր հաւատակիցներից օգնութիւն ստանալն էր:

Նմանատիպ կեցուածք ստիպուած էր ընդունել նաեւ Գրիգոր Անաւարզեցիին՝ յանուն ազգի բարօրութեան ի սպաս դնելով ոչ միայն իր քաղաքական լայնախոհութիւնը, այլեւ գեղարուեստական ձիրքը: Նրա ամբողջ մատենագրական ժառանգութիւնը՝ դրուատները, «Յայսմաւորքք», շարականները դրա խօստուն վկաներն են: Ըստ էութեան հայրենիքին շօշափելիօրէն օգտակար լինելու ձգտումով Գրիգոր Անաւարզեցիին պատրաստ էր ջուր խառնելու պատարագի գինուն, մեծ յանգամք չէր համարում դժոխքի ու դրախտի միջանկեալ օղակը՝ քաւարանը ճանաչել կաթողիկոսների հանգոյն, ինչպէս Օրմանեանն է նկատել (Ազգապ. մաս Բ, 1751), ձգտում էր եկեղեցու ծիսակարգի մէջ փոփոխութիւններ կատարել անկախ արեւմտեան քրիստոնէայ եկեղեցիներից: Ներկայ աշխատանքում մենք դիտարկեցինք Գրիգոր Անաւարզեցու հրատարակուած եւ նորայայտ շարականները, հնարաւորութեան սահմաններում փորձեցինք գնահատականներ տալ: Գերազանցապէս բնադատական կարծիքների արժանացած հեղինակի մասին որեւէ դրական խօսք ասելուց առաջ մենք նպատակադրուել էինք մատնանշել նման վերաբերմունքի շարժառիթները, ընդգծել Անաւարզեցու անձի դէմ եղած նախապաշարուածութիւնը: Խօսելով բանաստեղծի «միութեանական» հայեացքների մասին եւ ընդունելով հանդերձ, որ դրանք պիտի մերժուած լինէին արեւելեան վարդապետների կողմից, նրանց առաջնորդ Ստեփանոս Օրբելեանի պարագային չի կարելի ամբողջապէս ժխտել այն հանգամանքը, որ կարող էր դեր խաղալ նաեւ սովորական մարդկային մի թուլութիւն՝ նախանձը: Թերեւս այլ կերպ չի կարելի ընկալել

այն երեւոյթը, որ պատմիչը նկարագրում է, քէ ինչպէս էր Հայոց արքան իրեն խնդրում բարձրանալ կաթողիկոսական արժանին, իսկ ինքը հրաժարում էր: Այս ամենը պատմիչը նկարագրում է բաւական մանրամասն, միաժամանակ լռելով, որ կաթողիկոսութեան հիմնական թեկնածուն Գրիգոր Անաւարզեցին էր:

Հետագայ դարերում Գրիգոր Անաւարզեցին գնահատուել է որպէս «ունիթո» եւ քննութեան ենթարկուել միայն այդ տեսանկյունից: Ըստ որոշ ուսումնասիրողների բնութագրութեան նրա միակ ձգտումն ու նպատակը Հայ եկեղեցին Հռոմէականին ստորադասելն էր եւ ծիսակարգն «ապականելը»¹: Քննադատներն առարկայօրէն չեն դիտարկել Անաւարզեցու զիջման պատրաստակամութիւն ցուցադրող քայլերի դրդապատճառները, որոնք զուգէ կարող էին արդարացնել այդ ձեռնարկումները:

Յիշենք նաեւ Անաւարզեցի բանաստեղծի վերաբերեալ եղած կարծիքները, համաձայն որոնց նա թերեւս բանաստեղծ կոչուելու արժանի չէ:

Գիտենք, որ Գրիգոր Անաւարզեցու գրական ժառանգութիւնը հիմնականում անտիպ է. կան անձանօք է մնացել ու միայն ընթերցասէր հասարակութեանը, այլեւ մասնագետների: Եւ այս կապակցութեամբ միայն զարմանալ կարելի է որ չնայեամ սխալ, բայց այնուամենայնիւ ոմանք կարողացեն գնահատել Գրիգոր Անաւարզեցու շարականները՝ երբեմ տեսած կան ուշադիր կարդացած չլինելով դրանք: Իսկ պահպանուած գործերը նախ վերագրուել են ուրիշի եւ ապա միայն արժանացել գերագոյն գովեստների:

Մեր աշխատութեան մէջ առաջին հերթին նկատել ենք դարձրել, որ իր շարականներում Գրիգոր Անաւարզեցին հետեւողականօրէն կերտել է Աստուածածնի կերպարը եւ սուրբ Տիրամօրը փառաբանելու հարցում անկասկած մեծ նուաճումներ արձանագրել: Դա պայմանաւորուած է ոչ միայն բազմաթիւ Մեծացուցէ շարականներ յօրինելու փաստով, այնաեւ այն հանգամանքով, որ Գրիգոր Անաւարզեցին ուրիշ կարգի շարականներն աւարտում է Տիրամօրը փառաբանութեամբ: Մոյն երեւոյթը յաճախ է հանդիպում հեղինակաստուածաշնչեան թեմաներով գրուած շարականներում:

Ընդգծելով հանդերձ նմանօրինակ շարականների գե

ղարուեստական արժէքը մենք առաջ ենք քաշել այն կարծիքը, որ Գրիգոր Անաւարզեցու լաւագոյն երգերը սրանք չեն, այլ սրբերին եւ մարտիրոսներին ձօնուածները: «Կրանցից յատկապէս հարկ է յիշել «Գեորգ Չօրավար» կանոնը՝ ուրիշ հեղինակի վերագրուած այն պատճառաբանութեամբ, քէ Գրիգոր Անաւարզեցին ի գօրու չէր նման բարձրարժէք շարականներ յօրինելու: Մինչդեռ այս եւ նորայայտ «Լէօն Մեծ», «Սուրբ Բենեդիկտոս» եւ այլ կանոններ ապացուցում են, որ համեմատաբար ուշ շրջանի Անաւարզեցին լաւագոյն շարականագիրներից մէկն է՝ չնայեամ նրա ստեղծագործութեանը վերջնական գնահատական տալը մի փոքր դժուար է, բարդ, որովհետեւ շարականների ժանրը ամբողջութեամբ գնահատուած չէ: Ժամանակին Մ. Արեղեանը գրում էր. «Հարկաւոր է հրատարակել մի «Շարակնոց», որ պիտանի լինի գիտական գործածութեան համար (մինչեւ այժմ եղածները եկեղեցու ժամերգութեան համար են միայն սահմանուած), որի մէջ ամփոփուեն բոլոր երգերն այլընթերցուածներով եւ իրենց մէջ ունեցած ծանօթագրութիւններով»²: Բազում տարիների ընթացքում հասկանալի պատճառներով չի լուծուել շարականագիտութեան այս կարեւոր խնդիրը. չի իրագործուել շարականների գիտական հրատարակութիւնը: Եւս մի կարեւոր հանգամանք, անշուշտ Մ. Արեղեանի դիտողութիւնը հաւասարապէս վերաբերում է նաեւ պարականոն շարականներին: Դա բնական է, որովհետեւ երգերի անվաւեր լինել-չլինելը ոչ մի կապ չունի դրանց գեղարուեստական եւ պատմական արժէքի հետ:

Շարականների ժանրը, ինչպէս գիտենք, կատարելութեան հասաւ ԺԲ դարում: Ներսէս Շնորհալին լրացրեց պակասը՝ երգեր գրեց բոլոր այն տօների համար, որոնց կապակցութեամբ դեռեւս շարականներ չէին գրուել: Շնորհալին իրաւամբ բարձր է գնահատուել որպէս երգահան, իսկ որպէս բանաստեղծ նա յօրինեց երգեր՝ բացառիկ յանգաւորումով եւ կանոնաւոր չափով: Շնորհալին կարողացաւ երբեմն դուրս գալ ժանրի բաւական անձուկ կաղապարից՝ դիմելով պատկերաւոր մտածողութեան:

Գրիգոր Անաւարզեցու շարականները քննարկելուց յետոյ կարող ենք պնդել, որ նա Շնորհալու արժանի հետեւորդն է: Երաժշտագետների կածիքը Անաւարզեցի երգահանի մասին սեղմ է. բայց խօսում. եթէ հեղինակի գտած լուծումները

ցայսօր կիրառելի են եկեղեցում, դա արդեն կարելի է հանճարի փայլատակում համարել: Մակաւ նորոյթներ են եօթ հարիւր տարի պահպանում իրենց այժմեականութիւնը:

Քանաստեղծութիւնների առումով յիշատակել ենք. որ Գրիգոր Անաւարզեցիւն իր մեծ նախորդի նման բազմաթիւ շարականներ է յօրինել: Դրանց տաղաչափական, ընդհանրապէս բանաստեղծական արժանիքները մենք փորձել ենք ընդգծել համապատասխան գլուխներում: Ինչ վերաբերում է երգերի յանգին, ապա պետք է յիշել Անաւարզեցու նորամուծութիւնը՝ կրկնակի յանգի գործածութիւնը շարականների մէջ: Հետաքրքրական է նաեւ վերջին տները Աստուածամօրը ձօնելու երեւոյթը, որի շարունակողն ու զարգացնողն է Անաւարզեցիւն: Եւ վերջապէս, «հոգու թոյլքը»՝ բառականին յաճախ հանդիպող: Տեղին կլինի կրկնել սկզբում հնչած մեր միտքը, որ շարականագիրները բազում են, բայց ոչ բոլորն են արժանացել «Երգեցօղ» կոչմանը:

Խօսեցինք նաեւ այն մասին, որ մեծ կարեւորութիւն ունի շարականների թեման՝ ընդգծելով աստուածաշնչեան պատմութիւններ հարասող կանոնների առաւել կաղապարային եւ, հետեւաբար, գեղարուեստական առումով թոյլ լինելը:

Գրիգոր Անաւարզեցու գրական ժառանգութեան մէջ կարեւորել ենք նաեւ «Յայսմաւորքը». իրուատներն ու նամականին: Ուշագրաւ է, որ Անաւարզեցու յաւագոյն իրուատները եւս վերագրուել են այլ հեղինակների («Յայսմաւորքի» մասին խօսելն իսկ անելոյր է, այն նոյնիսկ հրատարակուել է որիչի անունով): Առայժմ Մխիթարեան հայր Գր. Սարգսեանի շնորհիւ գտնուել է իրուատներից մէկը՝ Գրիգոր Փոքր Վկայաւերին վերագրուած: Արժեքաւոր են նաեւ «Յայսմաւորք» ժողովածուն ու նամականին: Սրանք առաւելագոյն առնչութիւն ունեն եկեղեցիների միութեան խնդրի հետ: Գրիգոր Անաւարզեցիւն, որ ճանաչուած էր իբրեւ միութեան ջատագով, իր վարքագիծը բացատրում էր նրանով, թէ ձգտում է իրեն ենթարկել Անտիոքի պատրիարքութիւնը: Հետագայում կարծիքներ են յայտնուել, որ Անաւարզեցիւն իր քայլերով փորձում էր զօրեղացնել Կիլիկեան Հայաստանը: Կա նաեւ մէկ այլ վարկած, թէ կաթողիկոսն այդ ճանապարհն է բռնել թագաւորների դրամամբ, նրանց անմիջական ճնշման տակ (չնայեա՞ծ տուեալ դէպքում նախաձեռնողը Անաւարզեցիւն չէ, ցան-

կութիւնը նոյնն է՝ պետութեան ուժեղացում): Փաստօրէն բոլոր տարբերակները մի նպատակ են հետապնդում՝ ազգի բարօրութիւն, որ եւ արդարացնում է թէ՛ կաթողիկոսի, թէ՛ թագաւորի ձեռնարկումները: Իսկ արեւելեան եպիսկոպոսների անհանդուրժողականութիւնը կարող էր լինել ոչ ճիշտ ընկալման ենթակայական արտայայտութիւն:

Ինչեւէ, Գրիգոր Անաւարզեցու գործունէութիւնից պարզ զգացում է, որ նա շրջահայեաց քաղաքական գործիչ էր, դիւանագետ եւ անգամ իր գրական տաղանդը ծառայեցնում էր իր ուղեգրած գաղափարներին:

Աւարտելով խօսքը Գրիգոր է Անաւարզեցու կեանքի եւ ստեղծագործութեան վերաբերեալ, ընդգծենք, որ նրա ժառանգութեան մէջ պակաս կարեւոր չեն շարականները, չնայեա՞ծ գիտնականները ժամանակին թերագնահատել են դրանք, անելի հակուած լինելով դէպի «Յայսմաւորք» ժողովածուն: Բայց յատկանշական է, որ հեղինակի ժամանակակիցները նրան անուանել են ոչ միայն Երկրորդ Վկայաւեր, այլեւ Երգեցօղ, որ, այսպէս ասած, ընդհանուր մականուն էր տարածուած գրեթէ բոլոր քրիստոնէայ ժողովուրդների շրջանում եւ տրուել է շատ քիչ հեղինակների, որոնց զգալի մասը հետագայում սրբացուել է:

Ներկայումս շարականագիտութեան կարեւորագոյն խնդիրներից մէկը խազերի վերծանումն է: Բայց եթէ կանոնական շարականների պարագայում դա այնքան մեծ նշանակութիւն չի ունենայ, քանզի դրանց երաժշտութիւնը սերնդներունդ փոխանցուելով հասել է մեզ, թեկուզ ինչ-ինչ փոփոխութիւններ կրելով, ապա պարականոն երգերի համար խազերի վերծանումը անգերագնահատելի անհրաժեշտութիւն է: Գործածութիւնից դուրս մնալով՝ պարականոնները մոռացուել են, մոռացուել են նաեւ դրանց հեղինակները: Իսկ Գրիգոր Անաւարզեցու գրած երգերից խազագրուած են միայն Ե ձեռագրում արտագրուածները, որի տառերն են հազիւ ընթեռնելի, ուր մնաց խազերը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հտ. 3-րդ, Երևան, 1976, էջ 671:
- 2 «Դիցարանական բառարան», Երևան, 1985, էջ 121. հմմտ. Мифологический словарь, Москва, 1961, էջ 118:
- 3 Ղ. Ալիշան, Սիսուան եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 17:
- 4 Անդ, էջ 21:
- 5 Heidel W. A., The frame of the ancient Greek maps. New York. 1937. p. 306.
- 6 Օտար աղբիւրներում Կիլիկիայի Հայկական պետութիւնը յաճախ յիշատակում է որպէս Փոքր Հայաստան. տե՛ս օրինակ՝ Дж. Райт, Географические представления в эпоху крестовых походов, Москва, 1988, էջ 264:
- 7 «Սմբատայ Սպարապետի Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 208: 1198թ. յետոյ ստորագրուած բոլոր միջպետական պայմանագրերում Լեւոնը յիշում է յատկապէս «Ամենայն Հայոց Թագաւոր» կապակցութեամբ (Տե՛ս Langlois V. . Essai historique et etique la constitution sociale et politique de l'Armenie. Paris. 1860. pp. 105. 114. 122):
- 8 Մ. Օրմանեան, Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կոստանդնուպոլիս, 1911, էջ 60:
- 9 «Հայ ժողովրդի պատմութիւն», հտ. 3-րդ, էջ 684:
- 10 Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 444-445:
- 11 Կոնստէ Գալանոս, Սիսականութիւն Հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռոմայ, հտ. 1-ին, Հռոմ, 1650, էջ 433: Հմմտ. «Սամուէլի քահանայի Անեցոյ հասարմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 154:
- 12 Կոնստէ Գալանոս, նշ. աշխ., էջ 433:
- 13 «Հայ ժողովրդի պատմութիւն», հտ. 3-րդ, էջ 690:
- 14 Յ. Անասեան, Վարդան Այգեկցին իր նորայայտ երկի լոյսի տակ, արտատպուած «Բազմավէպի» 1968, ք. 7-12 բացառիկէն, Վենետիկ, 1969, էջ 44:
- 15 Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 314:
- 16 Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 11, Երևան, 1985, էջ 709:
- 17 «Կանոնագիրք Հայոց», աշխատասիրութեամբ Վ. Յակոբեանի, հտ. Ա, Երևան, 1964, էջ 14:
- 18 Անդ, էջ 273-274:
- 19 Յ. Անասեան, նշ. աշխ., էջ 44:
- 20 Վերջին՝ Վատիկանի տիեզերական ժողովի ժամանակ (1972թ.), ուր Հայ եկեղեցու պատուիրակները ներկայ էին դիտորդի կարգավիճակով, Օրթոդոքս եւ Կաթոլիկ եկեղեցիները փոխադարձաբար ջնջեցին նկուքները. տե՛ս «Բազմավէպ», 1973, Պիեռ Գիպրէ, Համամիութենական շարժումը վերջին տարիներին, էջ 87:
- 21 Նոյն տեղում:
- 22 Մ. Նալբանդեան, Անտիպ երկեր, Երևան, 1935, էջ 19:
- 23 Մ. Օրմանեան, նշ. աշխ., էջ 53:
- 24 Մ. Սուրառեանց, Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցոյ, Երուսաղէմ, 1872, էջ 440:
- 25 «Ներսէս Շնորհալի (յօդուածների ժողովածոյ)», Երևան, 1977, Վ. Նալբանդեան, Միջնադարի մեծ բանաստեղծն ու ստաժողը, յօդուածը, էջ 23-24:
- 26 Նոյն տեղում:
- 27 Մ. Օրմանեան, նշ. աշխ., էջ 79:
- 28 Մկրտչ Մաշտոցի անուան մատենադարան (այսուհետեւ ՄԱՄ), ձեռ. հ. 2966, քդ. 63բ
- 29 Մ. Օրմանեան, նշ. աշխ., էջ 80-81:
- 30 Տե՛ս «Աշտանակ», 1995, Ա, էջ 124, «Կիլիկեան Հայաստանի եւ Բիզանդական կայսրութեան եկեղեցական փոխյարաբերութիւնները եւ նրանց բաղաբաղական ծալքերը» յօդուածը: Հմմտ. «Բանբեր Մատենադարանի», 1994, հ. 16, Էդ. Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացին Կիլիկիայի զինուորական կազմակերպութիւնների մասին:
- 31 Տե՛ս օրինակ «Կանոն սրբոյն Լեօնի», Մանուկունք Բ տուն:
- 32 Տե՛ս Ղ. Յովնանեան, Հետազօտութիւնք նախնեաց ռանկօրէնի վրայ, Վիեննա, 1897:
- 33 «Բազմավէպ», 1852, էջ 184:
- 34 Այս կապակցութեամբ տե՛ս Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախչեան, Յ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. Բ, Երևան, 1988, «Կանչիբերդ» յօդուածը:
- 35 Օշին իշխանի մասին տե՛ս Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ե, Երևան, 1962, էջ 238-239:
- 36 «Բազմավէպ», 1852, էջ 184:
- 37 Էդ. Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը, Երևան, 1977, էջ 103:
- 38 Նրա մասին տե՛ս Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Դ, Երևան, 1948, էջ 631-633:
- 39 Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 448:
- 40 Անդ, էջ 44:
- 41 Անդ, էջ 579:
- 42 Անդ, էջ 427:
- 43 Մ. Չամչեանց, Հայոց պատմութիւն, հտ. Գ, Երևան, 1984, էջ 283-284:
- 44 Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 446:
- 45 Մ. Օրմանեան, Ազգապատում, մասն Բ, Կոստանդնուպոլիս, 1914, էջ 1739: Հմմտ. Կոնստէ Գալանոս, Սիսականութիւն Հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռոմայ, հտ. 1-ին, էջ 419: «Ի մերս» արտայայտութիւնը ցոյց է տալիս, որ Գալանոսն Անաւարեցոյն վերաբերող սկզբնական հատուածն արտագրել է հայկական աղբիւրից: Այդ է ապացուցում նրա գրածի եւ Ստյ «Մաշտոցի» (Վենետիկի Մխիթարեան

միաբանութեան մատենադարան, ձեռ. 1173 /1345թ./ էջ 405բ. սինակ 2) մէջ եղած տեղեկութեան բառացի նյութիւնը:

46 Տե՛ս Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, Երևան, 1942, էջ 586:

47 Կիլիկեան Հայաստանի վանական համալիրներից մէկը. «Այս բարայրը քրիստոնէութեան առաջին դարերէն պաշտամունքի վայր եղած կը թուի, որովհետեւ Տարագոս, Պրոքոս եւ Անդրոնիկոս սուրբերը 304-ին նահատակուելէն վերջ՝ այդ քարայրին մէջ դրուած են, որով նոյն ժամանակէն իբր սրբավայր եւ ուխտատեղի պէտք է եղած ըլլայ: Իսկ Հայկական վանքը հոն շինել տուողը եղած է «օտարախորթն Երեւեալ ի բարեպաշտութենէ քան զամենայն իշխանս մեր յերկրին դժպիհն Սլէե՛ Ստեփաննէ իշխանի եւ Թորոս Բ Հայոց պարոնի կրտսեր եղբայրը (1169-1174)»: Տե՛ս «Բազմավէպ», 1947, էջ 209:

48 Տե՛ս օրինակ՝ Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, էջ 586:

49 Ղ. Ալիշան, Սիսուան եւ Լեւոն Մեծագործ, էջ 241:

50 Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 451-452:

51 Ստեփանոս Օրբէլեան, Սիւնիքի պատմութիւն, բարգձմութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները Ա. Աբրահամեանի. Երեւան, 1986, էջ 353:

52 «Նոր բառգիրք Հայկագեան լեզուի», հտ. 2-րդ, Երեւան, 1981, էջ 120:

53 Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 448:

54 Ա. Մուրխասեան, Կիլիկեան Հայաստանի պետութեան եւ իրատւոնքի պատմութիւն, Երեւան, 1972, էջ 50:

55 Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 446:

56 «Բազմավէպ», 1852, էջ 184:

57 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 241:

58 Նոյն տեղում:

59 Մ. Չամչեանց, Հայոց պատմութիւն, հտ. Գ, էջ 289: Հմմտ. նաեւ Կղեմէս Գալանոս, նշ. աշխ. , հտ. 1-ին, էջ 419:

60 Մ. Չամչեանց, Հայոց պատմութիւն, հտ. Գ, էջ 289:

61 Տե՛ս օրինակ՝ Մ. Օրմանեան, Ազգապատում, մասն Բ, էջ 1739: Հմմտ. Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, էջ 586:

62 Տե՛ս Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ, էջ 635:

63 Տե՛ս օրինակ՝ Մ. Չամչեանց, Հայոց պատմութիւն, հտ. Գ, էջ 284:

64 Տե՛ս օրինակ՝ Ղ. Ալիշան, Ծնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 85:

65 Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 446:

66 Վենետիկի Միխիթարեան միաբանութեան Մատենադարան, ձեռ. հ. 1173, էջ 405բ, սինակ 2:

67 Հայ Երուսաղէմի սրբոց Յակոբեանց միաբանութեան քանգարան, ձեռ. 1709, էջ 683:

68 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 241:

69 Տե՛ս «Բազմավէպ», 1948, 1949, Մ. Աղալբեգեան, «Յայսմատորք» ժողովածուները, Երեւան, 1982, **P. Peeters**, Le Synaxaire armenien.- Pour l'histoire du Synaxaire armenien. "Analecta Bollandiana". 30. Bruxellis. 1911.

S. Ter-Nersisian, Le Synaxaire armenien.- Le Synaxaire armenien de Gregoire d'Anazarbe. Melangeo P. Peeters. "Analecta Bollandiana". 68. Bruxellis, 1950: 70 «Բազմավէպ», 1949, էջ 53:

71 Մ. Աղալբեգեան, «Յայսմատորք» ժողովածուները, էջ 79:

72 Տե՛ս «Յայսմատորք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի յայսմատորաց Տէր Իսրայէլի, Օրթագիւղ. 1834, խմբագիր-հրատարակիչ Գր. Փնջտ-մարմնաւ:

73 Մ. Աղալբեգեան, «Յայսմատորք» ժողովածուները, էջ 79:

74 Տե՛ս «Բազմավէպ», 1947, էջ 208-212:

75 Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, էջ 586:

76 Տե՛ս «Բազմավէպ», 1949, էջ 4-9:

77 Մ. Մուրասեանց, Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցւոյ, էջ 476:

78 Հմմտ. Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ, էջ 441-442:

79 Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմայ, հտ. 1-ին, էջ 438: Այստեղից բերուող հատուածներում կէտադրական փոփոխութիւններ են արուած:

80 Ղ. Յովնանեան, Հետազօտութիւնը նախնեաց ռամկօրէնի վրայ, էջ 250:

81 Ա. Տէր-Միքէլեան, Հայաստանեայց եկեղեցին եւ բիւզանդեան ժողովոց պարագայը, Մոսկուա, 1892, էջ 222:

82 «Լումայ», 1909, էջ 21:

83 Մ. Օրմանեան, Ազգապատում, մաս Բ, էջ 1175:

84 Անդ, էջ 1173:

85 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 241:

86 Մ. Օրմանեան, Ազգապատում, մաս Բ, էջ 1173:

87 Կղեմէս Գալանոս, նշ. աշխ. , էջ 439:

88 «Խումար» բառի համար տե՛ս Մ. Յարութիւնեանց, Բացատրական բառգիրք. Ալեքսանդրապոլ, 1912, հմմտ. Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Միջին հայերէնի բառարան, հտ. Ա, Երեւան, 1987:

89 Մատենադարան «Արաքսի», «Կիլիկիա», փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ. Ս. Պետերբուրգ, 1894, էջ 133:

90 «Լումայ», 1909, էջ 21, հմմտ. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 241, հմմտ. Ղ. Յովնանեան, Հետազօտութիւնը, էջ 350:

91 Մ. Օրմանեան, Ազգապատում, մաս Բ, էջ 1773:

92 Ա. Տէր-Միքէլեան, Հայաստանեայց եկեղեցին եւ բիւզանդեան ժողովոց պարագայը, էջ 222:

93 Կղեմէս Գալանոս, նշ. աշխ. , էջ 440:

94 Անդ, էջ 441:

95 Անդ, էջ 436:

96 Մ. Օրմանեան, Ազգապատում, մաս Բ, էջ 1777:

97 «Բազմավէպ», 1949, էջ 60:

98 Ղ. Ալիշան, Ծնորհալի եւ պարագայ իւր, էջ 22:

99 «Արարատ», 1893, էջ 522:

100 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 242, հմմտ. Մ. Աղալբեգեան, «Յայսմատորք» ժողովածուները, էջ 80:


- 101 «Յայսմատուրք», Կոստանդնուպոլիս, 1834, տարագիր յանելում, էջ 43
- 102 Անդ. մաս Բ, էջ 179:
- 103 Անդ. էջ 180:
- 104 Ձեռագրի նկարագրությունը տես Օ. Եգանեան, Փ. Անրաբեան, Ա. Ջէյթունեան, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի, հտ. Ա. Երեւան, 1965, էջ 760:
- 105 ՍԼՄ, ձեռ. հ. 2268, թղ. 75ա, հմմտ. Կղեմէս Գալանոս, նշ. աշխ., էջ 437:
- 106 Նոյն աղբիւրների նոյն էջերում:
- 107 Կղեմէս Գալանոս, նշ. աշխ., էջ 436-437:
- 108 ՍԼՄ, ձեռ. հ. 2268, թղ. 75ա:
- 109 Կղեմէս Գալանոս, նշ. աշխ., էջ 439:
- 110 ՍԼՄ, ձեռ. հ. 2268, թղ. 76ա:
- 111 Անդ. էջ 77ա:
- 112 Անդ. էջ 77բ:
- 113 Կղեմէս Գալանոս, նշ. աշխ., էջ 440:
- 114 Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, Երեւան, 1944, էջ 668:
- 115 Նոյնի Ա հատորը, էջ 81: Ուշագրաւ է, որ «Հայկական սովետական հանրագիտարանը» Օշինի (Ալինախը չկայ) ծննդեան թուականն անյայտ է համարում, տես «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 12. Երեւան, 1986, էջ 550:
- 116 ՍԼՄ, ձեռ. հ. 2268, թղ. 77բ:
- 117 «Լուսնայ», 1909, էջ 18:
- 118 Ա. Չամիչեան, Հայաստանեայց եկեղեցու պատմություն, Նոր-Նախիջևան, 1908, էջ 255:
- 119 Ի. Փափագեանց, Պատմություն եկեղեցական. Աննետիկ, 1848, էջ 561:
- 120 Մ. Օրմանեան, Ազգապատում, մաս Բ, էջ 1782:
- 121 «Բանրեր Մատենադարանի», հ. 7, Երեւան, 1964, էջ 402:
- 122 Անդ. էջ 429:
- 123 Паракан. Из армянской поэзии V-XV вв. Составление и примечания С. Золяна и Н. Тагмизяна, Ереван, 1990, с. 236-237.
- 124 Յ. Անասեան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, Երեւան, 1959, էջ LXIX:
- 125 Մ. Արեղեան, Երկեր, հտ. Գ, Երեւան, 1968, էջ 542:
- 126 Տես Ս. Ամատունի, Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Վաղարշապատ, 1911: Այսուհետեւ շարադրանքի մէջ, ԱՍՏ եւ էջը:
- 127 Տես «Շարական հոգեւոր երգոց», Երուսաղէմ, 1936, էջ 5-75 հմմտ. Յ. Անասեան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, LXX-LXXIV:
- 128 Յ. Անասեան, նշ. աշխ., էջ LXXVI:
- 129 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 242:
- 130 Մ. Օրմանեան, Ազգապատում, մաս Բ, էջ 1751:
- 131 «Գարուն», 1993, հ. 3, Ա. Մաղոյեան, Ս. Բենեդիկտոսը հայ մատենագրութեան մէջ, էջ 90:
- 132 Մ. Օրմանեան, Ազգապատում, մաս Բ, էջ 1751:

- 133 «Շարական հոգեւոր երգոց», էջ 70
- 134 Անդ. էջ 189: Շարականներու Քրիստոսի որպէս մարդ եւ Աստուած լիշատակելու երեւոյթը շատ հետաքրքրական է ու գրաւել է նաեւ օտարների ուշադրութիւնը: Անգ յալտսի հնագոյն վկայութիւններից է Մանուէլ Ա կայսեր (1143-1179) Գրիգոր Տղային (1173-1179) ուղղուած նամակը, որից բաղուն ենք հետեւեալ տողերը «Ծանիր գայս, զի գգայրակոյրիւմ, որ կայր ի սիրտս մեր յերգս ձեր եւ ի պաշտամունս, որ առ Աստուած բժշկեցար քննութեամբ վասն զի ի մէջ ամար եւ ծանեար երեւելապէս ի նոցանէ, զի ի բազում տեղիս երկու բնութեամբ զմի Քրիստոսն նոքօք փառաւորէք » տես Մ. Չամչեանց, Հայոց պատմութիւն, հտ. Գ, էջ 116:
- 135 Գր. Յակոբեան, Շարականների ժամըը հայ միջնադարեան գրականութեան մէջ, Երեւան, 1980, էջ 307:
- 136 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 241
- 137 Նոյն տեղում:
- 138 Մ. Օրմանեան, Ազգապատում, մաս Բ, էջ 1751:
- 139 Տես Մ. Չամչեանց, Հայոց պատմութիւն, հտ. Գ, էջ 87, հմմտ. «Հայկական սովետական հանրագիտարան», հտ. 5, Երեւան, 1979, էջ 613: Աճառեանը Կոստանդին Բ գահակալութեան տարի է համարում լոկ 1299-ը եւ միակն է, որ տալիս է նաեւ արքայի ծննդեան տարեթիւը՝ 1277, Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Բ, էջ 665:
- 140 Ել. ժԲ, 44:
- 141 Այս ձեռագիրն անյայտ էր հայագիտութեանը, տես «Հանդէս Ամսօրեայ», 1948, Ն. Ալիսեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Լվովի եւ Ստանիսլաւովի, ապա եւ Ն. Ալիսեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Լվովի համալսարանի... եւ Ստանիսլաւովի, Վիեննա, 1961, էջ 597, եւ յաջորդները: Ձեռագրի մանրապատճենն ստացել ենք Վլ. Ստեֆանէկի անուան գրադարանի գիտաշխատող պատմական գիտութիւնների թեկնածու Ն. Բանիկի միջոցով, որ հրատարակութեան էր պատրաստում Լվովի պահուցների հայերէն ձեռագրերի ու վաւերագրերի լիակատար ցուցակը:
- 142 Տես Օ. Եգանեան, Փ. Անրաբեան, Ա. Ջէյթունեան, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի, հտ. Բ, Երեւան, 1970, էջ 1490:
- 143 Н. Эмин, Паракан, М., 1914 (изд. второе), с. III.
- 144 Մ. Օրմանեան, Ազգապատում, մաս Բ, էջ 1751:
- 145 Մ. Արեղեան, Երկեր, հտ. Գ, էջ 555:
- 146 Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 241:
- 147 Գր. Յակոբեան, Շարականների ժամըը հայ միջնադարեան գրականութեան մէջ, էջ 307:
- 148 Մ. Արեղեան, Երկեր, հտ. Գ, էջ 549:
- 149 Տես «Կանոնագիրը Հայոց», գիրք Ա, աշխատասիրութեամբ Վ. Յակոբեանի, Երեւան, 1971, էջ 72:
- 150 Մ. Օրմանեան, Ազգապատում, մաս Բ, էջ 1751:
- 151 Կ. Մուրադեան, Բարսեղ Կեսարացիի եւ նրա «Վեցօրեան» հայ մատենագրութեան մէջ, Երեւան, 1978:
- 152 Նոյն տեղում, էջ 135:
- 153 «Ներմարդանալ-Իսկապէս մարդանալն Քրիստոսի, մարդ եղանիլ Բանին», “Воплотиться, слыаться человеком”. տես «Նոր բառգիրք հայ-

- կազման լեզուի», հատ. Բ, Երևան, 1981, հմմտ. Ա. Խոդարաշեան. Հայ-
 ուսերէն բառարան. հատ. Բ, Մոսկուա, 1838:
- 154 Տե՛ս Մ. Արեղեան. Երկեր, հատ. Զ, Երևան, 1974, էջ 731:
- 155 Գր. Յակոբեան. նշ. աշխ., էջ 296:
- 156 Մ. Օրմանեան, Ազգապատում, մաս Բ, էջ 1751:
- 157 «Տաղարան», Կոստանդնուպոլիս, 1752, էջ 412-413:
- 158 Այս երեսոյքի միակ նախադէպը, որին մեր ուշադրութիւնը հրատիրել է
 Վարազ Ներսիսեանը, կարելի է գտնել Ստեփանոս Սիւնեցուն վերագրող
 «Կարգ աւագ օրհնութեանց յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»
 (ՇՀԵ, էջ 936) ստեղծագործութեան մէջ:
- 159 «Յայսմաուրք», Ա, էջ 179:
- 160 Գր. Յակոբեան, նշ. աշխ., էջ 296:
- 161 «Գարուն», 1993, հ. 3, Ա. Մաղոյեան, Ս. Բէնէդիկտոսը հայ մատենա-
 գրութեան մէջ, էջ 90:
- 162 «Յայսմաուրք» (խմբ. Գրիգոր Խլարեցի), Կոստանդնուպոլիս, 1706,
 էջ ՆԽԷ:
- 163 Նոյն տեղում: Հմմտ. The new encyclopaedia Britannica (15th edition).
 vol. 6. p. 741:
- 164 The new encyclopaedia Britannica (15th edition). vol. 6. p. 741.
- 165 Մենք այն հրապարակել ենք. տե՛ս «Բանքեր Երեւանի համալ-
 արանի». 1993, հ. 2, էջ 96-105:
- 166 Տե՛ս «Պատմութիւն Սեբէոսի», աշխատասիրութեամբ Գ. Արզարեանի.
 Երեւան, 1979, էջ 160, 408, հմմտ. «Յովհաննէս Իմաստաւորի մատենա-
 գրութիւնը», աշխատասիրութեամբ Ա. Արրահամեանի, Երեւան, 1956, էջ
 138, Մովսէս Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի. քնա-
 գիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Երեւան, 1983, էջ 125, ինչպէս եւ Ա.
 Տէր-Սիբիլեան. Հայաստանեայց եկեղեցին եւ քիւզանդեան ժողովոց պա-
 րագայք, էջ 78: Հմմտ. Энциклопедический словарь, издатель Ф.А.
 Брокгауз, И.А. Ефрон. С. Петербург, 1896, т. 33, с. 447. եւ The new
 encyclopaedia Britannica (15th editin). vol. 36. p. 147:
- 167 «Պատմութիւն խրոնիկոնիսն զոր նրաստ ծառայս Քրիստոսի Հեթումս
 տէր Կողիկասոյ փոխեցի ի ֆռանգ զրոց ի թուին Հայոց ՉԽԵ». տե՛ս
 «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Բ, կազմ. Վ. Յակոբեան, Երեւան.
 1956, էջ 45:
- 168 ՄԼՄ, ձեռ. 143. «Մասունք Աստուածաշնչի», թղ. 337ա, հմմտ Ղ. Յով-
 նանեանց, Պատմութիւն տիեզերական ժողովոց, Վիեննա, 1847, էջ 253:
- 169 Ա. Տէր-Սիբիլեան, նշ. աշխ., էջ 61:
- 170 Նոյն տեղում:
- 171 Տ. Սաանալեանց, Պատմութիւն Երուսաղէմի, Երուսաղէմ, 1931, էջ
 394, հմմտ. Մխիթար քահանայ Սկեւոացի, Յաղագս համապատուութեան
 երկոտասան առաքելոց, Գ տիպ, Երուսաղէմ, 1865, էջ 19:
- 172 Մ. Արեղեան, Երկեր, հտ. Գ, էջ 528:

Յաւելուած

ԲՆԱԳՐԵՐ



ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴԵԱՆ ՏԵԱՌՆ
ՃՐԱԳԱԼՈՒՅԻ ԵՐԵԿՈՅԻՆ

Պատրաստ լեր դու, Բեթլեհէմ,
Որ զիւղ նախ էիր հովուաց,
Ահա արդ տիեզերաց
Դ՛շխոյ լինիս բաղաբաց:

Ոչ ինչ Կրթյան Յուրայի,
Ոչ Փոքր Երուսաղէմի.
Այլ մեծ յիշխանըս Յուրայ
Գտանիս տունդ Եփրաթայ:

Բանն անըսկիզբն ի Հօրէ՛ն,
Որ նախ բան զթիւ աւուրց է,
Ահա ի բէն ելանէ,
Որ զնորս Իսրայէլ հովուէ:

Պատրաստ լեր դու, Բեթլեհէմ,
Յաջորդեցիր Եփրաթայ.
Ահա Դաւիթ նոր արբայ
Ծնեալ ի բեզ նոր մանկանայ:

Դաւիթ երբեմն, որ մանուկ
Նախ զհօտն ի բեզ արածէր,
Ի բեզ նախ յաղթող եղեալ
Զգազանս ճեռամբ սատակէր:

Նորա այժմ ի բեզ ծնանի
Որդի պտուղ արգանդի,
Որով երդումըն լինու
Արճանութեան զաւակի..()

Ահա, ո՛վ դու Բեթլեհէմ,
Այսօր փոխանակ դրախտին

Լինի այրըն նոր երկին,
Եւ մըսուրն աթոռ վերին:

Պատրաստ լիցիս եւ դու, Ա՛յր,
Եւ յաջորդեցիր, Մըսո՛ւր,
Տանիլ զփառաց Թագաւորն
Չանպարագիրն եւ զանուրն:

Պատրաստ լիք եւ դուք, հովի՛ւք,
Եւ զփողոց ի բաց ընկեցէք,
Եւ ընդ հրեշտակս երգեցէք,
Աւետիս մեծ հնչեցէք:

Պատրաստ մատիք, մարգարէ՛ք,
Ջգուշակեայն յառաջ բերէք,
ՉԱստուած աստուածաբանել
Որ մարդ յանձն առնու ծնանել:

Պատրաստ լիք, դա՛սք հրեշտակաց,
Յերկրի լինել սրբբասաց,
Արկէք աթոռս ի յերկրի,
Տէրըն ձեր ծնանի յայրի:

Տէ՛ր մեր, խոնարհիս
Եւ աշխարհագրիս,
Թագաւորդ աղբատայեալ,
Եւ ընդ ծառայս Տէրդ գրեալ:

Գաս աշխարհագրել,
Ըզգիր մեղաց ջնջել,
Չծառայեալքս ազատ առնել,
Եւ ի յերկինս ըզմեզ գրել:

-----*-----

Ի Բեթլեհէմ՝ գրիլ ընդ Յովսեփայն՝
Ի թեթեւ ամպ, Տէր, նստեալ գաս
Ըզբնութեան փառսդ ծածկեալ:

Ի Բեթլեհէմ, գաւակղ Դաւթի՛

Գրիլ ի յարկ ընդ մօր կուսի՛
Գաս Յովսէփաւ, Տէրդ երկնի:

Ծնանիս ի յայրին, Տէր, մանուկ ի կուսէ,
Ըզհնացեալքս նորոգել,
Չօտարացեալքս ի դրախտն ածել:

Տէր մեր տղայանաս եւ աղբատանաս,
Չխորամանկ ռքն պատրել,
Չաղբատ բնութիւնս ճոխ առնել:

Որով ծնեալդ օրհնեմք եւ երկրպագեմք
Հաւատովք գամք ընդ առաջ
Լուսոյդ բան գարեւ յառաջ:

Աղբիւրդ եղեմայ զդրախտն այսօր բանայ,
Պատրաստեաց կոյս եւ ինդա՛,
Քրիստոս ի քէն մարմնանայ:

ԱԿԿ ՇԱԲԱԹՈՒԿ ՄԵԾԱՅՈՒԿՅԵՆԵՐ

F2
Մեծ ԲԶ

Եղեմ բանաւոր ի վտակաց
Հոգւի ինն սրբոյն առոգեալ
Եւ զօրութեամբ Բարձրելոյն
հովանաւորեալ
Ծառն կենաց ի քէն տնկեցաւ
անմահական պողոպն լցեալ,
Որ փոխանակ մահացու պտղոյն
Կենաց կերակուր մեզ պարգեւեցաւ,
Նոր օրհնութեամբ զքեզ
բարեբանեմք, Տիրամա՛յր,
Լեր մեզ բարեխօս առ ծնեալդ ի քէն:

Յիմանալեացն օրհնութեամբ պատուեալ

Եւ ի զգալեացս երկրպագութեամբ
միշտ փառաւորեալ,
Որ զԱրարիչն ամենեցուն ծնար
ի հնութենէ գնեզ նորոգել,
Ջնախահայրն յանիծիցն փրկեալ,
Եւ գնախամայրն ի ցաւոց
երկանց ազատեալ,
Նոր օրհնութեամբ զքեզ
բարեբանեմք, Տիրամայր,
Լեր մեզ բարեխօս առ ծնեալդ ի բէն:

Չաստուածային զօրութիւնն, Մարիամ,
Յիսուս որդին բո եցոյց
Ի ճանապարհին Բեթանիա
զանպտուղ թղզնին չորացոյց,
Չաշակերտսն զարմացոյց
եւ մեծ սքանչելիս մեզ եցոյց
Չմեղս մեր ջնջել եւ արդարութիւն
մեզ շնորհել,
Չիշխանութիւն մահու բառնալ եւ մեզ
անմահութիւն պարգեւել,
Նոր օրհնութեամբ զքեզ
բարեբանեմք, Տիրամայր,
Լեր մեզ բարեխօս առ ծնեալդ ի բէն:

Գ2
Բ2

Երկինք յերկրի Մարիամ,
Արեգական արձարութեան աւթարան
Փեսայն երկնաւոր յառագաստէ բո ելեալ,
Ջճանապարհս կենցաղոյս հզարապէս ընթացեալ
Յաթոռ փառաց յերկինս ընդ աջմէ Հաւր նստեալ
Ի բէն մարմնովն առեցեալ,
Անդադար զքեզ բարեբանեմք, Տիրուհի,
Լեր բարեխաւս առ Տէր վասն անձանց մերոց:

Յորժամ Թագաւորն փառաց յերկնից եկեացէ
Եւ ճայնք իմանալի փողոյն զաշխարհս նորոգէ

Ի բնոյ մահու զամենեսեան զարթուցանել
Չատարանդ պատուիրանի ի ծառայիցն խնդրել
Եւ գկուսանն վառեալ յապտերաւք պատրաստել
Արիք ելէք ընդ առաջ, ահա հարսամբն Փեսայն գայ
Պայծառ ջահիւք մտանել ընդ Փեսային
յառագաստն հարսնարանին
Անդադար զքեզ բարեբանեմք, Տիրուհի,
Լեր բարեխաւս առ Տէր վասն անձանց մերոց:

Աղոջեմք զմայրդ անմահ Արքային
Լինել մեզ բարեխաւս յայնմ աւուր անեղին,
Վառեալ ի հոգիս մեր զլոյսն երկնային
Եւ զուարթերես դիմաւք հանդիպիլ քոյ Միածնիդ
Ընդ երկնաշահ բանբարացն լսել զձայն աստուածային,
«Եկայք, աւրհնեալք Հաւր իմոյ,
Ժառանգեցէք զպատրաստեալ ձեր տեղին»
Անդադար զքեզ բարեբանեմք, Տիրուհի,
Լեր բարեխաւս առ Տէր վասն անձանց մերոց:

Դ2
Գ2

Լոյսն արարչական ի չորրորդ աւուր
ի տարրէ արար ամանս լուսոյն եղական
Նորաւք լոյս ծագեալ յաշխարհս եւ լինել
տունջեան եւ գիշերոյ իշխան
Եւ ի նոյն աւուրս իմանալի Լոյսն ի Հաւրէն իւր
մարմին կազմէր ի բէն, Մարիամ,
Լուսաւորել ոչ զաշխարհ զգալի,
այլ զիմանալի հոգիս մարդկան,
Չմայրդ Լուսոյ մեծացուցանեմք, լեր մեզ
բարեխաւս առ Լոյսն անմատոյց:

Ի չորրորդ դարուն առ Աբրահամ
հրեշտակաւք Աստուած խոնարհեալ
Եւ ի մեռեալ արգանդէն Մատայի
գիսահակայ ծնունդն աւետեաց,
Ի չորրորդ աւուր Գաբրիէլ Աստուծոյ
ծնաւդիդ ողջոյն մատուցեալ

Անսերն յղութեանք ի կոյս արգանդէդ
գՄիածին ծնունդն գուշակէր.
Լինել նոր Ադամ փոխանակ հնոյն Ադամայ,
շնորհել զթողութիւն պարտեացն նորա.
Զմայրդ Լուսոյ մեծացուցանեմք. լեր մեզ
բարեխաւս առ Լոյսն անմատոյց:

Ի պատկեր աւետեաց աւուրն
արծաթասիրութեանք Յուդայի մոլորեալ
Ջիւր գնեծ գՂարդապետն ընդ
երեսուն արծաթոյ հրէիցն ի մահ մատնէր.
Ջի որպէս աւետեաւք ընդ դուռն արգանդին
յաշխարհ մտեալ ծննդեանք
Մատնութեանք ընդ դուռն մահուն
ի դժոխս իջցէ մահուամբ
Եւ կենդանեացս աւետարանեալ,
նոյն եւ մեռելոցն երթալ բարոգեաց.
Զմայրդ Լուսոյ մեծացուցանեմք.
լեր մեզ բարեխաւս առ Լոյսն անմատոյց:

ԿԱՆՈՆ
ԲԱՐՍԳԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԵՍԱՐՈՒ

Այսօր օծութեանք թագաւորեալ
տոհմիս թագաւորեաց Տէր եւ թագաւոր
Թագ անուանակցիդ արբայութեանն երկնից
կապեց հովուել զհօտ իւր բանաւոր.
Հա՛յր Բասիլիոս, մաղթեա առ Յիսուս:

Բամից երկնայնոց անմարմնական
դասուց մարմնով հաղորդեալ
Ջկարգս հրեշտակական վարուց օրինակաւ
անձին՝ մարդկան կանոնեալ.
Հա՛յր Բասիլիոս, մաղթեա առ Յիսուս:

Քահանայական պատմութեան փայլաւոր
ոգով զգեցեալ գՔրիստոս

Զմարմին ի հոգի ոգեւորօք ծածկեալ շնորհօք
ոգոյն աղբիւր մշտահոս.

Հա՛յր Բասիլիոս, մաղթեա առ Յիսուս:

Անշարժ հաւատոց բարոգ, հրեղէն լեզու
Ճշմարտութեան, խարխախ լեռնացեալ
Նոր Իսրայէլի, սին բոցեղէն
ուղղիչ յերկրէ յերկինս համբարձեալ.
Հա՛յր Բասիլիոս, մաղթեա առ Յիսուս:

Այսօր գոր ծնար մարդ ճշմարիտ բնութեանք,
հրեշտակք յերկնից Աստուած ծանուցին.
Ջէիցս Արարիչ ներմարդանալ հարքն
ի յերկրի թեւ բարոգեցին.
Ընդ նոսին այսօր, գրե՛ գ, Կոյսդ, երանեմք:

Հգօր Թագաւորդ երկնաւոր
Ջգեցար մարմին երկրաւոր
Ճշմարտելով յանձին
գբնութիւն ծառայական
Լցուցեր հնազանդութեանք՝
ՋՀօր՝ թոյ օրէնս ստուերական
Նոր ազատութեան օրինաց,
Օրինադրող կարգաց ցուցեր
ՋԲասիլիոս սուրբ եկեղեցւոյ:

Եղեր մարդ հնազանդ Հօր՝ մարդկան գուգակից,
Որ եսդ Աստուած ծնողիդ էակից
Տնօրինաբար եղեր ընդ թե՛գ, Յիսուս,
Ի նոր յայս Գաղգաղա
Կտրել գյաւելուածս հերձուածոյ
սրտիցն անթլպատից
Ջանփշրելի վէճն գայլախաղեա
ՋԲասիլիոս սրբոյ եկեղեցւոյ:

Թափեալ իւղ զանուն Քրիստոս բուրեալ,
Որ հաւատոյ եւ վարուց
թեւօք այսօր ամբարձեալ,

1. ԱՍՏ հնազանդելով:

2. ԱՍՏ Հօր:

Որպէս մեղու գաստուածաշունչ
դրախտիդ՝ ծաղիկս հաւաքեալ
Որ վե՛հ Մովսէսի՝ զճշմարիտ հացդ յերկնից՝ ետ
Նոր Իսրայէլի զՀօր պատարագի:

Որ քոյին՝ Միածնի գիշխանն աշխարհի
կործանելով, Տիրուհի՛,
Դու կրկին հայցմամբն Բասիլի
Երեւեալ հրաման տայիր
Խոցոտիլ չարին բնասուրին՝ զինուն Մերկեռէի:

Ոգւոց սովուն մահացու
Բասիլիոս նոր հացատու
Ջբան հաւատոյն սփռեցեր,
Չախտ հերձուածոց վանեցեր:

Իւծեալ՝ ցաւոց փարատիչ,
Քաղցեալ անձանց կերակրիչ,
Գլխածղ աչքելու,
Որբոց՝ հայր եւ խնամածու:

Մաքրեալ շախտից նիւթական
Երրորդութեանն ժժարան
Հրեղէն սին, Բասիլիո՛ս,
Լե՛ր բարեխօս առ Քրիստոս:

Մարդկան ազինք բեւ փրկեալ
Այսօր զուարթնոցն երգակցեալ
Գոչեմք ողջոյն բեզ բերկրեալ,
Աստուածածի՛ն երանեալ:

Հց ԴԶ

Որ զնախնեաց հարցն առ որդիս
Գործ սքանչելեաց նորոգեցեր
Յաշխարհահեղեղ հերձուածոցն ալիս
Հայր աշխարհի գԲասիլիոս յեկեղեցւոյ տապան

Աճման հաւատոյ սերմն պահեցեր
Աղաչանօք սորա կեցո՛ զմեզ,
Տէ՛ր Աստուած հարցն մերոց:

Որ զուղղափառ հաւատս օրհնիչ
Կրկին նորովն Աբրահամա՛ս¹⁰ յազգս սփռեցեր
Երրեակիդ անձանց բնութեան միութիւն
Ի սուրբ սրտին խորան յայտնեալ
Չեկեղեցին անուլ նովաւ
բազմորդի գոլ աւետեցեր
Աղաչանօք սորա կեցո՛ զմեզ,
Տէ՛ր Աստուած հարցն մերոց:

Որ ի բոլոր սրբոց՝ խորհուրդ
Չերիս մանկունսն ի հրոյն ապրեցուցեր
Ի բազմապատիկ փորձութեանցն
հուր առ ի հանդէս
Մարտիցն ամուր գԲասիլիոս
պահեալ զբոցն եկեղեցւոյ նովին՝¹²
Չուարթնովն ի ցաւդ փոխեցեր
Աղաչանօք սորա կեցո՛ զմեզ,
Տէ՛ր Աստուած հարցն մերոց:

Գ* ԸգՏէր օրհնեցէք,
Բարձր արարէք զնա հաւիտեան:

Որ հօտին իւրոյ գիշեր մահուն սպառնալեաց¹³
Հայցմամբ ի տիւ լուսոյ փոխարկեաց
Եւ ընդ Դաւթի զչարն պարտեաց¹⁴
ԸգՏէր օրհնեցէք,
Բարձր արարէք զնա հաւիտեան:

Որ զաղբիւր դրախտի շնորհեաց¹⁵
Ոգւոյն վըտակաց
Գետս ի սրտէ բոխեաց ջուր կենաց
Եւ զբառակոյս վայրս առոգեաց
ԸգՏէր օրհնեցէք,

3. ԱՍՏ դրախտի:
4. ԱՍՏ Մովսէսի:
5. ԱՍՏ ի յերկնից:

6. ԱՍՏ քոյոյ:
7. ԱՍՏ խոցոտել չարին
բռնաորի:

8. Ե ցուցաւ:
9. ԱՍՏ Սրբոց:

10. ԱՍՏ նորով Աբրահամու:
11. Ե սրտից:
12. Ե նորին:

13. ԱՍՏ սպառնացեալ:
14. ԱՍՏ պարտեաց:
15. ԱՍՏ շնորհաց:

Որ Իսրայէլի նորոյ յայտնեալ Եղիա կրկին
Ետ հուր¹⁶ յերկնից նոր ողջակիզին
Ի սուրբ խորհուրդն իջեալ գշոզին.
ԸգՏէր օրհնեցէք,
Բարձր արարէք զնա հաւիտեան:

Ող ԴԿ

Որ կրկնակի Ոգոյդ իջնամբ
Ի Յորդանան Հօր յայտնութեամբ
ՋԲասիլիոս Հոգովդ օծեր
Եւ Միածնիդ կտորեցեր.
Բարեխօսութեամբ սորա.
Ողորմեա՛ մեզ, Հա՛յր Աստուած:

Չոր աշխարհի յոյս ծագեցեր
Եկեղեցւոյ պարիսպ արկեր
Բանիւ պսակ հայրապետաց
Վարուք սահման ճգնաւորաց.
Բարեխօսութեամբ սորա.
Ողորմեա՛ մեզ, Որդի՛ Աստուծոյ:

Որ գծածուկ խորս անյայտից
Մեկնեաց զբանից¹⁷ մարգարէից
Ջառաքելոյն գչափ ելից
Ջաշխարհս¹⁸ մաքրեաց ի յաղանդից.
Բարեխօսութեամբ սորա.
Ողորմեա՛ մեզ, Ոգի՛ Աստուծոյ:

Որ զքո Որդին Հօր էակից
Ծանոյց Աստուած արարչակից
Համաբնութիւն Որդւոյ գշոզին
Եւ գՈրդւոյ մայրդ Աստուածածին¹⁹
Առ բեզ մաղթանօք նորա.
Բարեխօսեա՛ վասն մեր, ո՛վ Կոյս:

Այսօր ընդ անմարմնոց զօրսն յերկին
Մարմնով հրեշտակն երկնային
Բասիլոս վերամբարձեալ
Եւ սրովբէիցն երգակցեալ:

Այսօր գկանոնքն²⁰ հաւատոյ
Կարգեաց սուրբ եկեղեցւոյ,
Վերընկալան ժողովուրդքն հարց²¹
Յեկեղեցին անդրանկաց:

Այսօր հովիւն անբիծ հօտից
Մեծ բահանայն վշտակից
Ի սրբութիւն սրբոցն մտանէ,
Ի²² վարագոյրն անցանէ:

Այսօր բարոզն²³ Երրորդութեան
Բանին մարմնոյ ի սեղան
Մերձեալ մեզ միշտ բահանայէ
Ջրոտունս արեան ընծայէ:

Այսօր խորոց Հոգոյն մեկնօղ²⁴
Լեզուն հրեղէն, թարգմանօղ²⁵
Ջանճառեղիան յերկնից փայլէ
Ընդ յուսաւորան ծագէ:

Այսօր բերանն աստուածաբան
Ջուարթանունն²⁶ անմահ օրհնաբան
Յեկեղեցիս միշտ կենդանի
Ընդ հերձուածողան կարգի:

Այսօր, որ բան հայրապետաց
Հանդիսադիր ճգնողաց
Ջկրճից որդիս միշտ կանոնէ
Բազմօք յերկինս պարէ:

16. ԱՍՏ Ետուր:

17. ԱՍՏ բանից:

18. ԱՍՏ գաշխարի:

19. ԱՍՏ եւ գնայրդ Որդույ

Աստուածածին:

20. ԱՍՏ գրանոն:

21. ԱՍՏ հարանց:

22. ԱՍՏ տնդ:

23. ԱՍՏ բարոզ:

24. ԱՍՏ մեկնող:

25. ԱՍՏ թարգմանող:

26. ԱՍՏ գուարթուն:

Այսօր որդւոյն քո ախոյեան
Վկայն քո զԱստուած ծննդեան
Հայրն²⁷ ընդ որդուցս քեզ երգէ.
Փառք ի բարձունս դրուատէ:

ԿԱՆՈՎՆ

ԵՐԱԳԱԼՈՒՅԻՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆՆ
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ

«Ակրտութեանն Քրիստոսի բան՝ Վերգս»

ԲԶ

Պատրաստ լեր Չաբուղովնի երկիր
եւ Նէփթաղէմայ
Չփառնն Յորդանան յաջորդեա
եւ մատի՛ր զՏէրն ընդունեա:

Պատրաստ լեր. գե՛տ Յորդանան.
Եւ Յովհաննէս յաջորդեա.
Գոչեա. «Պատրաստ արարէք.
Չճանապարհս Տեառն ուղղեցէք»:

Մի անգամ քո Յորդանան
Վըտակը գառիվէր դարձան
Ետուր անցս Իզի (Իսրայէղի)
Յէսուա յաւիտեանցն երկրի:

Ընդ քեզ գնորս Իսրայէլ
Յիսուս, որ էմանուէլ.
Անցուցեալ հանէ յերկին.
Պատրաստեա՛ դառնալ կըրկին:

Կողմանքդ Չաբուղովնի.
Եւ երկիր Նիփթաղիմի
Պատրաստ լիք. ահա ծագի
Մեծ Լոյս ձեզ ի խաւարի:

Ընդ յառաջեա. Յորդանան,
Ծաղեայ Լուսոյն ծաւարման.
Որ գայ ի Գալիլիէ
Եւ զաշխարհս ի քեզ մարբէ:

Բամեալ խորհուրդն առաջին
Քեզ Յորդանան կատարին
Յընծալ քո անապատի
Աւետիս տուր. զի ծաղկի:

ԲԶ

Տեսեալ Յովհաննէս
Գոչեայ մեծապէս.
«Ճանապարհ պատրաստ առնել
Եւ ըզաւէղս Տեառն ուղղել»:

Ոչ Ադամ թագչիս,
Մի տերեւով Եւայ ծածկիս
Մի թէ մերկ ես ամաչել,
Չի գայ Քրիստոս լուսով ծածկել:

Իլուսեալ մարգարէք.
Քնար պատրաստեցէք
Չճագումն լյայրն աւրհնեցէք
Եւ աւետիս մեզ հնչեցէք:

Թաղես նոր Ադամ
Չմեղս ի Յորդանան
Չմաշկեղէնըն մերկանամք.
Չգեցեալ զքեզ գոհանամք:

ԲԿ

Երկիր Չաբուղովնի Նէփթաղիմաւ
Ըզճագումն քո լոյս աւետիս
Անապատն Յորդանանու
Յընծալ հըրաւիրի.
Որ ըզքեզ եկեալ յաջորդի:

27. ԱՍՏ հայր:

Այսաւր Յովհաննէս
Քեզ ճանապարհ գոչէ պատրաստել:
Քեզ շաւղըս, Տէր, առնել
Չհոգին պատրաստել:

Նոյն եւ Եսայիաս ճայնէ
Յանապատին Յորդանանու:
Ջբարբառդ եւ դեան Հօր
Ձայնիւ Մըկրտչին յորմէ մըկրտիս,
Տէր եւ Քրիստոս բարոզի:

Նորոգել գհնացեալս,
Ի յոյս ծագել յոգիս խաւարեալս,
Ի Գալիլիէ ծագիս Լոյսդ հեթանոսաց
Եկեալ ի Յորդանան հատնիս,
Հարբ եւ Հոգւով վըկայիս:

Քեւ ցընծամբ եւ մեք
Ընդ անապատն Յորդանանու,
Որ ծագելով քո Հօր ճայնիւն
Եւ սուրբ Հոգւոյդ իջմամբ պայծառ
Իբրեւ շուշան այսաւր ծաղկի անդաստան:

Ռամեալ ընդ բոլոր արարածոց
Քոց ստեղծուածոց
Ծագման ճշմարիտ լուսոյդ յայտնելով
Ընդառաջեմբ հոգով
Չյայտնեալդ յոգիս ընդունել:

Յոց ԴԶ

Ի սկզբանէ Բանդ Աստուած
Մարմնով ծաղկեցար փառաւրբ,
Ի Հօրէ Միածին Որդի յայտնեալ երեւեցար,
Աւրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Սուրբդ Աստուած սրբիչ, որ ըզմեղս մաքրեցիր,
Գաս մարմնով մաքրիլ հուր ծախիչ,
Որ գՅովհաննէս նախ սըրբեցիր,
Աւրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Տէր, որ գԵսայեայ շըրթունս մաքրեալ
Չմեղսըն սրբեցիր կայծակն երեւեալ
Գաս ըզմեղսց հոսանս ի ջուրս կիզել:
Աւրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Գ* ԸգՏէր աւրհնեցէք,
Բարձր արարէք գնա հաւիտեան:

Որ սայ Աստուած մեր կանխաճայնէ,
Բարուք ի յերկրի երեւեալ շըրջի
Եւ ընդ մարդկան գայ մըկըրտել:
Բարձր արարէք գնա հաւիտեան:

Սպասեալ Յովհաննէս կայր ի Հաւրէ լըեալ,
Չոր ետես եկեալ
Ձայն բառնայր ի քէն մըկըրտիլ:
Բարձր արարէք գնա հաւիտեան:

Ի Գալիլիէ ի Յորդանան եկեալ,
Չորս անդ ժողովեալ
Չպարտեալսն առ Յովհաննէս
լուսաւորէ գհոգիս,
Բարձր արարէք գնա հաւիտեան:

Սեծ

Ծագումն հրաշ: Ծագումն: Առ քեզ ապաւինիմք²⁸:

Ող

Բանդ, որ մարմնով երեւեցար
Մերս հոգւով արդարացեալ
Գաս երեւել ի փառակցաց
Հաւատարիմ անփորձ մեղաց
Չքնութիւնըս մեր փըրկել
Չհայրն չարեաց դատապարտել,
Որով եւ մեք աւրհնաբանեմք,
Ծագման Քրիստոյս Տէր երկրպագեմք:

28. Մեծացուցէի համար մախատեսուած տողերը «Շարակնոցից» են. տես ԸՀԵ, էջ 385:

Անճառ ծածկալ յոյսդ ի մարմնի
Գաս ի ծագել գնրշոյլ շնորհի
Զբանկալ ի ջուրս ըզթըշնամին
Գաս ըմբնել անդէն ի նմին
Փըշրել խոնարհութեամբ.
Որով եւ մեք աւրհնաբանեմք.
Ծագման Քրիստոս Տէր երկրպագեմք:

Նմանութեամբ մարմնոյ մեղաց
Միայն անբիծդ ի յանցանաց
Ընդ զգացեալ մեղուցելոցն
Ի Յովհաննէ մըկրտելոցն.
Անմեղդ ընդ մեր մաքրիլ
Որպէս կարաւս գաս մըկրտիլ.
Որով եւ մեք աւրհնաբանեմք.
Ծագման Քրիստոս Տէր երկրպագեմք:

Վիշապին զգլուխ սկիզբն չարեաց.
Զհպարտութեանն ախտ յանցանաց.
Ի վերայ ջուրց խոնարհութեամբ.
Ի ծառայէն մըկրտութեամբ
Փըշրեալ խորտակեցեր
Եւ զընկողմեարս վեր ածեր.
Որով եւ մեք աւրհնաբանեմք.
Ծագման Քրիստոս Տէր երկրպագեմք:

Sj

Երկնի հրեշտակք անննեքան
Պատրաստեցէք երգս աւրհնութեան.
Եւ Յորդանան. դու պատրաստ լեր
Քանդի Քրիստոս գայ մըկրտել.
Ձուրբ զվիշապին ըզգլուխ փըշրել
Եւ ըզտիեզերս ի քեզ մաքրել:

Բոտեալ մաշկեակ քեզ բաժանեաց
Ոչխարն որչափ ինչ ներգործեաց.
Զի գնեղաց գետ պատառէ.
Բաց յաշխարհէ ի խորս հոսէ.

Որում է ծով կաթ ի դուլէ
Զյերինս եւ զբուրս կշռեալ չափէ

Գոչեա՛ եւ դու. զոր ծանուցեր.
Զգառ նոր յարգանդ երկրպագեր
Ըդնա պատրաստեա արդ Յովհաննէս
Զեռամբ ի ջուրս շաւշափել
Փութա մի՛ հրաժարել.
Զի գայ զբնութիւնդ բո սրբել:

Սպասել պատրաստութեամբ
Յայտնութեան բո Տէր մաքրութեամբ.
Զմեզ զանարժանքս արժանացո՛ւ.
Ժամանելով արդ գորացո՛ւ
Ըզսիրոսս պատրաստել քեզ ճանապարհ
Յոգիս առնել հարբ
Եւ հոգով զեկեալդ աւրհնել.
Փառք ի բարձունս երգել:

ԿԱՆՈՎՆ
ԱՌԱԶԻ ԱԻՈՒՐՆ ԾՆԸՆԴԵԱՆ

ԳԶ

Խաղաղութիւն ի յերկիր
Խռովեալ բնութեանս աշաւր եկիր
Ընդ անարգացն ի ստոր պաշտելո.
Փառս ի բարձունս Աստուծոյ:

Նոր Ադամ Տէր ի յերկնէ
Փոխան հընոյն. որ ի յերկրէ.
Ընդ որ յանցմամբն
Արար ստըրջութիւն
Քեւ ի մարդիկ հաճութիւն.
Որով երգեմք ծ...

Դասուց բո պետն երեւէր

Տէր եւ աւծեալ զծնեալդ աւետէր
Չաւրք երկնային զարիւն հեղեալ
Լուսով զգիշերըն փայլեալ.
Զի խորհուրդ քո ծածուկ է
Նոյն եւ փառաւք շրջափայլէ:

Բրաճեալ հովուացըն զընդից
Ընդ հրեշտակյալց խուռն երամից
Չհովիւզ եկեալ ի խընդիր հաւտի
Չգառն եւ զոչխար պատրաստի]
Ի հովանոցն եւ յայրին
Եւ ի մըսուրն արհններգէին:

Քենական լոյսն ի Հաւրէ
Այսաւր] ի բէ՛խ ծընեալ ծագէ
Ի յարմատոյն Յեսսեայ զաւազան
Ծաղկեալ ծնընդեամբ առանց սերման,
Յուցար անկէզ մորենի
Ծաղկեալ ողկոյզ Բեզդեհ/ե թի:

Մեծ

Երեւեցար յայտնութեանք
Նոր արեգակըն ծնընդեամբ
Չոր լուսաւորքն երկնային
Չկամիչդ աստեղբըն ցուցին].
Որ խոնարհեալ ի յայրին
Չմանուկդ եցոյց ի մըսրին:

Այսօր ծնընդեամբ քո բաւիչ
Յուցար մեղաց մեր լուծիչ,
Չմոզան առջեւ կոչելով
Եւ գհեթ(անոս)ըս փըրկելով.
Որով փրկեալքս երկրպագանեմք,
Փալոս ի բարձունս քեզ երգեմք:

Յուցեր...

ԿԱՆՈՎՆ
ՈՒԹՕՐԵԱՅ ԹԼՓԱՏՈՒԹԵԱՆՆ
ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ

Օհ ԱԿ

Որ խոստացար Տէր ի քեզ
ՅԱբրահամու զաւակդ օրհնիլ ամենայն երկրի
Եւ զթփատութիւն ետուր նշան նորին զաւակի,
Չոր ութօրեայ ընդունելով
Յուցար Աբրահամու զաւակ կատարիչ ուխտի.
Օրհնեմք ըզծնեալդ ի մեր փըրկութիւն:

Որ ընդ կաթին տղայութեան
Մարդկան ետուր սնուցիչ զօրէնսն ստուերական,
Չոր յանձն առեալ թըրփատութեամբ
Տէր օրինաց լըցեր ի ժամանակի
Եւ զօրինակն բառնարով
Չճշմարտութիւն ետուր յեկեղեցի.
Օրհնեմք ըզծնեալդ ի մեր փըրկութիւն:

Որ գյանցանաց հին մարդոյն
Նոր մարդ եղեր բառնալ զղատապարտութիւն
Ի սկզբանէ օրինաց նորին յանցաւորութիւն
Լուծեր այսօր կատարելով
Չօրէնսն ի սկզբանէ,
Ի բոյզ տղայութիւն.
Օրհնեմք ըզծնեալդ ի մեր փըրկութիւն:

Որ զՄովսէս փոխանորդէր
Եւ զաւետեացն երկիր շնորհէր
Քեզ օրինակ Յեսու կոչեցէր
Ըզատուէր օրէնսն Մովսիսի
Մեզ աւետեալն տուող դրախտի
Յիսուս կոչիս այսօր ի յերկրի.
Օրհնեմք ըզծնեալդ ի մեր փըրկութիւն:

Որ դյնծութիւն աշխարհի
Ծնանելով լուծեր գերկունս Եւայի
Ջանէծան այսօր. որ յօրինացն Մովսիսի
Բարձեալ յանձին կատարելով
Ելոյծ պըտուղ քո որովայնի.
Առ նա միշտ բարեխօսեա վասն անճանց մերոց:

ԵՂԷ

Կամաւ յանձն առեր զօրէնս.
Որ օրինաց ես. Տէր, այսօր կատարել
Ձհնագանդութիւն²⁹ մարդոյն օրինագանց
Պարտիս հնագանդութեամբ յանձին քո բաւել.
Տնօրէնութեան³⁰ քոյ երկիրպագանենք³¹:

Որ հնագանդելով Հօր ի մարմին խոնարհեցար
Եւ ծնեալ տղայացար
Սկսեալ յարգանդէ գպատուիրանն առնել
Եւ ութօրեայ լծրիատութեամբ Հօր հնագանդեցար.
Տնօրէնութեան քոյ երկիրպագանենք:

Ստեղծեալ նախահայրն տարածեաց գմահ
Չպատուիրանն տուեալ լուծեալ գԱրարչին.
Իսկ դու. որ ստեղծիչ նորին մարմնով
Ետուր մեզ զկեանս³² կատարեալ
Չօրէնան Մովսիսի քոյին ծառային.
Տնօրէնութեան քոյ երկիրպագանենք:

Տիրեալ օրինացն կատարմամբ քո
Չնոյն որ ի վերայ յանցողաց տիրէր.
Յեա կատարելոյն իշխանաբար լուծեր.
Չոր մարդկային բնութիւնըս բառնալ ըզբեռն ոչ կարէր.
Տնօրէնութեան քոյ երկիրպագանենք:

Ամաչեցուցեր. հատեր գպատճառըս.
Որ³³ հակառակ դբեզ Հօր բամբասէին,
Չբոլորն անթերի ի սկիզբանէ

Հնադանդութեամբ լցեալ զօրէնան ըստուերին.
Տնօրէնութեան քոյ երկիրպագանենք:

Նշան ամբարձեալ աստեղը ի հեթանոսաց
Չհեռաւոր ազգս կոչեցեր.
Չլոյս³⁴ արեւելից առ ի բարձանց
Տեսեալ այսօր զծնունդ քոյ³⁵ ցուցին.
Տնօրէնութեան քոյ երկիրպագանենք:

Նոր խորան լուսոյ եւ տապանակ Բանին,
Կոյս Աստուածածին,
Չմօր քոյ Եւայի պատուիրանին
Չլուծունն եկից յանձին քո Որդին.
Չոր պարտս մեր հայցեա լծողուլ բաղըրութեամբ:

Հմբ ԳԿ

Դասք երկնաւորացն հիացմամբ հեղեալք
Յերկիր այսօր սբանչանան տեսեալք³⁶
ՉԱրարիչդ. որ տղայացեալ
Յերկրի առնուս զկոչումն³⁷ անուանադրութեան.
Փրկեա գմեզ. Յիսո ւս. փրկիչ աշխարհի³⁸:

Ի Հօրէ ծնեալ նախ բան գարուեսակ
Յառաջ բան գարեւ անուն քո³⁹ անժամանակ
Ի ժամանակի անուանադրեցար
Ութօրեայ մանուկ մարդկամբ Յիսուս կոչեցար.
Փրկեա գմեզ. Յիսո ւս. փրկիչ աշխարհի:

Ի փրկութիւն իջեալդ աշխարհի
Յիսուս կոչիս ըստ Գաբրիէլի.
Որ ի յաւետեին գմայր քոյ ասէր Յիսուս զբեզ⁴⁰ կոչել
Եւ ի գործոյն արդեանց զՏէրդ անուանադրել.
Փրկեա գմեզ. Յիսո ւս. փրկիչ աշխարհի:

Այսօր ցնծան երկինք եւ երկիր
Անուանադրութեամբ փրկչիդ բոլորից.

29. ԱՄՏ Զինազանդութեան:

32. Լ. զկեան:

30. ԱՄՏ Տնօրէնութեամբ:

33. ԱՄՏ որք:

31. ԱՄՏ երկիրպագանենք:

34. ԱՄՏ լոյս:

37. ԱՄՏ կոչումն:

40. ԱՄՏ քեզ:

35. ԱՄՏ ծնունդ քո:

38. Լ. աշխարհիս:

36. ԱՄՏ տեսեալ:

39. Լ. քոյ:

Որ գսկիզքն էից, կոչօղ բան գոշից
Ութօրեայ առնուս այսօր անուն ի բոց ծառայից
Փրկեա զմեզ, Յիսո՛ւս, փրկիչ աշխարհի:

Նախ գուշակէր հրեշտակն Յովսէփայ
Յիսուս կոչեացես, ասէր, զանուն նորա.
Որ զիւր ժողովուրդս փրկէ ի մեղաց
Առ ի բաւութիւն եկեալ յանցանաց.
Փրկեա զմեզ, Յիսո՛ւս, փրկիչ աշխարհի:

Որ զծնունդ բոյ՝⁴¹ հրեշտակն աւետէր.
«Փրկիչ ձեզ ծնաւ»,- հովուացն գոչէր,
Զփրկագործ անունդ, որ նախասահմանեալ
եւ յերկնէ բերեալ
Այսօր առնուս յերկրի, Յիսուս կոչեցեալ,
Փրկեա զմեզ, Յիսո՛ւս, փրկիչ աշխարհի:

Սափոր ոսկի լի մանանայիւ
Եւ սեղան բաւութեան երկնային հացիւ,
Ի մեղաց տապոյն ամպ հովանաւոր
Եւ անգիտութեան խաւարին սիւնդ լուսաւոր,
Մայր փրկութեան, այսօր Փրկիչ կոչեցելոյն.
Մաղթեա զմեզ փրկել ի յանշէջ հրոյն⁴²:

Յգ ԳԿ

Անըսկիզքն Աստուած
անանուն բնութիւն եւ սքանչելի
Այսօր յարդեանց մեր փրկութեան գործոց⁴³
Ծնանելով անուանազրիս յերկրի.
Ըզբեզ օրհնեմք, Աստուած հարցն մերոց:

Բամից հրեղինաց
զանձանօթ խորհուրդ երկնաւորաց
Ի յերկնայնոց կոչիս Յիսուս անուն
տղայեացեալ ի մօրէ կաթնասուն.
Ըզբեզ օրհնեմք, Աստուած հարցն մերոց:

Քան զարեւ յառաջ հին աւուրցոյ
եւ յաւիտեանցն Տէր
Տղայ ութօրեայ այսօր զօրէնս լցեր
ութներորդ հանդերձելոցն հայր.
Ըզբեզ օրհնեմք, Աստուած հարցն մերոց:

Գ* ԸզՏէր օրհնեցէք,
Բարձր արարէք զնա յաւիտեան:

Արբայն երկնից մարդ ծնաւ
Հովուաց յայտնեալ օրհնեցաւ,
Եւ զմոգս⁴⁴ ընկալաւ.
Բարձր արարէք զնա յաւիտեան:

Յայրն եւ ի մտւր տղայացաւ
Կուսի կաթմամբ դիեցաւ
Եւ խանձարրեցաւ.
Բարձր արարէք զնա յաւիտեան:

Նախնեաց հարցն որդիացեալ
Զնոյն նշանակն ընկալեալ
Զխոստումն լցեալ
Բարձր արարէք զնա յաւիտեան:

Մեծ

Խնդա՛ բերկրեալ, Աստուածածի՛ն,
Մայր փրկութեան տիեզերաց,
Այսօր զփրկութիւն Աստուծոյ
Ամենայն ազգք երկրի
Տեսին ի բէն զՏէրն, որ Փրկիչ կոչի.
Վասն որոյ ամենեքեան
Զմայրդ Փրկչին մեծացուցանեմք:

Նոր Սիճն զփրկչին Իսրայէլի
Ետուր ծննդեամբ Կոյս տիրուհի այսօր.
Որ զհոգոց գերութիւն
մարդկան փրկեալ դարձոյց

41. ԱՍՏ քո:
42. ԱՍՏ ի յանշէջ ի հրոյն:
108

43. ԱՍՏ գործոյ:

44. ԱՍՏ մոգսն:

Վառեալ փայլմամբ զիւր փրկութիւնն եցոյց
Վասն որոյ ամենեքեան
Զմայրդ Փրկչին անծայուցանեմք:

Դու, Մարիամ, Բանին կրօղ,
Մայր օրհնեալ անուանն Յիսուսի ծնօղ,
Զոր լուար փրկիչ ծնանիլ այսօր տեսեր կոչեցեալ
Զհրեշտակին բան ցնծաս ի գլուխ ելեալ:
Վասն որոյ ամենեքեան
Զմայրդ Փրկչին անծայուցանեմք:

Ող ԴԿ

Բոտեալ զնզովսն տրտմական,
Քրիստոս, լուծեր ի բո ծննդեան
Զպարտս անխօսիս ըստուերական
Թփառութեամբն տղայական,
Զի կատարեալ գօրէնս լուծեր
Լցեալ յանճին բուս կնքեցեր:

Երեւցար թրփատելով
Ճշմարտապէս մարմին գոլով,
Ոչ առ աչօք երեւելով,
Այլ մարդ զբնութիւն մեր ունելով,
Որով ծնունդ բո⁴⁵ վերօրհնեմք
Տնօրէնութեանդ երկրպագեմք:

Անուանցար Յիսուս յերկրի,
Տղայ ութօրեայ մանուկ կուսի,
Որոյ անունդ է սբանչելի,
Տէր դատաւոր ութերորդի,
Որով ծնունդ բոյ վերօրհնեմք,
Տնօրէնութեանդ երկրպագանեմք:

Յնծայ, կոյս մայր, դուստր Դավթի,
Լուծիչ պարտեաց մօրն Եւայի,
Անուշահոտ բուրվառ ոսկի,
Ամպ յորոյ զիրկ Տէրն նստի:

Վասն որոյ մաղթեա նմին⁴⁶,
Կոյս Մարիամ Աստուածածին:

-----*-----

Զօրաց երկնից օրհնաբանեալ,
Նոր թագաւոր մեզ ծնեալ,
Զբո ծառային օրէնս եղեալ,
Ընդ մէնջ այսօր դու լցեալ:

Բուսեալ յերկրէ ճշմարտիւ,
Քրիստոս ծընեալ փրկութիւն
Աստեղբ յերկնից երեւեցար
Արդարութիւն մեր եկեալ:

Անուանաղբեալ կոչիս յերկրի
Յիսուս փրկիչ աշխարհի,
Որ զկենդանիս ստեղծեալ
Ածեր նախ առ Ադամ անուանել:

Նըշանակեալդ աստեղբ յերկնից
Եւ հրեշտակացն զընդից
Ի Բէղլէէմ բաղաբ Դավթի
Արբայդ նոր մանուկ կուսի:

Սպասաւորեալդ ի բօքէից
Տղայ ի մսուրն անբանից,
Որ ի յերկինս նստեալ կայիր
Եւ անդ տղայ զըգուէիր⁴⁷:

Ստեանց մօր կաթմամբ կերակրէիր
Բոամբ գտիեգերս ունէիր,
Ի խանճարրոց գոլով պատեալ
Եւ սրօքէիւքն ծածկեալ:

Սարսեալբ ահիւ գօրք երկնայինբ⁴⁸,
Ի վայր հեղեալբ առ այրին
Լուսով զհովիւսն աւետէին
Փառք ի բարձունս երգէին:

45. Լ քոյ:

46. ԱՍՏ որում ի մէնջ մտար:

48. ԱՍՏ սարսեալ գօրք երկնային:

47. ԱՍՏ տունը չկայ:

Ծաղիկ դաշտին Բէդէհէնայ
Շուշան հովտացն Եփրատայ,
Բլուր կնդրկի եւ զմուռս այրի
Կեցո զմեզ, ծնօղ Քրիստոսի:

ԿԱՆՈՎՆ
ԵՐՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ ԾՆԸՆԴԵԱՆ

Կարողաբար քոյդ մեծ զթուլթեամբ
Չմեզ փրկեցեր իմաստութեամբ
Ըզկործանեալքս բարձրութեամբ...

Ո
Ս
Տ
Ա
Ն
Դ
Ի


Աստուած առ Հայր ի սկզբանէ
Եղեր Մարմին Թախդ ի կուսէ
Մերովս եղեալ մանուկ ծնար,
Որ նախ էիր Որդի տըւար,
Զխորամանկ ձնս յպարտել
Շւ զծառայեալքս ազատել
... Հերովդեսայ ... Նոյի...
Կամէր ... իկ լինել լրիւ:

Նորոգեցեր զԱդամ կենօք
Չմահացեալն յանցանօք
Ծնեալ զծննդեանն անէծս բացեր
Զտրտմեալն Եւայ զուարճացուցեր,
Ծաղիկդ Յեսսեայ գաւազանի
Եւ արմատ ծարաւուտ երկրի
Եղջիւր ծագեալ ... լաճեալ
Եւ ճրագի Դաւիթ է պատրաստեալ:

Որ Աստուած մեր ըստ բարուք քոյ
Ետ օրինացն եւ տալո գնա,
Ծննդեամբ յերկրի երեւեցար
Եւ ընդ մարդկան ներ(շրջեցար
Զկոյսդ որ նախ փառս ծագեցաւ,
Հին Իսրայէլ ոչ ընկալաւ,
Որով նշան ... յա ... եր
Եւ զհեռաւորսն կոչեցեր:

Ս ... գոպն կուսութեամբ
ԶԱստուած ծընար դու մարդութեամբ
Որպէս ծառան առանց սերման
Ծներ զգառն իւր աննման,
Զոր գաւազանն Ահարովնի...

Ա
Բ
Ք



Այսօր ծընար Քրիստոս տղայացեալ
Եւ զխորամանկ ձին
... լուծեր զխորհուրդըն հնացե(ալ)
Պանդիտեցար եւ յօտարաց ազգաց
... ծառայեալ երկր(պագե)ցար
Ծնընդեան քո(ւմ)
... ընդ մոգուցն երկիրպագանեմբ:

Յանանոց մսուր բազմելով
Զհաւասարեալս անմըտից
... բանաւորեցեր կեցուցանելով,
Ի խանճարուրս Աստուած պատելով
Ըզբազմահիւս կապանըս
... մեղաց լուծեր խայտառակելով,
Ըզծնունդ քո ընդ հովիւսըն բարեբանեմբ:

Նորոգեցեր ըզհնութիւն երկրիս, Մարիամ,
Այսօր ծնընդեամբ քո, կոյս Տիրուհի:

Որ ըզճշմարտութիւն յերկրէ բուսեցիր
Անահ սրիպէս լիտյս յերկրեղէն արգանդէ .
Յիսուս Քրիստոս, ծաղկեցար .
Քարեխօսեա նըմա գանձին . . . առեր

Յգ ՂԿ

Խորք խորհրդոց եւ Բան Հօր
ի մըսուրն յանբանից
Ծնեալ տղայացար, Աստուած համայնից,
Ըզբեզ բարեբանեմբ, Աստուած հարցրն մերոց:

Ն
Դ
Ր

Գ* ԸզՏէր օրհնեցէք,
Բարձր արարէք զնա յաւիտեան:

Երկնի լոյսըն յայտնէին,
Մեզ հովիտքն գոչէին .
«Ձեզ ծեալ ծընաւ փրկիչ
Եւ ի մեղաց ազատիչ .
Որ փրկէ զժողովուրդս
Ի մեղաց իւրեանց» .
Քահանայ յբ. օրհնեցէք
Եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Ա
Յ

Յմբ

Ի հրեշտակէն հովուաբն
Աւետեալ ծնունդ բո. Տէ՛ր երկրի,
Մարդկան ազգ.ին ազգի
Ձեկեալոյ փրկիչ աշխարհի:

Գոչէր մեծ ուրախութիւն ըզծնունդ բո

Հանուրց լինել ամենայն ժողովըրդեան
Յառաա շնորհաց ընդունել:

Րամիցոյ աւետեմ, Տէր,
Մեծ ուրախութիւն
Որ եղիցի ամենայն ժողովըրդեան փրկութիւն:

Ի Բեթղէհէն ծնաւ այսօր ձեզ Տէր
Անտէրունչ հօտից ողորմութեան եղով ծեալ
Կարեաց վըշտակեալ:

Ի մեծութենէ շնորհից շարժեալ
Ջօրք բո երկնային շուրջ պար առեալ առ այրին,
Փառս ի բարձունս ծնելոյդ երգէին:

Տյ

Գրկօք մօր գըրկուիս, Քրիստոս մանուկ, այսօր
Եւ սրտէից սրբբասացութեամբ
Օրհնիս յաթոռ քերովբէից:

Որ խանձարրելով պատիս այսօր
Տղայի մըսուր գպտուղ դրախտին
... ըն ի բաց հանեալ բանաս որդոց Ադամայ:

Րամիցն աղբատաց հաղորդ յայրն օտարաց
Եւ գազգս օտար զմոզան ածեր
Աստեղբ քեզ երկըրպագել:

Էից յերկինս եւ ի յերկիր բաշխող բարեաց
Եւ ի մոզուցն ընծայս
այսօր ընդունիս, Տէր, խոնարհութեամբ:

Եւ մեք ընդ հովուացն հովանոցն օրհնեմք
ՁՏէրոյ հովուիչ եւ ընդ հրեշտակս
ծնընդեան բո երգեմք
Ըզգիառս ի բարձունս:

ԿԱՆՕՆ
ԱՄԵՆԱՄԱՔՐՈՅ ՅՐՈՒԹԵԱՆ ԵՐԱՆՈՒՅԻՈՅ
ԿՈՒՄԻՆ ՍԱՐԻԱՄԱՅ

Կարողաբար գորութեամբ,
Հայր հիմն արկեր իմաստութեամբ,
Հիմն ի ծնողայն արգանդի
Քոյ Միածնիդ տաճառի,
Սկզբնաւորեալ սքանչելիօր
Եւ կատարեալ գհրաշիւք:

Որ աւետեօք ի Կուսէ
Ծնեալն մարդ ի Հօրէ,
Չմայր բոյ թեզ նմանեալ
Այսօր ցուցեր յղացեալ
Յամլոց ծնողայ հրաշալի
Եւ աւետեօք հրեշտակի:

Սրբոյ Ոգոյն բնակարան,
Ոգեւոր նոր բոյ իտրան,
Ոգեւորօքն աւետեալ
Ոգւոյդ շնորհօք հիմնեցեալ
Չբնութիւնս ի նայ շինեցեր,
Չյարկն Դաւթի կանգնեցեր:

Տէր, որ բարձրեալն է յերկին,
Ինքն իսկ հիմունս էարկ նմին,
Դաւիթ հայր բոյ թեզ հրնչէ,
Չկոյս իւր դատերդ օրս երգէ*,
Ասէ. «Հիմունս նմին
Ի լեռն սուրբ է նորին»:

Այսօր եւ մեր տճակից,
Մարգարէից ճայնակից,
Ընդ նախահարան բերկրեալք,

Նդ Աննայի աշտն աւետեալք,
Ընդ հրեշտակայ թեզ երգեմք,
Ջաստուածածնօղղ յագգա երանեմք:

-----*-----

Նորոգութիւն մերոյ բնութեան,
Ծննդեան անիծից լուծման,
Սկիզբն եղև օր բոյ յղութեան,
Միայն կոյս, յետ ծննդեան:

Դասու գուարթնոցն աւետողաց
Եւ աւետեալ բոց ծնողաց
Աւետակցիմք օրհներգելով,
Չմայրդ Աստուծոյ մաղթելով:

Ի յիմնադրիլ բոյ յարգանդի,
Տաճար Բանի կենդանի,
Խնդրեա եւ մեզ, կոյս տիրուհի,
Չփրկեալ յղանալ գհնոգի:

Նախադրութեամբ բոյ սուրբ ծննդեան
Յօրըս աւետեաց յղութեան,
Աստուածածին մայր փրկութեան,
Հայցեա մեզ ճիր բաւութեան:

-----*-----

Այսօր ի հարցն ուխտի լոման
Աւետեացս օր յղութեան
Յովակիմայի եւ Աննայի
Չայնակցելով օրհնութեամբ
Չթեզ բարեբանեմք,
Աստուած հարցն մերոց:

Րամեալ ազգաց յԱբրահամէ
Օրհնութեան զաւակդ երկրի
Չաւետիս մօր բոյ Աննայի
Տալով սկսաւ զբանն ուխտի:

* Օրհներգէ:

Ջրեզ բարեբանեմբ.
Աստուած հարցն մերոց:

Քարոզութեան մարզարէլից
Հարցն յուսոյն յաւիտենից
Զուխտ աւետեացն զաւակի
Սկսեալ ամբոյն յարգանդի.
Ջրեզ բարեբանեմբ.
Աստուած հարցն մերոց:

Գ* ԸղՏէր օրհնեցէք.
Բարձր արարէք զնա յաւիտեան:

Ամենայն գործք աշխարհի.
Յայժմ աւետեալք ընդ Աննայի
Զբոլորից նորոգողին
Մօրն յղութիւն յիւրում ծնողին.
Բարձր արարէք զնա յաւիտեան:

ՅԻսրայէլէ հարբ ծերունիք
Յովակիմաւ կուսին նախնիք
Ընդ հրեշտակացն աւետողաց
Աւետընկալք մաքուր որդիք.
Բարձր արարէք զնա յաւիտեան:

Մեծ

Հրեշտակն ամուլ քոյ նախ զաւետիս
Բերեալ քեզ. Աստուածածին,
Զանճառ Բանին խորհուրդ նախահորդէր շաւիղ.
Զոր հրեշտակապետն էր բերնոց
Զմեծ քոյ զաւետիս կուսածնելոյ զԱստուած.
Առ Միածին Որդին հայցեա վասն մեր,
Աստուածածին միշտ կոչս:

Աննա օրհներգեր այսօր զկոչսդ ընկալեալ
Յարգանդ ազգիս նախամարց
Ընդ Եւայի հնչէր

Զյուծումն երկանց ծննդեան
Զտարթնոյն զաւետեալն իւր աւետէր
Նոցա քեւ զամօթոյն ջնջում.
Առ Միածին Որդին հայցեա վասն մեր,
Աստուածածին միշտ կոչս:

Յանապատի մաքրեալ
Յովակիմ հայր քո կոչս պահոց եւ ուխտից.
Սուրբ հրեշտակօք առնոյր պտուղ
Զմայրդ եւ զբարեաց աղբիւրդ
Գոչէր նախահարց եւ Ադամայ
Փրկիչ ծնելովն ի բէն
Քեւ զբան ուխտին ընուլ.
Առ Միածին Որդին հայցեա վասն մեր,
Աստուածածին միշտ կոչս:

Ող

Որ Հին կտակն ի տիպ կուսին
Նախկին ետուր յանապատին
Այսօր զտապտակն ոգեւոր,
Յոր ձեւացաւ Բանդ երկնաւոր.
Աւետելով յանապատի,
Ետուր պարգեւս մարդկան ազգի:

Յուցեր յերկինս բարձրութեան
Զմայր քոյ սանդուխս ազգի մարդկան
Զիւր աւետիս ամբոյն ծննդեան
Պատրաստեցեր նախաստիճան
Սուրբ աւետեաց քոյ անճառի
Եւ ծնընդեան կուսականի:

Էի Ոգոյ զընդունարան
Զմայր էակցին քոյ մարմնարան
Տալով լուծեր գտրոմական
Կանանց երկանց անէծք ծննդեան
Սկիզբն աւետիս ուրախական
Տալով օրհնչին յղութեան:

Գունդը հրեշտակաց յերկնից յերկիր տճակից
Ջրոյդ յղութեան աւետիս բերեն մարդկան ճայնակից,
Որ գուարթնոցն աւետեօք զԲանն Աստուած յղացար,
Ջոր ծնեալ բազմութեամբ երկնաւորաց զօրաց պաշտեցար,
Երկնայնոց Տիրուհի եւ մայր փրկութեան աշխարհի:

Բամեալ այսօր տեսողացն զքեզ մարգարէիցն գումարբ,
Արդարոց ոգիք եւ սրբոց նախահարցն պարբ
Գուշակեալ Բանին կատարմամբ զքեզ դրուատեն
Եւ լրմամբ յուսոյն ըզգաւակ աւետեաց օրհնեն,
Աննայի երգակից եւ Յովակիմայ եղեալք խնդակիցք:

Ի ծննդեան երկանց անիծից ծննդեամբ բով փրկեալ
Եւ ի նզովից մահուն մահուամբ Որդւոյ բոյ գնեալ,
Միածնի բոյ եկեղեցի, զոր յղութեան բոյ տճէ
Եւ Աստուածածին գաւետեալն այսօր դաւանի,
Անհանգիստ վասն մեր Միածնի Որդւոյդ մաղթօղ լեր:

ԿԱՆՕՆ

ԸՆԾԱՅԵՑՄԱՆ ԱՍՏՈՒԾԱԾՆԻՆ

յորժամ տարան զնա ծնօղքն ի տաճարն Երից ամաց,
որ կոչի Սրբութիւն սրբոց

Օհ ԳԿ

Գովենք զՀայրդ գթութեան
Յօրս ընդ մարդկան հաճութեան
Չգաւակն օրհնութեան
Առեր ընծայ հաշտութեան
Չմիածին անբիծ յարգանդէ
Ընտրեալ զքեզ հարսն ի յերկրէ:

Բամեալ զբնութիւնս, Միածին,
Չքակեալս նոր շինեցեր,
Չյարկն Դաւթի կանգնելով,

Ջկոյան խորան քեզ ոգւով⁴⁹,
Որուն տաճարն, որ այսօր բերաւ,
Տիպ նախ կանգնեցաւ:

Ի բոյդ բըղխեալ վըտակաց
Ի գնացս ջուրց օրինաց
Ի տան բուն ոչ թառամիլ⁵⁰
Չծառոն կենաց տրնկեցեր
Չպտուղըն տալ ի ժամու
Ոգիդ աղբիւր շնորհատու:

Գաւագանն ի խորանն
Եղեալ պըտղաբերեցաւ
Ի կուսիդ⁵¹ նուիրունն այսօր
Ազդեալ տըպացոյց կանխաւ,
Որ ի տաճարին դնելով
Անտի ծննդեամբ⁵² ծաղկեցաւ:

Որ ըզբոյդ ունէր զօրինակ
Սափորն մանանային
Ի սրբութիւն ներքին
Դնելով մեծ բահանային
Չի սրբութիւն սրբութեանց այսօր
Բնակիլ բոյ ցուցեալ:

Բամեալ մահու փարատիչ⁵³,
Բուրվառն զքեզ գուշակիչ
Եւ տապանակ կտակին
Որ տիպ էր ի քեզ Բանին
Ի դաբիրային գոլով⁵⁴,
Չմատչիլ բո⁵⁵ ազդելով:


Ի տաճարին նըւիրեալ⁵⁶
Բանին տաճար կենդանի,
Ըզհաշտութիւն բաւութեան
Հեղցես ի մեզ գթութեամբ.

49. Ե ձեռագրում այս բառը համդիպում է հոգի ձեռով:
50. Ե թառամեալ:
51. Ե կուսի:

52. Լ մննդեամբ:
53. Լ փարատիչ:
54. Լ քողով:

55. Լ բոյ:
56. Լ նուիրեալ:

Հայցեա ընդ քեզ նուիրիլ
Ի յերկնից տաճար ապրիլ:




Էդ Հայր լուսոյ Միածնիդ Որդւոյ
Ձառ ի քէն ջրոյդ կենայ
Չաղբիւրն ի տանէ քո⁵⁷
Բղիսի այսօր տնօրինեցեր
Եւ զվիճակեալ աշխարհս արբուցեր
Հայցմամբ նորա զծարաւիս արբոյ⁵⁸:

Երկնից⁵⁹ արարիչ եւ մօր անդրանիկ,
Չսուրբ⁶⁰ բնութեան զանդրանիկ,
Առեալ այսօր ըզհոգւոց մահն դարձուցեր
Յորոյ խորհուրդ զանդրանիկան առեր
Եւ զԻսրայէլն հին փրկեցեր:

Բաբուն լուսոյ, Ոգիդ հանճարոյ,
Որ զմայր ուսուցչին աշխարհի
Ի ստեանցն կրթել այսօր ընկալար
Ի վարժանոց տաճար քոյ սնուցեալ
Եւ եօթնեակ շնորհիւ լըցուցեալ:

Գանձ աշխարհի եւ ունող մարգարտին
Միոյ այսօր գանձեալ Արքային
Երկնից յըշտեմարան տաճարի
Անտի լըցեր զաշխարհ բարութեամբ
Չկարօտ բնութիւն յագնցուցեալ
Եւ զմեծատունս ունայնս արձակեալ:

Սուրբ ի բնութեանս ախտից մաքրեցար
Ձի սրբոյն ընծայ սրբելով այսօր
Ի սրբոց սուրբն ընակեցար,
Որով եւ սուրբ առ ի քէն ծնեալ,
Ձոր Հայր սրբեաց սրբիչ առաքեաց:



Այսօր երկինս եւ երկիր տճակցին Աննայի
Ջրեզ արարչին պըտղաբերելով պարծին
Բոյոր ստեղծուածք բարձրացեալ
Անբիծ մայր ստեղծչին յինքեանց մատուցեալ
Եւ զքո⁶¹ յախտէ հին մարդոյն հնապան,
Քո մաքրութեամբդ այսօր նորացան:

ՅԱդամայ պարտքըն վերանայ,
Ըզքեզ զաւակ անարատ
այսօր բեղմնաւորելով⁶² ջընջի
Ամօթն յեւայէ եւ ծնողաց նորին
յանցանաց պատիժըն,
Շնորհի զքեզ հաճութեամբ Բանն ընդունելով
Եւ բան զերկնից հրաբունս ընտրելով:

Սերմանողաց արտասուօք մարգարէից հեծութիւն
Քրտանցն հանգչի մշակդ
անգոյ բնութեանս ցնծացեալ
Ձօր այդ այսօր ի սուն
տանուտեառն բերեն բարձեալ
Եւ նահապետք օրհնութեան շնորհին
Ձքեզ նախախայծ բերեն տնկողին:

Երկին նորոգ, ամոռ Աստուծոյ,
Որ զարեգակն⁶³ անճատ ծագեցար,
Անպ, որ այսօր յանծայր ծովն մերձեալ
Եւ մեզ զկենաց անձրենն ընկալար,
Ձոր ի բնութեանս երկիր ցողեցեր,
Որում հայցեա զմեզ միշտ առոգել:

Յգ ՂԶ

Որ զխոստումն առ հարաըն մեր,
Հայր երկնաւոր, կատարեցեր,
Յորդոց⁶⁴ նոցին զկոյան ընտրելով
Յորոց տաճարն ընդունելով
Չնա կենդանի տաճար քոյ:

57. Լ քոյ: 59. Լ երկնի:
58. Լ սրբո: 60. Լ, սուրբ:

61. Լ գորք: 63. Լ գառեկակն:
62. Լ բեղմնաւորելով: 64. Լ յորդոց:

Միաձնի Որդւոյդ սրբեցիւր,
Աղաչանօք սորա⁶⁵ կեցո՛ղմեզ,
Տէր Աստուած հարցն մերոց:

Որ սիրելոյն Աբրահամու,
Չոր քո Քրիստոս յառաջ ցուցիւր,
Ի խորանի առ նա գորով,
Սառայի անդ աւետելով,
Որպէս եւ մայրն քո այսօր
Որդոց նորա կանգնել խորան ընտրելով
Աղաչանօք սորա կեցո՛ղմեզ,
Տէր Աստուած հարցն մերոց:

Որ ի կուսին խորհուրդ Ոգիդ
Տաճարն հին ամպով լցիւր
Այսօր, գոր թեթեւ ամպ կոչեցիւր
Ի տաճարին բնակեցուցիւր,
Յոր իսկապէս ընդ փառակցիդ եկաւորեցիւր,
Աղաչանօք սորա կեցո՛ղմեզ,
Տէր Աստուած հարցն մերոց:

Գ* ՉՏէր օրհնեցէք բարձր արարէք
Սրօքէական ճայնիւ ի տաճար սրբութեան իւրոյ:

Որ զխորհուրդ եւ զփառս նախնոյ տաճարին
Նոր խորանին բերեալ աւանդեաց
Յոր հաւիտեան բնակեաց,
ՉՏէր օրհնեցէք, բարձր արարէք:

Որ զթշնամութիւն բակեաց
Չմիջնորմն ցանկին Իսրայէլեան տաճարի հեթանոսաց
Դժբխոյն թագեաց,
ՉՏէր օրհնեցէք, բարձր արարէք:

Չոր փառաբանեն այսօր
Քահանայք նորոյս եւ ծերունիք հնոյն
Օրհներգեցին զմայրն եւ զտաճար Բանին,
ՉՏէր օրհնեցէք, բարձր արարէք:

Սե՛ծ

Աստուածածին բարձրագոյն բերողէից,
Բանին հանգիստ եւ բնակարան
Այսօր հրաւիրեալ անապական
Ի հանգիստ նոր հարսնութեան
Յոր կուսութեամբ անյո՛ծ
Կրնքեցիւր գլուռն կուսութեան
Քոյրից հնչմամբ
Այսօր զքեզ մեծացուցանեմք:

Նոր թագուհւոյդ արարածք
Երանութեամբ այսօր հրնչեն երգ հարսնական,
Որ ի յերկրեղէն ընութենէ մարդկան
Հարան արարչին երկնից
Ընտրեցար ի վեր բան զբան,
Քոյրից հնչմամբ,
Այսօր զքեզ մեծացուցանեմք:

Հոյլք հրեղինաց յառաջեալք ուրախութեամբ
Չնոր տիրուհիդ իւրեանց զրուատէին տաճարէն
Կտակօքն եւ օրինակօք քեզ ընդառաջ ելեալ
Երկրպագութեամբ զգծխոյդ ընդունէր,
Քոյրից հնչմամբ
Այսօր զքեզ մեծացուցանեմք:

Քոյք հարսնածուր՝ Գաբրիէլ ընդ Չաբարիայ
Հանդերձ զընդիւ տեսանողաց,
Նըւագ աւետեաց հարցն փողէին,
Որք գումարեալք Ոգով Տեառն եւ փեսային
Չքեզ դուստր առթէին,
Քոյրից հնչմամբ
Այսօր զքեզ մեծացուցանեմք:

Ող

Որ գհին տաճարն, որ ի յերկրի
Նոր դրախտ այսօր յարդարեցիւր
Ղկոյսն կենաց ծառ տնկելով,

65. Լ. սօրս:

Որ ծաղկեցաւ յիսրայէլէ
եւ գտիեգերս ելից կենացրդ պըտղով.
Աղաչանօք սորա ողորմեա՛ մեզ. Աստուած՝:

Որ ի միջոյ թերօքէիցն ի բաւարանն երեւէիր
Զբաւիչն մարդկան կոյս
օրինակեալ ի թերօքէից անդ պաշտպանեալ
Յորմէ ծնեալ մարմնով Բանդ Հօր մեզ երեւեցար.
Աղաչանօք սորա ողորմեա՛ մեզ. Աստուած՝:

Որ զպատարագն Յովակիմայ զՄարիամ,
զոր ողջակէզ նոր սրբեցեր
Աստուածայնով կայծակամբ
Ոգիդ ի տաճարին կատարեցեր
Եւ ի յերկնից ընդունարանդ վերընկալեցեր.
Աղաչանօք սորա ողորմեա՛ մեզ. Աստուած՝:

Զոր Յովակիմ գրեզ ընծայեաց կոյս Տիրամայր.
Օրհներգութեամբ եւ Աննայ
մատոյց նուէր գոհութեամբ
Բոլոր ազինք երանութեամբ բարեբանեմք այսօր
երկրպագութեամբ անհանգիստ.
Բարեխօսեա վասն անձանց մերոց:

-----*-----

Յնծայ այսօր երկին հրեշտակօք.
Պայծառացեալ սուրբ լուսաւորօք
Քէրոքէից նորոյ բանայ զգրունըս իւր
Մտանել ի սրբութիւնսըն վերին կարգին:

Յնծայ այսօր արեւ եւ լուսին
Օրինակեալք քեզ. Աստուածածին,
Լուսինդ յարեւ մերձեալ,
Այսօր զլոյսն ընդունիլ
Եւ առ ի Հօրէ զՈրդին մեզ ծագել:

Յնծայ այսօր տաճարն Սողձձի
Եւ գերագոյն երկնից յարդարի

Զի բարձրելոյն վերացեալ աթոռ ի նմա արկանի
Կոյսդ որպէս նախկին Եսայի՝:

Յնծայ այսօր խորանն վկայութեան
Զվրկայեալ յարկդ Աստուծոյ առեալ ի յինքեան
Հանգչին օրինակքըն
զճշմարտութիւն մերձ կոչելով
Զծերացեալ պաշտձն յաւարտ ածելով:

Յնծայն) այսօր ծերքն օրինականք
Եւ երիտասարդ նորոյս տձենն խնդութեամբ
Կուսանք յապտերօք Գիոյսդ
ի կուսական քերեն հարսնարան,
Զոր եւ բահանայք երգովք ընկալան:

Յնծայ Ոգով նոր եկեղեցի
Եւ յղանայ այսօր զՈրդիս յարգանդի
Զի մարդ եւ հարսն եկն յառագաստի,
Որ ընդ քեզ փողէ զփառս իւր փեսայի:

ԱԿ

Ով գերահրաշ ծաղիկ բուրեալ եղեմայ,
Հօտ անմահութեան ծննդոց Եւայի,
Յորմէ սփռեցան մահ ընդ տիեզերս.
Օրհնութեամբ գրեզ մեծացուցանեմք:

Դու լուծիչ երկանց, բարձող անիծից,
Ծագող արեւու լուսոյն ճշմարտի,
Յորմէ հերքեալ խաւարն առաջին.
Օրհնութեամբ գրեզ մեծացուցանեմք:

Ըգրեզ ունիմք բարեխօս, Կո՛յս անհարսնացեալ,
Մայր անարատ Էմանուէլի,
Տաճար Բանին Հօր երկնաւորի.
Օրհնութեամբ գրեզ մեծացուցանեմք:

* Եսայի:

ՆՈՒԱԳ ԱՌ ՍՐԲԱԶՆՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆԱՅՍՐԲՈՅ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵԱՆ ՏԵԱՈՆ

Ձայն քան ուրեմն սրբազնութիւն,
յարգեսցուք անկեալք յերեսի եւ հինըն այն
օրինագրութիւն գտեղի տայէ նորոյս ծիսի լցցէ
հաւատ գպակասութիւն ըզգայութեանցն այսմ մասի. ծնօղին
եւ ծընիցելոյ թոյ եւ հըրճումն գերյարգոյ փրկութիւն.
պատիւ. գօրութիւն լիցի եւ օրհնաբանութիւն ելօղի.
համագոյգ գովութիւն տապի.
ամէն:

ՇԱՐԱԿԱՆՔ
Ի ՏՕՆԻ ԱՄԵՆԱՍՐԲՈՅ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԱՐԵԱՆ
ՔՐԻՍՏՈՍԻ ՏԵԱՈՆ ՄԵՐՈՅ
Օհ ԴԿ

Գերահրաշ խորհրդոյ
Անգին արեան եւ մարմնոյ.
Ձոր ի փըրկել գհողածինս
Արբայն անեղ կուսածին.
Վերերգեսցուք միաբան
Քաղցրաճայնեալք գերգա օրհնութեան:

Հրեշտակ մեծի խորհրդոյ
Մանուկ ծնաւ. մեզ տուաւ.
Եւ յաշխարհի շրջեցեալ,
Ջբանս կենաց սերմանեալ,
Ջկեանս իւր յետոյ վերջացոյց
Ջարմանալի կարգաւ գործոց:

Ընթրիս բազմի նդ աշակերտս,
Սահմանելով գհրաշակերտս
Օրինադիրն ազանց,
Լընու գօրէնս գստուերաց,

Ջինքն բաշխէ կերակուր
Երկոտասան ընտրեալ դասուն:

Ջբանն, որ եղեւ իսկ մարմին
Բանիւ գհացն ի մարմին
Եւ գգինին յիւր արին
Ճշմարտյապէս փոխարկէ
Ջսիրտ հպատակ մեր ի սմին,
Քաջ հաստատէ հաւատ նորին:

Արդ այսքան մեծ խորհրդոյս
Յերեսս անկեալք երկիր պագցուք
Եւ հին աւանդն Մովսիսի
Ջիջցէ նորոյս օրինի:
Վերալցցուք հաւատով
Ջոր ոչ ծանիմք գգայարանօք:

Ջանծին ծնօղն եւ գծնեալն
Եկայք փառօք օրհնեսցուք
Եւ զբրխեցեալն ի նոցունց
ՋԱստուած Հոգին գովեսցուք,
Որպէս միում երրակին
Ջպատիւ տացուք յաւետագին:

Յց ՂԶ

Որ գհրաշալի սրբազնութիւն
Տըպագրեցեր առ Մելքիսեղէկ,
Սուրբ բահանայք ըստ կարգի
Նորա գհաց եւ գգինին գոյափոխեալ
Ի քեզ ընծայելով Հօր սուրբ նուէր,
Օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Որ գերագոյն քան գիսահակ
Մատուցանիս ամբիժ պատարագ,
Քանգի կամաւ գառն անարատ
Սեղան կագմիս հանապազորդ
Առ ի բառնալ գմեղս աշխարհի.
Օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Որ ընդ ձեռք թէպէտ ծածկիս
Ի գգալութեանց մերոց, Քրիստոս,
Բայց հաւատով ընդ Սահակայ|
Ջայնդ է, ասեմք, ձայն Յակոբայ,
Եւ ձեռքդ են ձեռք Եսաւայ,
Տէր եւ Աստուած դաւանելով,
Օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց:

Գ* ԸգՔրիստոս օրհնեցէք,
Բարձր արարէք զնա յաւիտեան:

Որ ըզդարնութիւն բրտնաջամք
Հացին իւր կենարար մարմնոյ,
Ճաշակմամբն բաղդրացունէ գթոյ,
Օրհնեցէ՛ք, բարձր արարէք զնա յաւիտեան:

Որ գմարմնաւորան ի հնումն
Հեղհեղաւ մեռոյց նոյն
Կրկնահոս կողին աղբերօք,
Չարդիս կենագործէ գՔրիստոս
Օրհնեցէ՛ք, բարձր արարէք զնա յաւիտեան:

Մեծ

Ուրա՛խ լեր, Մարիա՛մ, կեանք մահացելոց,
Որ գօրհնեալ պտուղդ Յիսուս
Քեզ ետուր անմահութեան,
Չքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ուրա՛խ լեր, Կո՛յս անբիծ, երկիր շնորհալի,
Որ գհացն կենաց պարգեւեցեր
Հաստատիչ սրտից՝ մարդկան,
Չքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ուրա՛խ լեր, Սրբուհի՛, վայելուչ այգի,
Որ գգինին կուսաբողբոջ բխեցեր
Ուրախարար հոգոց,
Չքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ող

Որ սրբազան իրախճանութիւն,
Յորում Քրիստոս Տէր մեր ճաշակի,
Եւ չարչարանք իւր յիշատակին
Շնորհիւ մաքուր միտք ինանին
Եւ հանդերձեալ փառացն գրաւ մեզ պարգեւի,
Աղաչեմք, շնորհեա մեզ, Տէր,
Ճաշակել զբաղդրութիւն բո
Եւ ողորմեա:

Ով յիշատակ ըզսքանչելեաց,
